

# ԱՐԱՐԱՏ

1907 ԱՄՍԱԳԻՐ ՌՅԾԶ

Տարի Խ. ՄԱՐՏ Համար Գ.

Վ.ԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ՄԱՐՏ 1907 Թ.

---


ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

1. Փոխանակուած հեռագիրներ . . . . 203
2. Քաղուածք ի կոնդակաց Վեհ. Հայրապետի . . 204
3. Քաղուածք Սինոդի օրագրութիւններից . . 206

ԿՐՕՆԱԿԱՆ

4. Ապաշխարութեան քարոզը. Գ. վ. Յովսէփեան . 211
5. Մեծամասնութեան վճիռը. փոխադր. Ե. վ. . . 216

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

6. Պրաւոսլաւ եկեղեցի Ռուսաց. . . . . 219
7. Աղեքսանդրիայի եկեղեցի . . . . . 223
8. Երուսաղէմի եկեղեցի . . . . . 224
9. Կաթոլիկ եկեղեցի . . . . . . 224

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

10. Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի բարեկարգութեան մի ծրագիր. Երուանդ վ. . . . . 226

ՄԱՅՐ ԱԹՈՌ

11. † Մկրտիչ Պալեան . . . . . . 239
12. Գերեզմաններ Մ. Պալեան . . . . . 241

ՏԱՃԿԱՀԱՅՔ 244

13. Արարատ ամսագրի խմբագրութեան. Ս. Արքեպիս. Պ. 248
14. Պատուիրակութիւն Սուքիաս եպիսկոպոսի ի Սանկտ Պետերբուրգ Հայոց դպրոցների մասին (1885 ամի) . 249

ԳՐԱԿԱՆ

15. Քրիստոսի հետքով. Թարգ. Մամբրէ վարդապետ . 258

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

16. Մաղաքիա Պատրիարք. Ագապի. Երուանդ վ. . . 268
17. Սուկաւ կամ Սուկաւէտի առիթով. Յուսիկ արքեպս. 269
18. Պատասխան. Բարգ. եպիսկ. Գէորգեան . . 272

ԳԻՏԱԿԱՆ

19. Դաւիթ փիլիսոփայ. Գ. վ. Յովսէփեան . . 274

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

20. Համառօտ տեղեկութիւններ Ամերիկայի տարրական դպրոցների մասին Թարգմ. ռուս. Երեմեա վ. Ս. . 290
21. Հաշիւ արդեանց և ծախուց Հոգաբարձ. Որբոց և Այրեաց Հոգևորականաց Հայոց Ատրպատականայ 1906 ամի 295

# ԱՐԱՐԱՏ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1907—ՌՅԾԶ

| | | |
|---|---|---|
| Տարի Խ. | ՄԱՐՏ | Համար Գ. |

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

## ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

---

(Վեհափառ Հայրապետի Պարսից Շահին ուղղած հեռագիրը Նովրուզի առթիւ)

*Թ Է Հ Ր Ա Ն*

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՄԷՀԷՄՄԷՏ-ԱԼԻ ՇԱՀՆՇԱՀԻՆ ԻՐԱՆԻ.

*Զերջանիկ Ամանորն Նէվրուզի շնորհաւորեմ Ձերումդ Մեծութեան, և մաղթեմ յԱստուծոյ երկար և երջանիկ կեանս վասն Ձերոյդ Վեհափառութեան և Գահաժառանգին և խաղաղութիւն վասն կայսրութեան Իրանի։*

ՄԿՐՏԻՉ կաթուղիկոս ամենայն Հայոց

---

(Շահի պատասխանը)

*Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն*

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

*Շատ շնորհակալ եմ Ձեր շնորհաւորութիւնների համար Նոր տարու առթիւ։*

ՄԷՀԷՄՄԷՏ-ԱԼԻ

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ· ՀԱՅՐԱՊԵՏԻ

### Ա.

*Հայրապետական տնօրինութիւնք·*

Կոնդակ *յանուն Սինոդի, որով պատուիրեցաւ կարգադրել զռոճկադրամս Գարեգին և Իսահակ վարդապետաց։ Համար* 307.

— *Յանուն Խաչիկ վարդապետի, որով հաստատի վանահայր ս. Զուարթնոց եկեղեցւոյ։ Հ.* 313.

— *Յանուն առաջնորդին հայոց որ յԱմերիկայ, Տ. Յովսէփ արքեպիսկոպոսի, որով պատուիրի տալ առնել ընտրութիւն նորոյ առաջնորդի յաղագս հրաժարելոյ նորին ի պաշտամանէն։ Հ.* 318.

— *Յանուն Երևանայ Կոնսիստորիային յաղագս տալոյ Տ. Մեսրովբ արքեպիսկոպոսի* 100 *ր. փոխարինաբար։ Հ.* 320.

— *Յանուն Առաջնորդին Վրաստանի, որով պատուիրի տալ Ստեփան և Զաքարիա վարդապետաց զ*100*-ական րուբլիս։ Հ.* 326.

— *Յանուն պատրիարքին Կ. Պոլսոյ, որով պատուիրի առաքել ի Մ. Աթոռ զգանձանակեալ դրամս յանուն Ս. Էջմիածնի։ Հ.* 327.

— *Յանուն հոգ. կառավարութեան Աղեքսանդրապոլոյ, որով պատուիրի տալ զկէս մասն արդեանց մոմավաճառութեան ս. Կիւրակէ ուխտատեղւոյն՝ դպրոցին Մեծ Ղարաքիլիսէ գեղջ։ Հ.* 328.

— Յանուն Տ. Սարգիս եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ձեռնադրել ի քահանայ զԳաբրիէլ Թոփալեան Փոքր Սալայ գեղջ։ Հ. 329.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով առաջադրի արձակել զփաստաբան Գարեգին Ենգիբարեան ի պաշտամանէ։ Հ. 350.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրի կարգել զԱնտոն վարդ. օգնական վանահօրն Երնջակայ, նշանակելով նմա հանդերձագին զ30 ր. յամսին ի 1-էն յունվ. տարւոյս։ Հ. 370.

Բ.

*Հայրապետական գոհունակութիւնք եւ օրհնութիւնք.*

Կոնդակ յանուն Գանձակեցի Աննայի Բալուղեանց վասն նուիրաբերելոյ գաւազան արծաթալուխ ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն, որ ի Գանձակ։ Հ. 349.

Գ.

*Հայրապետական պարգեւք.*

Կոնդակ յանուն Ներսէս վարդապետի Խապայեան առաջնորդին Վանայ, որով շնորհի նմա իրաւունք կրելոյ լանջախաչ։ Հ. 368.

---

## Մակագրութիւնք

Ի խնդրագրի Մկրտիչ սարկաւագի. «Յանձնեմք վարչութեան ճեմարանին, հրահանգելով փութացուցանել զորոշումն ուսուցչական ժողովոյն այնորիկ խնդրոյ»։ Հ. 298.

Ի յայտարարութեան փոխ. Հին-Նախիջեւանի Տ. Լեւոն վարդապետի, «Պատուիրեմք կառուցանել կրպակս և տալ

*տեղեկութիւն Սինոդին և Կոնսիստորիային զկնի աւարտման գործոյն»։* Հ. 337.

*Ի խնդրագրի ատենադպրի Կոնսիստորիային Երևանայ. «Նշանակեմք զ*1100 *րուբլի ռոճիկ՝ վասն պաշտաման ատենադպրութեան և թարգմանի ցկազմումն նորոյ շտատի»։* Հ. 323.

*Ի խնդրագրի Կարապետի Աբրահամեան. «Համարելով իրականապէս զպսակն լուծեալ՝ թոյլատրեմք մտանել խնդրատուին ի նոր ամուսնութիւն»։* Հ. 356.

*Յանուն Կոնսիստորիային Երևանայ, որով պատուիրեցաւ տալ Թադէոս վարդապետի Տ. Նիկողայոսեան յամսեան* 12 *րուբլիս թոշակ ի վիճակային արդեանցն ի* 1-*էն յունուարի այսր ամի։* Հ. 384.

*Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով ծանուցաւ յանձնել զդրամս ծախուց վեհարանիս՝ Վահանայ Խրիմեան։* Հ. 385.

## ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

*Ի* 16-*ն փետրուարի ըստ կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի Սինոդն հրամայեաց կառավարչի կալուածոց Մայր Աթոռոյ, որ ի Տփխիս, հատուցանել պ. Սեդրաքայ Մանդինեանի զ*500 *ր. կենսաթոշակ նորին յարդեանց կալուածոց Մ. Աթոռոյ։ Համար* 128.

*Ի նմին թուի Սինոդն մերժեաց զմիջնորդութիւն Կոնսիստորիային Երևանայ վասն ձեռնադրելոյ զՑարութիւն Յովհաննիսեան ի քահանայ Իլլի–Ղարաքիլիսա գեղջ ի պատճառս թերուս գոլոյ ընծայացուին։* Հ. 132.

*Ի նմին թուի Սինոդն հրամայեաց առաջադրել փոխ թեմակալին Երևանայ յորդոր կարդալ ժողովրդեան Մաղրա*

գեղջ շատանալ միով քահանայիւ, զոր ընտրիցեն ինքեանք կամ փոխ Թեմակալն։ Հ. 134.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց արձակել զՄաշթոց վարդապետն Փափազեանց ամենևին ի հոգևոր կոչմանէ։ Հ. 135.

Ի նմին թուի Սինոդն աւելորդ և անկանոն համարելով զյաւելումն ռոճկաց տնտեսի ճեմարանի՝ Մեսրոպայ Աբովեան և քարտուղարի՝ Կարապետի Քոչարեան, պատուիրէ վարչութեան ճեմարանի հետզհետէ բառնալ ի ռոճկաց նոցին զյաւելուածն՝ յուշ ածելով նմին, զի չէ մարթ ինքնագլուխ առնել զյաւելումն ի նախահաշուի Ճեմարանին։ Հ. 138.

Ի 19-ն փետրուարի Սինոդն հրամայեաց կարճել զգործ մեղադրանաց Գրիգոր աւագ քահանայի որ յԵրևան՝ զՎահան քահանայէ Մամիկոնեան, համարելով զայն ամբաստանութիւն։ Հ. 143.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց Կոնսիստորիային Երևանայ ընդունել զՍարգիսն Աստուածատրեանց ի հոգևոր կոչումն ձեռնադրելով զնա քահանայ Գեօղաքլու գեղջ։ Հ. 145.

Ի 21-ն փետրուարի Սինոդն հրամայեաց Կոնսիստորիային Երևանայ ձեռնադրել զԹադէոս Տ. Յարութիւնեանց քահանայ Բաշ-Գառնի գեղջ։ Հ. 146.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց վանահօրն Սևանայ վանուց պահանջել ի Վահանայ վարդապետէ զ185 ր. 52 կոպ. զիւրացուցեալս յարդեանց վանուցն Ամարասայ։ Հ. 150.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց առաքել առ Ամենապատիւ Տ. Պատրիարքն զ620 ր. և 57$^{1}/_{2}$ կոպ. զտոկոսիս գումարի գաղթականացն Ալաշկերտի և կարճել զգործս։ Հ. 162.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց առաքել առ Ամենապատիւ Տ. Պատրիարքն Երուսաղէմի զ769 ր. և 49 կ. զգանձանակագրամս։ Թ. 163.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց առաքել ի կեդրոնական յանձնաժողովն Տփխեաց յօգուտ արկածելոցն Ղարաբաղի զ9 ր. զնպաստ ի վանական կառավարութենէ։ Հ. 164.

Ի նմին թուի Սինոդն եդ հայցել զբարեհաճ տնօրինութիւն Վեհափառ Հայրապետին Հայոց առ միջնորդութիւն՝ փոխադրել զԿոնսիստորիայն Թեմին Բեսարաբիոյ ի Նոր Նախիջևան, եթէ արժան համարիցի։ Հ. 165.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց Կոնսիստորիային Երևանայ ձեռնադրել զՎաղարշակն Տ. Ղազարեանց քահանայ Իմանշալու գեղջ։ Հ. 167.

Ի 23-ն փետրուարի Սինոդն հաստատեաց զնախահաշիւ Մ. Աթոռոյ վասն 1907 ամի, ըստ տախտակի, զոր առաջի արար յանձնաժողովն՝

Մ ո ւ տ ք

| | | | |
|---|---|---|---|
| Արդիւնք | կալուածոց | 90,000 | րուբլի։ |
| » | Գիւղից | | |
| » | Դրամագլխոց | | |
| » | Տպարանի | 19,000 | » |
| » | Ագարակի | 23,000 | » |
| | Ընդ. ամենայն | 132,000 | » |

Ե լ ք

| | | | |
|---|---|---|---|
| Վասն | Ճեմարանի | 41,000 | րուբլի։ |
| » | Տպարանի | 13,399 | » |
| » | Վեհարանի | 14,000 | » |
| » | Վանակ. կառավ. | 10,770 | » |
| » | Ագարակի | 20,415 | » |
| » | Կալծ. հարկաց | 3,800 | » |
| » | Ռոճ. փաստաբանի | 2,400 | » |

» Ելեք. կայարանի 3,000 »
» Ռոճիկ միաբանից 23,000 »
Ընդ. ամենայն 131,784 »

Միայն զապարանական ծախս որոշեաց զ12 հազար րուբլիս. փոխանակ 13,399 րուբլեաց։

Ի նմին թուի Սինոդն կարի օգտակար վարկուցեալ ունել ի պաշտաման գործակալի Ախալքալաքայ զառանձին վարդապետ, հրամայեաց առնել բացառութիւն խնդրոյ Կոնսիստորիային Վրաստանի, իսկ վասն բողոքանաց զՈւխտանէս վարդապետէ՝ յանձնել զգործ նորին ի Դատաստանական մասն Սինոդին։ Հ. 176.

Ի 28-ն փետր. Սինոդն հրամայեաց ծանուցանել Հաշտարար միջնորդին 2-դ մասին Երեւանայ՝ թէ ըստ գործող օրինաց հայ քահանայք և սարկաւագք ազատ են յամենայն պետական հարկաց և բնական տրոց, վասն հողոց, որ տուեալ լինի նոցա ի բաժին ըստ չնչից. իսկ վասն գնեալ կամ ի վարձու կալեալ հողոց վճարեն հարկս նման այլոց հողատիրաց. երկրորդ՝ միայն որդիք և թոռունք քահանայից և սարկաւագաց ազատ են ի վերոյ գրեալ հարկաց։ Հ. 193.

---

## Ամուսնալուծութիւնք

Ի 19-ն փետրուարի Սինոդն՝ ըստ եզրակացութեան Կոնսիստորիային Ղարաբաղի՝ լուծեալ համարէ զպսակ անյայտացեալ Տամիրայ Ասրիեանց ընդ Նուբարի Հաշումեանց, թոյլ տալով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 142.

Ի 21-ն փետր. Սինոդն լուծեալ համարի զպսակ Տանշէի Ոսկանեանց ընդ Սոփիայի և զկնի արկանելոյ զՍոփիայն ընդ երկամեայ եկեղեցական ապաշխարութեամբ թոյլ տայ մտանել յօրինաւոր ամուսնութիւն ընդ կենակցի

իւրում. իսկ զՃանչէն զրկել յիրաւանց նորոյ ամուսնութեան։ Հ. 147.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց լուծեալ համարել զպսակ Եսայեայ Արէշեանց ընդ Աննայի Գէորգեան, թոյլ տալով կնոջն միայն մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 148.

Ի 26-ն փետր. Սինոդն հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորիային՝ լուծանել զպսակ Յարութիւնի Փիլիպոսեան Վարդանեան ընդ կնոջն Նադեժդայի Վասիլիեւնայ, միայն կնոջն տալով իրաւունս մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 177.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց թողուլ առանց հետեւանաց զխնդիր Միքայէլի Խաչիեանց. որ վասն լուծանելոյ զպսակ նորա ընդ կնոջն Մարգարտի։ Հ. 176.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց թողուլ առանց հետեւանաց զխնդիր Աւետիքի Նազարբեկեան լուծանել զպսակ ընդ կնոջ իւրում Մարեմայ Վարդանեանց։ 179.

Ի 28-ն փետր. Սինոդն հրամայեաց լուծեալ համարել զպսակ Գրիգորի Բուլբուլեանց ընդ կնոջն Աստղկան, զրկելով զերկոսին եւս յիրաւանց մտանել յամուսնութիւն ընդ այլս։ 188.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց լուծեալ համարել զպսակ Բարսղի Ռոստոմեանց ընդ կնոջ իւրում Եփեմեա Առաքելեան, տալով միայն կնոջն իրաւունս մտանել յամուսնութիւն ընդ այլում։ Հ. 190.

Ի նմին թուի Սինոդն լուծեալ համարի զպսակն Նաւասարդայ Գէորգեանց ընդ կնոջն Աննայի, տալով առնն և եթ իրաւունս մտանել յամուսնութիւն ընդ այլում։ Հ. 191.

# ԿՐՕՆԱԿԱՆ

## ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՐՈԶԸ

### Ա.

Մարդկութեան հոգեւոր բոլոր նշանաւոր առաջնորդներն ու մարգարէները ապաշխարութեան քարոզով են սկսել իրենց գործը։ Ապաշխարութեան են ենթարկուել նախ իրենք անապատի և առանձնութեան մէջ, խորասուզուել են իրենց հոգու խորին խորանները, սրբութիւն սրբոցը, գտել են իրենց Աստծուն և Նորա պարգեւած ճշմարտութիւնը և ապա հոգւով վերածնուած և մկրտուած հանդէս եկել պատմութեան մէջ ներշնչուած սրբազան առաքելութիւնը կատարելու, միւսներին ևս հաղորդակից անելով իրենց գտած անմահական և երկնային գանձին։ Այսպէս էր և մեր կեանքի առաջնորդը՝ Յիսուս Քրիստոս։ Անապատի մէջ ըստ աւետարանական աւանդութեան քառասուն օր և գիշեր ծոմապահութեամբ, զգաստութեամբ և աղօթքով յաղթել էր չարին, ոչնչացրել նորա զօրութիւնը և իջել Յորդանան ներքին մկրտութեան հետ լուացուելու նաև սրբազան գետի ջրերի մէջ։ Այս ամենից յետոյ միայն Նա հանդէս է գալիս սկսելու իւր փրկչական գործունէութիւնն ու աւետարանական քարոզութիւնը. և առաջին խօսքը, որ դուրս է գալիս Նորա սուրբ և օրհնութեամբ լի բերանից, ապաշխարութեան խօսքն էր։

Քրիստոնէական բոլոր հին և նոր եկեղեցիները Փրկչի կենդանի օրինակին և քարոզութեան հետեւելով՝ ապաշխարութեան գաղափարը հոգեւոր փրկութեան էական պայման են ընդունել և որոշ օրեր նշանակել այդ նպատակի համար։ Արեւելեան հին եկեղեցիների հետ՝ Հայոց

եկեղեցին եւ քառասնորդական պահոց օրերը յատկացրել է ապաշխարութեան։ Եկեղեցին իւր սրտաշարժ հոգեւոր երգերով, ընթերցուածներով, արարողութիւններով հօտին ապաշխարութեան է հրաւիրում, ի հարկէ ոչ այն մտքով, որ տարուայ մնացած ժամանակը ազատ համարենք մեզ ամեն տեսակ մեղքեր և անիրաւութիւններ գործելու այն յուսով, թէ ապաշխարութեան օրերին կյիշենք և թողութիւն կստանանք։ Քրիստոնէի կեանքը մշտական ապաշխարութիւն պիտի լինի իսկապէս։ Ապաշխարութիւնը որպէս հոգեկան, ներքին գործողութիւն բղխում է զղջացողի սրտից, ուրեմն և որոշ ժամանակ չի կարելի նշանակել և պահանջել, որ ապաշխարես։ Ժամանակ կարելի է նշանակել արտաքին գործողութեան համար, բայց ոչ ներքին աշխարհի։ Բայց և այնպէս մի խորիմաստ կարգադրութիւն է մեր հայրերի կողմից, որ մեծի պահոց օրերը ապաշխարութեան են նուիրել։ Առօրեայ կեանքը իւր բազմաբովանդակ պահանջներն ու զբաղմունքներն ունի, և եթէ կեանքի ծանր հոգսերի բեռների տակ պարտազանց ենք գտնուել կամ հնարաւորութիւն չենք ունեցել մեր ներքին աշխարհով զբաղուելու, ապաշխարութեան յատուկ օրերը պէտք է յիշեցնեն մեզ մեր զանցառութիւնները։ Ապաշխարութիւնը հոգեւոր հաշուետուութիւն է մեր խղճի և Աստուծոյ առաջ։ Հաշուեպահութեան կանոններից մէկն է տարեվերջին մատեանները քննութեան և ստուգութեան ենթարկել. այդպիսի ստուգութեան պիտի ենթարկենք այս ապաշխարութեան օրերում ոչ միայն մեր արտաքին գործողութիւնները, այլ և նրանց ներքին ծածուկ չարժառիթներն ու պատճառները։ Պէտք է չտկենք մեր բարոյական թերութիւններն ու սխալները, եթէ չենք կամենում պատասխանատուութեան ենթարկուել այն արդար դատաւորի առաջ, որ քննել կարող է մեր սրտի և հոգու խորին խորհուրդներն ու գաղտնիքները։

## Բ.

Մարդկային բնութիւնն առ հասարակ հակուած է դէպի աշխարհայինն ու մարմնաւորը, և այս հակումն է, որ մեր քայլերը դէպի մեղքն ու կորուստն է ուղղում։ Մենք շատ հեշտութեամբ ենթարկւում ենք ժամանակաւոր հաճոյքների և բաւականութիւնների հրապոյրներին, երբ մանաւանդ ներքին, ընդդիմադիր բարոյական զօրութիւնը անհաստատ է մեր մէջ։ Ինչպէս շրջմոլիկ հուրը փայլում է ճահիճների մէջ, այնպէս էլ մարմնական հրապոյրներն ու աշխարհային ցանկութիւնները գրաւում են մեզ դէպի բարոյական կորուստը, որի ճանապարհը լայն է և ազատ։ Մէկին հրապուրում է զգայական վայելքը, միւսին երկրաւոր բարիքն ու ստացուածքը, երրորդին փառքն ու պատիւը, և եթէ թոյլ ենք տալիս, որ այս զգացումները կատարելապէս տիրապետող դառնան մեր հոգևոր աշխարհում, մեղքի շղթան արդէն պատրաստ է մեզ համար։ Նիւթական ամենայն հիւանդութիւն պէտք է խեղդել իր սաղմի մէջ. նոյն կանոնը պէտք է գործադրենք նաև բարոյական հիւանդութիւնների դէմ. անփութութեան առաջին քայլերն իրենց հետևանքներն ու պտուղներն են տալիս և վարակիչ հիւանդութեան սաղմերը բազմանալով, հոգևոր մահ պատճառում։

Ապաշխարութիւնը հոգևոր բժշկութեան առաջին պայմանն է։ Որովհետև ապաշխարել նշանակում է յետ դառնալ մարմնական հակումների թելադրած ճանապարհից և հոգևոր, փրկարար մի նոր ճանապարհ ընտրել, որ դէպի Աստուած և Նորա սրբութեան խորանն է տանում։ Ապաշխարել նշանակում է սրբել մեր մեղաւոր միտքը, հոգին, նորոգուել ներքուստ։ Ապաշխարութեան նպատակն է կեանքի ճահիճներից հանել մարդկանց, և նոր արարած շինել։ Անընդհատ աշխատանք և տքնութիւն է հարկաւոր այդ ներքին փոփոխութիւնը կամ վերածնութիւնը յառաջ բերելու համար։ Ապաշխարութիւն և վերածնութիւն հոմանիշ գաղափարներ են աւետարանների մէջ, երկուսն էլ

միակ պայմանը նոր կեանքի և թագաւորութեան քաղաքացիներ դառնալու համար։ Պէտք է խորասուզուենք մեր ներքին աշխարհի մէջ, վերլուծութեան ենթարկենք նորա շարժումներն ու ելևէջները և անողոք պատերազմ հրատարակենք մեր եսական, սիրոյ զգացմունքից զուրկ հակումների դէմ, որովհետև չարիքի բոլոր արմատը այդտեղ է, շատ խորը նստած մեր հոգու մէջ։ Զօրեղ է թշնամին և ներքին, ուստի և նորա դէմ պիտի զինենք մեր բարոյական բոլոր ուժերը։ Արտաքին միջոցներն անզօր են նորան արմատախիլ անելու։ Հին ճգնաւորներն ու անապատականները փախչում էին աշխարհից նորա ապականութիւններից ու մոլորութիւններից ազատ լինելու համար, ծեծում էին իրենց մարմինը, քաղցած և ծարաւ էին մնում մարմինը ճնշելու և դորա հետ նորա մեղաւոր հակումները խեղդելու նպատակով, բայց ի զուր։ Պատերազմը ներքին է և միայն ներքին զէնքերով կարող ենք մաքառել հակառակորդի դէմ։ Այդ ներքին զէնքը ապաշխարութիւնն է, զղջման և դարձի զգացումը, ինքնաքննադատութեան և ներքին հաշուետուութեան մի անընդհատ մարզութիւն, որ հետզհետէ զօրացնում է իշխելու մեր վատ հակումների վերայ, զսպելու և սանձահարելու մեր բարոյական թերութիւնների հակամէտ բնութիւնը։

Գ.

Ներքին պայքարման ժամանակ յաճախ զգում ենք մեր կամքի թուլութիւնը, մենք կցանկայինք, որ անընդունակ լինէինք ստութեան, կեղծիքի, որ միայն բարին, վսեմն ու ազնիւը թագաւորէր մեր սրտում, մենք կ՚կամենայինք, որ եսականն ու շահասիրականը, ընչաքաղցութիւնը, զգայական և աշխարհային վայելքի սէրը բնաւ տեղ չունենար մեր սրտում, որ մենք ուրիշ կերպ ստեղծուած լինէինք, առանց մեղաւոր հակումների, բայց մեր հոգու յատկութիւնների աւելի լուրջ և ուշադիր քննութիւնը համոզում է ընդհակառակն, որ լաւագոյնն այդ է։ Դժուարութեամբ և աշխատանքով ձեռք բերուած բարիքն

է գնահատելի, վտանգաւոր պատերազմից իւր քաջութեամբ յաղթական դուրս եկած զինուորն է գովութեան արժանի։ Հրեշտակային մաքրութիւնն իսկ գին չունի, եթէ փորձութեան, տագնապների, տանջանքի բովից անցած չէ։ Նաւապետի հմտութիւնն ու ճարտարութիւնը փոթորկի ժամանակ է երեւում։

Բարեբաղդաբար մարդս բոլորովին անզօր չէ մեղքի և վատ հակումների զօրութեան առաջ։ Մեր մէջ կայ նոյնպէս մի այլ հակադիր զօրութիւն՝ բարւոյ զգացում և խղճի ձայն։ Մենք զգում ենք. թէ որն է բարոյապէս գեղեցիկն ու ճշմարիտը, մեր խղճի ձայնը անկաշառ և անողոք կերպով ազդարարում է մեր սխալներն ու յանցանքները. պէտք է միայն նորան լսել և հնազանդել սովորենք։

Բարւոյ զգացումն ու խղճի ձայնը դատապարտութեան են ենթարկում և նողկանք ներշնչում դէպի մեր եսականութիւնը և նորա հետ կապուած բոլոր մեղաւոր գործողութիւնները, մենք զգում ենք մեր տկարութիւնը և ապաւէն ենք որոնում բարոյապէս աւելի բարձր հեղինակութիւնների մէջ։ Այս զգացումն էր, որ մեղաւոր կնոջը Յիսուսի ոտքերը ձգեց, որ կեղեքող Զակքէոսին բարեգործ դարձրեց, ուրիշ խօսքով նրանց ապաշխարող դարձրեց։ Մենք ևս նորան պիտի դիմենք, մեր բարի նաւապետին, կեանքի ալեկոծութեան ժամանակ, ինչպէս ծովում խեղդուող Պետրոսը։

Գ. վ. Յովսէփեան

# ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՎՃԻՌԸ

*«Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն և ասէին. բա՛րձ՛ զդա և արձակեա՛ մեզ զԲարաբբա. որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին և սպանութեան մտեալ ի բանտ»:*

Ղուկ. ԻԳ. 18—19.

---

*Ճշմարտութիւնն ու իրաւունքը բաղխեցին Կայիափա քահանայապետի դուռը և նա ասաց. «Այսօր չեմ կարող ձեզ լսել, որովհետև գործը վերաբերում է մեր եկեղեցական կարգ ու կանոնի կենսական խնդիրներից մէկին: Եթէ այս Յիսուսը յաղթէ, այն ժամանակ եկած կլինի մեր բոլոր օրէնքների ու զոհաբերութիւնների վերջը. այդ պատճառով պէտք է խնդիրը գործնական կերպով վճռել. Նա պիտի մեռնի, որպէս զի ամբողջ ժողովուրդը չփչանայ»: Եւ երբ ժողովրդի այս ազատարարը այսպէս խօսեց, ճշմարտութիւնն ու իրաւունքը գնացին Պիղատոսի մօտ՝ տեսնելու, թէ նա ինչ վճիռ կտայ: Նա ասաց «Ի՞նչ է ճշմարտութիւնը». և «Ես անմեղ եմ այս արդարի արիւնից»: Բայց այնուամենայնիւ Պիղատոսն էլ յանձնեց նրան խաչուելու, որովհետև նա էլ այդ համարեց ամենագործնականը:*

*Ով որ ապացուցանել է կամենում, թէ հոգևոր և աշխարհիկ իշխանները շատ անգամ վճիռ են տալիս խիստ սովորական և մարդկային տեսակէտներով առաջնորդուելով, այդպիսին թող օրինակ բերէ միայն Կայիափային և Պիղատոսին: Յաճախ դիւրին է անպէտքացած լինում, և այդ պատճառով մարդիկ արմատին են դիմում. հարցնում են ամբոխի, մեծամասնութեան կարծիքը: Ցոյս ունին այնտեղ մի առողջ զգացումն գտնել ճշմարտութեան ու արդարութեան համար: Անհատները կարող են սխալուել, ասում են մարդիկ այդպիսի դէպ-*

քերում, բայց մասսան իր մութ ձգտումների մէջ դիտակից է ուղիղ ճանապարհին։ Բազմութեան համար ոգևորուելով ապա ասում են՝ ժողովրդի ձայնը Աստուծոյ ձայնն է, «Ձայն բազմաց ձայն Աստուծոյ»։

Ահա մի տեսէք Երուսաղէմի բազմութիւնը. Նա փոփոխական է, ինչպէս մարտ ամսի եղանակը։ Կիւրակէ օրը Նոքա թռչկոտում էին Գալիլեացի մարգարէի շուրջը, ծառերից ճիւղեր էին կտրատում, վերարկուներն էին փռում ճանապարհի վրայ, ովսաննա էին կանչում և արբած էին Մեսիայի գալստեամբ։ Այնուհետև մի երկու օր բազմութիւնը չէր երևում. Յիսուսը մաքրեց տաճարը խարազանը ձեռին և եօթնապատիկ վայ կարդաց փարիսեցիների ու դպիրների գլխին. Նա խօսեց սուրբ քաղաքի կործանման մասին և առհասարակ այնպէս դառն ու սուր էին Նրա խօսքերը խաբեբայութեան, ստութեան ու կեղծաւորութեան դէմ կռիւ մղելիս, որ շատ անդորր հոգիների համար անտանելի դարձաւ Նա։ Մէկը միւսի յետևից գաղտնի կերպով ամաչել սկսեցին, որ մի այդպիսի մարդու ովսաննա են կանչել. և հազիւ մի քանի օր անցած, բազմութիւնն արդէն նրան հակառակ էր։ Ուրբաթ օրը ամբողջ խուժանը բղաւում էր «Կորչի՛ Նազովրեցին»։

Չէ կարելի ասել, թէ այդ ամբոխը կազմուած էր առանձնապէս վատ մարդկանցից. Նոքա Երուսաղէմի գործաւորներն ու բանուորներն էին՝ դերձակ, բրուտ, կտաւգործող, առևտրական ու աղքատ։ Բոլորն էլ փափուկ մոմի նման. գալիս է քամին արևելքից, նրանց նաւը շարժւում է դէպի արևմուտք և ընդհակառակը։ Այսօր փչում են քահանայապետներն ու դպիրները և նրանց փչածի համեմատ գոչում է մասսան «Խաչէ՛լ, խաչէ՛լ»։

Այդպիսի մեծամասնութիւնը նման է ալեկոծուած ծովի, որ իր զոհն է պահանջում. մէկը պիտի ընկնի, իսկ միւսը դառնայ օրուայ հերոսը։ Կեցցէներով է ընդունում ազատ արձակուած յեղափոխական Բարաբբասը։ Թէև նրա ձեռներն արիւնոտ են, բայց այժմ մոռացուած է ամեն ինչ. այժմ բոլորն էլ խնդրում են այն մարդու

*համար, որից շատ քիչ ժամանակ առաջ վախենում էին ինչպէս ոչխարը գայլից։ Կեցցէ Բարաբբասը, կորչի Յիսուսը. կեցցէ մարդասպանը, մեռնի Փրկիչը. ապրի սպանողը, ի խաչ անմեղը. ապրի արիւնոտ մարդը, կորչի հաշտարարը։ Ահա այն Ուրբաթ օրուայ բազմութիւնը։*

*Իրաւունք չունի Առաքեալը՝ ոչ մի տարբերութիւն չկայ, բոլորն էլ մեղաւորներ են։*

*Թէ այսօր աւելի լաւ կլինէր։ Եթէ Յիսուսը գար, ինչպէս կընդունէին նրան հոգեւոր ատեանները, իրաւաբանները ու դատաւորները, կուսակցութիւնները ու բազմութիւնը։—Ի՞նչպէս կընդունէինք մենք նրան՝ Հզօրին։*

Փոխադրեց Ֆ. Նաումանից՝ Ե. վ.

# ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

## ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԱՑ

### Գրիգոր քահանայ Պետրով

Ամբողջ Ռուսաստանին ծանօթ հոգեւորական հրապարակախօս և քարոզիչ է: Ծնուել է 1867 թ. գիւղացի ծնողներից: Կրթութիւնը ստացել է սկզբում Պետերբուրգի հոգեւոր դպրանոցում և ապա նոյն քաղաքի հոգեւոր ճեմարանում: 1893 Միքայէլեան զինուորական դպրոցում կրօնուսոյց էր և նոյն դպրոցի եկեղեցու քահանան:

Դեռ դպրոցում նա զբաղուում էր գրականութեամբ, բայց միայն 1898-ից սկսուեցաւ նորա հռչակը իբր հեղինակի, երբ լոյս տեսաւ նորա «Աւետարանը իբր կեանքի հիմք» աշխատութիւնը, որ մօտ քսան անգամ տպագրուեցաւ: Ապա հրատարակեց մի շարք գրքեր կրօնաբարոյական բովանդակութեամբ, որոնցից «Քրիստոսի հետքով» հայերէն թարգմանել է Մամբրէ վարդապետը և Արարատում լոյս է տեսնում: Այլ հեղինակութիւններից նշանաւորներն են. «Դպրոցը և կեանքը», «Դէպի լոյս», «Աստուծոյ գործաւորները» ևլն. դրանցից շատերը մի քանի անգամ տպագրուել են: Հ. Պետրովը եռանդով աշխատակցել է պարբերական թերթերին. օրինակ «Русское слово», «Другъ Трезвости» ևլն:

Հ. Պետրովի երկերը բոլորովին ուրոյն տեղ են բռնում ռուս հոգեւորական հեղինակութիւնների շարքում: Քրիստոնէական կրօնի արտաքին ծիսական կողմի դէմ ամէն տեղ դնում է բարոյական բովանդակութիւնը: Նորա գաղափարները շատ կէտերում միանում են Լև Տոլստոյի բարոյական քարոզների հետ:

Մի քանի յայտնի հոգեւորականների շարքում հ. Պետրովը ամենից պատուաւոր տեղն է բռնում. և նորա ազդեցութիւնը շատ մեծ է եղել ռուս հոգեւորականութեան վերակենդանութեան հոսանքը զօրեղացնելու գործում:

Այս հովուի բանաւոր քարոզները պակաս հռչակ չեն ստացել քան իւր գրաւոր վաստակները: Ամենայն անգամ, երբ նա քարոզել է եկեղեցու, ժողովրդեան ամէն դասակարգից մեծ

բազմութիւն է դիմել եկեղեցի և հոգեպէս մխիթարուած գնացել տուն:

Սակայն Հ. Պետրովի հեղինակութիւնները և քարոզները բորբոքեցին նախանձի և թշնամութեան հուրը. Հ. Գրիգորը ստացաւ «անվստահելիութեան վկայական» և 1903-ին զրկուեց իր ուսուցչական և քարոզչական պաշտօնից: Յունուարի 1-ից սկսեց ի լոյս ընծայել «Աստուծոյ ճշմարտութիւնը» անունով մի լրագիր, որ չափաւոր ազատամիտ ուղղութիւն ունէր, բայց դարձեալ հոգևոր բիւրոկրատիայի յարձակման կէտ նպատակին դարձաւ և ենթարկուեցաւ կատաղի հալածանքի. և 1906-ին Մոսկուայի ոստիկանութիւնը խափանեց այդ թերթը և սկսուեցաւ Հ. Պետրովի յայտնի մեղադրական գործը:

1906-ին Նոյեմբերի մէջ մի պաշտօնական հալածանք սկսուեցաւ Հ. Պետրովի դէմ, որի սկիզբը դրին Մոսկուայի 3 փոխանորդները և դրանց միացան «ռուս մարդկանց միութեան» և «սև հարիւրակի» անդամներից ոմանք: Սուտ ստորագրուած կամ անստորագիր նամակներով սինոդի ուշքը դարձնում են Գ. Ք. Պետրովի վնասակար գործունէութեան վերայ: Գլխաւորապէս մեղադրում են նրան հրապարակախօսական վատ ուղղութեան համար, որ իբր թէ անիշխանութիւն է քարոզում. այլ և աշխարհիկ շորերով է շրջում, իր թերթի անունը «Божья провда» դնելով սրբապղծութիւն է գործում, ս. գրքին կամայական մեկնութիւններ է տալիս ևլն. ևլն:

Սինոդը գործի քննութիւնը յանձնում է Կոնսիստորիային, որը և 1907-ին Յունուարի կէսերին դատապարտում է Հ. Պետրովին՝ իբր «շփոթութիւն և գայթակղութիւն» սերմանող իր հրապարակական գործունէութեամբ և «խաղաղ անիշխանութիւն»՝ իր քարոզներով՝ և գրաւոր բացատրութիւն է պահանջում այդ բոլորի մասին. այլ և միացնում գրաքննական ժողովի կարծիքը, որ նոյնպէս գտնում է նորա հրապարակախօսութեան մէջ համայնական և անիշխանական կետեր:

Հ. Պետրովը մատնացոյց է լինում այն բանի վերայ, որ փաստերը չեն ստուգուած և տալիս է իր բացատրութիւնները. բայց Կոնսիստորիան առանց ուշադրութիւն դարձնելու առաջնի խօսքերին վճռում է աքսորել Զերեմինեցկի վանքը երեք ամսով ապաշխարութեան:

Պետրովը բողոքում է այդ վճռի դէմ. և Յունուար 22-ին արդէն Սինոդում յատուկ յանձնաժողով է կազմուում դարձեալ առանց Պետրովին հարց ու փորձ անելու և երկար վիճաբանութիւնից յետոյ մի ձայնի առաւելութեամբ արդար է ճանաչում քահանային:

Այն ժամանակ Նախագահը յայտնում է, որ ինքը երկու ձայն ունի և ընդդէմ Պետրովին է տալիս և ուրեմն ստացւում է ձայների հաւասարութիւն: Գործը յետաձգւում է Յունուարի 30-ին և որոշւում է հրաւիրել և մի անդամ, որ ձայնից հաւասարութիւն չստացուի:

Որոշեալ ժամանակին գործը վերսկսւում է և հաստատւում է կոնսիստորիայի վճիռը: Փետրուարի 20-ին Հ. Պետրովը ճանապարհ ընկաւ իւր աքսորավայրը Չերեմինեցկի վանքը և 3 ամիս պիտի մնայ:

Մայրաքաղաքի շատ թերթեր ի թիւս որոց և «Церков. Вѣстникъ» բարձրաձայն բողոքում են անուանելով այս վճիռը «ինկուիզիցիական», «անխիղճ, ապօրինի», վնասակար: Իսկ «Церковный Вѣстникъ» ցաւով նկատում այս գործի մէջ եկեղեցու կենսունակութեան նուազումը, որ չուզեց Պետրովի պէս պաշտօնեայի տաղանդը գործադրել «ի փառս Ս. եկեղեցւոյ», այլ նոյն իսկ մի քանի կենդանի կապերը, ի դէմս Հ. Միխայէլի և Գրիգորի աշխատում է կտրել, «վերցնել այն կամուրջը, որ ձգուած է եկեղեցու և կեանքի մէջ». և բաժանումը աւելի խորը լինելու համար լռեցնում է կենդանի քարոզը:

Իրենց բողոքի ձայնը բարձրացրել են և Մոսկուայի հոգևորականները. մատնացոյց են լինում Պետրովի անմեղութեան վերայ: Նոցա չի զարմացնում այն իրողութիւնը, որ եպիսկոպոս Նիկոնը և Վ. Գրինգմուտը միացել են այդ խնդրում: Յետոյ յիշեցնում են, որ դեռ 1903 գարնանը հարց էր բարձրացրել Գ. քահանայ Պետրովի գործունէութեան մասին և եպիսկոպոս Պարթէնի նախագահութեամբ և ժամանակի հոգևորականութեան մասնակցութեամբ քննուեցաւ այդ խնդիրը և «ամբողջ ժողովը մեծ գովեստով և համակրութեամբ վերաբերուեցաւ Հ. Պետրովի գործունէութեանը» թէև եղան այս ու այն անկիւններում դատապարտողներ:

Հ. Պետրովի աքսորմամբ գործը չի վերջացել. Սինոդում առանձին խորհրդածութեան նիւթ էր դառել այն հանգամանքը, որ Հ. Պետրովը ընտրուել է Պետական Դումայի անդամ: Սինոդի նախագահը, դատախազը և անդամներից շատերը այն կարծիքն յայտնեցին թէ այդ դէպքում Պետրովին կմնայ կամ քահանայական կոչումից զրկուել կամ հոգևոր ատեանի վճռին ենթարկուել. մնալով իւր աքսորավայրում մինչև պատժի ժամանակը լրանայ: Հ. Պետրովը ընտրել է վերջինը և առանձին նամակով տեղեկացրել է Դումայի նախագահին այդ մասին:

## Ս. Պետերբուրգի Ռուսաց հոգեւոր ճեմարանի 98-րդ տարեդարձը.

Փետրուարի 17-ին լրացաւ Ռ. Հ. ճեմարանի 98 ամեակը։ Անցեալ տարուայ պէս այս տարի էլ հանդէս չկատարուեցաւ։ Ճեմարանական կազմը հաւաքուեցաւ ճեմ. եկեղեցին մաղթանքի։ Նախորդ երեկոյին հսկումն արաւ ճեմ. տեսուչ Սերգէյ եպիսկոպոսը և հոգեհանգիստ՝ բոլոր ճեմ. ննջեցեալների համար՝ հիմնադիրների, բարեգործների, ուսուցչապետների, ծառայողների և ուսանողների։ Պատարագից յետոյ մաղթանք կատարուեցաւ թագաւորող տան, Ս. Սինոդի, ճեմարանի վարչութեան, դասատուների և ուսանողների համար։

Ներկայ տարուայ շնորհուած «ժամանակաւոր» ինքնավարութիւնը բաւական կենդանացրել է ճեմարանի կեանքը։

Տարեկան հաշուից երեւում է, որ ճեմարանը ունեցել է 52 ճեմ. պատուաւոր անդամներ։

Անցեալ տարի հովուական աստուածաբանական ամբիոնը բաժանուել է մանկավարժականից և յանձնուել երկու ուսուցչապետների, և ուսուցչապետների բաւականին տեղափոխութիւններ են կատարուել, որոնց մէջ առանձին տեղ է բռնում եկեղ. իրաւաբանութեան ուսուցչապետի Միխայէլ վարդապետի աքսորը։

Ճեմարանական կազմը 45 անձերից է բաղկացած՝ վերատեսուչ, տեսուչ, երկու օգնականներ (տեսչի) 12 պսակաւոր ուսուցչապետներ, 1 դոցենտ, 5 ի. դ. դոցենտներ, 3 լեկտորներ և 9 այլ պաշտօնաւոր անձինք։

Տարուայ սկզբին ճեմ. բոլոր ուսանողների թիւը եղել է 238 և կողմնակի ունկնդիրներ 13 անձն։ Տարուայ վերջը աւարտել են 50 ուսանող։ Տարուայ սկզբին նոր ընդունուել են 47 հոգի ա. լսարան և 2 հատ էլ միւսը. ընդամէնը 265 իսկական և 30 կողմ. ունկնդիրներ։ Տարուայ ընթացքում ճեմարանը արժանացրել է 58 հոգու գիտնական աստուածաբանական աստիճանի, 5 անձինք ներկայացրել են մագիստրոսական շարադրութիւն, 2 անձինք ստացել են մրցական պարգև. 18 ճեմ. շարադրութիւններ արժանացել են դրամական պարգևի և հրատարակութեան (ճեմարանի հաշուով)։

---

Ս. Սինոդը 1906 դեկտեմբերին հրատարակել է մի հրաման, որով իմաց է տալիս թէ բոլոր հոգևոր ճեմարաններում հրատարակուած պարբերական թերթերը ենթարկւում են նախնական գրաքննութեան տեղական ճեմարանական վերատեսչի

*կողմից: Այնպէս որ 1905-ի Նոյեմբերի 24-ին այն բարձրագոյն հրամանը՝ որով վերացւում էր նախնական գրաքննութիւնը՝ նոր ընդհանուր օրէնք է, և չի բովանդակում իւր մէջ հոգևոր ճեմարանների մասնաւոր առանձին օրէնքը:*

---

Բուլղարիայի էքզարխը *Յովսէփ եպիսկոպոս մի յուշագրով դիմում է Թիւրք կառավարութեան՝ հրաւիրելով վերջինիս ուշադրութիւնը Մակեդոնիայի բուլղարների այն ճնշումների վերայ, որ կրում են յոյների և սերբերի կողմից: Վերջինները իրենց անձնարձակութեամբ ջնջում են ոչ միայն բուլղար եկեղեցին, այլ նոյն իսկ ժողովուրդը, որ չկարողանալով տանել այս հաւատակիցների կատաղի հալածանքը, գաղթում են բազմութեամբ: Էկզարքը մատնացոյց է լինում մի շարք յուշագրերի վերայ, ուր ինչպէս և այս վերջինի մէջ ցոյց է տուել մի կողմից վերոյիշեալ հալածանքի բազմութեան դէպքեր և միւս կողմից կատարեալ քաջալերութիւն տեղական կառավարչական անձանց կողմից: Յիշում է թէ քանի գիւղում եկեղեցիները փակել են տուել կամ խլել ուժով, գերեզմանոցները խլել. իսկ գանգատները մնացել են միշտ անհետևանք: Կառավարութիւնը առանց ձգձգման իրաւունք է տալիս եկեղեցի կամ դպրոց հիմնելու յոյն կամ սերբ ժողովրդին, իսկ երբ բուլղարն է դիմում, կամ մերժում կամ այնքան ձգձգում, որ վերջը յուսահատուած թող են տալիս. ոչ միայն նոր դպրոցներ բանալու իրաւունք չեն տալիս, այլ եղածներն էլ ամենաչնչին պատճառով փակում են: Նոյն իսկ Սուլթանի իրադէները անկատար են մնում: Յոյն և սերբ հոգևորականները մասնակցութիւն ունին տեղական վարչական գործերում, իսկ բուլղար հոգևորականը զուրկ է այդ իրաւունքից:*

*Սրբազան էկզարքը ի՞նչ կարող է սպասել մի մահմեդական և քրիստոնէական եկեղեցուն թշնամի կառավարութիւնից, եթէ հաւատակից և քրիստոնեայ համարուած յոյն և սերբ ժողովուրդն ու հոգևորականները այդ օրինակ վարւում են: Ակամայ մարդ յիշում է յոյն ուսանողների պատրաստակամութիւնը մտնել սուլթանի զօրքերի շարքը, երբ բորբոքուել էր Մակեդոնիայի ապստամբութիւնը: Յովսէփ եպիսկոպոսի յուշագիրը մի արատ է, մի սև կնիք քրիստոնեայ համարուած ոչ քրիստոնեայ հալածիչների ճակատին:*

---

## Աղեխսանդրիայի եկեղեցի

*Փոթիոս պատրիարքը իւր սովորութեան համաձայն շրջել է Եգիպտոսի բոլոր քաղաքներն ու գիւղերը, ուր իւր հօտն է*

գտնուում, Գահիրէ, Սուէզ, Պորտ-Սուդան, Խարտում և այլն։ Ամէն տեղ եղած եկեղեցական խնդիրները անձամբ քննել, մի քանի տեղերում նոր եկեղեցիների հիմքը դրել, առաջնորդներ և յաջորդներ կարգել և մխիթարելով իր հօտը վերադարձել Աղեքսանդրիա։ Այս շրջագայութիւնը մանաւանդ շահեկան է եղել և այն կողմից, որ մարդիկ է գտել Երուսաղէմի միաբանութեան մեծացումար նուէրներ տուող։

---

## Երուսաղէմի եկեղեցի

Երուսաղէմի պատրիարքութիւնը յատուկ ուշադրութիւն է դարձրել դպրոցական գործի վերայ, որով ուզում է մրցել կաթոլիկ և պրոտեստանտ եկեղեցու հետ։ Նա իր միջոցներով պահում է 78 դպրոցներ 59 գիւղերում և քաղաքներում։ Տղայոց դպրոց պահում է 59 հատ, 109 ուսուցիչներով և 2928 աշակերտներով և օրիորդաց 19 հատ 44 դասատուներով և 1365 աշակերտուհիներով։ Այս դպրոցների մեծագոյն մասը տարրական են։ Միայն ս. Խաչի աստուածաբանական դպրոցը միջնակարգ է, և մի քահանայացուների դպրոց Երուսաղէմում և մի գործնական Յոպպէում չորս դասեան (պրոգիմնազիա)։

Դպրոցների տարեկան ծախսն է 80,000 ր. որ ամբողջովին պատրիարքութիւնն է հոգում իր եկամուտներից։ Ուսանելի լեզուներն են արաբերէն, յունարէն, թիւրքերէն, ֆրանսերէն և անգլիերէն, վերջին երկու լեզուները մեծ հրապոյր են ներկայացնում տեղացիների համար կաթոլիկաց և պրոտեստանտների դպրոցները յաճախելու, ուստի ստիպուած են եղել իրենք էլ մտցնել։

Ի՞նչ են անում մեր Երուսաղէմի միաբանները այս մրցման մէջ, չլինի՞ թէ այնտեղ էլ մարդորսները առատ հունձ են անում, ինչպէս մեր աչքի տակ հէնց Էջմիածնում հայերէն սովորելու անուան տակ ապրելով վերսկսել է պրոտեստանտական առաքելութիւնը մի ինչ որ բժիշկ և ինչպէս լսում ենք արդէն հետևողների շրջան կազմել։

---

## ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հռոմի պապը՝ Պիոս Ժ-րդ պրուսական արևելքի վերաբերմամբ փոխել է եկեղեցական դիւանագիտութիւնը, որին հետևում էր Լևոն ԺԳ-րդ պապը։ Վերջինս արևելքը Հռոմի աթոռին

ընթարկելու յուսով՝ համբերատարութեան, զիջողութեան սկզբունքով էր առաջնորդւում թէ Ասորիքում, թէ Պաղեստինում, թէ յունաց եկեղեցու հետ և թէ սլաւեանների: Պիոս Ժ-րդ համոզուած լինելով, որ արևելքը և արևմուտքը ընդ միշտ բաժանուած են՝ յատկապէս սլաւոնների հետ, Աւստրիայում, խիստ է վարւում և նոյն իսկ իր նախորդի շնորհած իրաւունքները՝ սլաւոնական լեզւով պատարագ մատուցանել, եկեղեցական մի քանի հարցերում ինքնագլուխ վարուել՝ ջնջել է, չնայած Խորուատ եպիսկոպոսների եռանդուն բողոքին: Պապը ամէն մի անհատական հակառակութիւն կամ բողոք համարում է ընդդէմ դարաւոր աւանդութեանց և սպառնում է այդպիսուն մերժել եկեղեցու ծոցից: Իսկ արևելքում ահագին միսիոնների բանակ նոյն հոգով գործում են՝ ջնջելով ամէն ազգային տեղական առանձնայատկութիւն՝ լեզուն էլ հետը և տեղը դնելով Հռոմին անպայման հնազանդելու սկզբունքը:

---

### Ֆրանսիական եպիսկոպոսների յայտարարութիւնը.

Եկեղեցական հրապարակային պաշտամունքը վերականգնելու համար՝ Ֆրանսիայի եպիսկոպոսները հետևեալ յայտարարութիւնն են հրատարակել: Ամէն քահանայ առանձին պայման պիտի կապի (գրաւոր) իշխանութեան ներկայացուցչի հետ (պրեֆեկտի կամ մէրի), որ եկեղեցին յանձնուում է իրեն և ծուխին. և գրաւոր ապահովութիւն՝ որ բոլորովին ձեռնպահ պիտի մնայ իշխանութիւնը եկեղեցական պաշտամանց գործերում, ոչ մի կերպ չպիտի միջամտի ծխի հոգևոր գործերին առանց ծխի կողմից հրաւէրի: Այս կարգը պիտի ընդունուի ամբողջ Ֆրանսիայում և պայմանը զօրութիւն կստանայ եպիսկոպոսի ստորագրելուց յետոյ: Ծուխի քահանան եթէ մեռնի կամ տեղափոխուի, պայմանը իւր զօրութեամբ անցնում է յաջորդին: Այս պայմանները եթէ ընդունի կառավարութիւնը, եպիսկոպոսներն էլ կզիջեն և կընդունեն 1907 յունուար 2-ի օրէնքը. եթէ ոչ՝ նորա կդադարեցնեն ամբողջ Ֆրանսիայում աստուածպաշտութիւնը: Եպիսկոպոսների կարծիքով վերջին հանգամանքը մեծ յուզում կյառաջացնէ բնակչութեան մէջ և քիչ հոգս չի պատճառիլ կառավարութեան: Բրիան այս յայտարարութեան մէջ առաջին անգամ համաձայնութեան նշան տեսնելով՝ շրջաբերականով դիմել է կառավարութեան ներկայացուցիչներին, բացատրելով եկեղեցիները հոգևորականներին յանձնելու կարգը, բայց մերժում է միայն պայմանի տալը և եպիսկոպոսների ստորագրութիւնը:

# ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

## ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԻ ԾՐԱԳԻՐ

*Մի քանի տարի է, որ Մայր Աթոռի ճեմարանը գտնւում է անկարգ վիճակի մէջ։ Թէ Կարապետ Կոստանեանի տեսչութեան վերջին տարին, թէ անցեալ և թէ ներկայ ուսումնական տարեշրջանում անպակաս են եղել աշակերտութեան դժգոհութիւններն ու «գործադուլները», խնդիրներն ու «պահանջագրերը». երեք տարի է, որ ուսումը ուշ սկսւում է և շատ վաղ վերջանում. և այդ բոլորի մէջ ամենից աւելի տուժում է հաստատութիւնն ու աշակերտութիւնը։ Ուսումնական յառաջադիմութեան համար ամենից առաջ հարկաւոր է որոշ հաստատուն կարգ ու կանոն. այդ կարգ ու կանոնը այժմ բոլորովին չքացել է. հինը խախտուած է իբրև անպէտք և ժամանակի պահանջներին անհամապատասխան, իսկ նորը դնելու համար առ այժմ կարծես ոչ ոք չի մտածում, այն ինչ միանգամ ընդ միշտ պարզ պէտք է լինի մեզ համար, որ անհնարին է որև է դպրոց բարեկարգ վիճակի մէջ դնել, առանց որոշ հաստատուն ու պարտադիր կանոնների։*

*Ոչ ոք չէ մերժում, որ ճեմարանի թէ նախկին ծրագիրը, թէ կանոնադրութիւնը և թէ աշակերտների նիստ ու կացի համար յօրինուած կանոնները հնացել են և պէտք է անհրաժեշտաբար բարեփոխութեան ենթարկուէին։ Բայց փոխանակ այդ իսկապէս անհրաժեշտ բարեփոխութիւնները մտցնելու, մի քանի տարի է, որ ճեմարանում սկսել են հետևել աշակերտներին իրենց քէֆին թողնելու սիստեմին, որը տարէց տարի աւելի զարգանալով, այժմ հասել է արդէն անտանելի չափերի։ Կարծես բոլորովին մոռացել ենք, որ Հայոց երկրի ամեն անկիւններից ժողովուած մանուկների մտաւոր և բարոյական*

դաստիարակութեան համար պատասխանատու ենք Աստուծոյ, մեր խղճի ու Հայոց ազգի առաջ։

Պէտք է վերջապէս վերջ տալ թէ մեր բոլոր դպրոցներում և թէ Մայր Աթոռի ճեմարանում տիրող խառնաշփոթ դրութեանը. Հոգևոր իշխանութեան վրայ ստիպողական պարտաւորութիւն կայ վերջապէս իւր դերի մէջ մտնել, իւր ձեռքն առնել դպրոցները բարեկարգելու գործը։ Դրա համար անհրաժեշտ է, որ գոնէ այժմ, երկու տարուայ խայտառակութիւններից յետոյ, Հայոց ծխական դպրոցներին ու հոգևոր դպրանոցներին հաստատուն ծրագիր ու կանոնադրութիւն տրուի։

Մեզնում վերջերս սովորութիւն է դարձել ասելը, թէ Բ. Կենտրոնական ժողովը կգայ և կբարեկարգէ բոլոր գործերը։ Մեր կարծիքով բաւական է մեզ և ուրիշներին ինքնախաբէութեամբ կերակրելը. Կենտրոնական ժողովները զուցէ կարող են ուրիշ բաների համար լաւ և նպատակայարմար լինել, բայց դպրոցական խնդրի համար այդպիսի ժողովները միանգամայն անպէտք են և մինչև անգամ վնասակար։ Դպրոցական խնդիրը յաջող լուծել կարող են միայն հայ ուսուցիչները, փորձուած մանկավարժները, ձեռք ձեռքի տուած մի հաստատամիտ, բարենորոգութիւնների կողմնակից եւ զօրեղ գործադիր մարմնի հետ, որպիսին պիտի ներկայանայ այժմ մեր հոգևոր բարձրագոյն վարչութիւնը։

Եթէ չենք ուզում յաջորդ ուսումնական տարին էլ նոյն խայտառակութիւններին ականատես լինել, ինչ որ այս տարի տեսանք, պէտք է վերջապէս կտրուկ միջոցների դիմել։ Հոգևոր բարձրագոյն վարչութիւնը պէտք է անհրաժեշտաբար խորհրդակցութեան հրաւիրէ մեր փորձուած մանկավարժներին, ուսուցչական ընտրեալ համագումար կազմէ և միանգամից վերջ դնէ բոլոր կամայականութիւններին մեր դպրոցներում։ Այդ է ժամանակի անյետաձգելի պահանջը, որի զանցառութիւնը պարտազանցութիւն է Հոգևոր իշխանութեան կողմից։ Ոչ ոք հակառակ չէ, նոյն իսկ ամենաթունդ կղերական համա-

բուածները, որ մեր դպրոցներում իշխէ եւրոպական ամենաազատամիտ դպրոցի ծրագիրն ու կանոնադրութիւնը. տուէք մեզ այդ և ազատեցէք կամայականութիւններից, որ մեզ դէպի կործանումն են տանում։

Գալով առանձնապէս Մայր Աթոռի հոգևոր ճեմարանին, պէտք է դժբախտաբար կրկնենք, որ նա էլ կարօտ է այժմ հիմնական բարեփոխութեան և վերանորոգութեան։ Եւ այդ կարիքը նոր չէ զգացւում. մի քանի տարի է, որ խօսւում է շարունակ, առանց գործի կպչելու։ Անցեալ ուսումնական տարեշրջանին վերջապէս աշակերտների մատուցած «պահանջագիրը» ստիպողական առիթ դարձաւ, որ ճեմարանի մանկավարժական խորհուրդը լուրջ կերպով զբաղուի այդ կարեւոր հարցով և ահա այդ խորհրդի կազմած դիտողութիւններն են, որ կամենում ենք դնել հասարակութեան առաջ, քաղուածօրէն յառաջ բերելով ճեմարանի անցեալ տարուայ տեսուչ Տ. Գարեգին վարդապետի Նորին Վեհափառութեան մատուցած զեկուցագրից։

Ամենից առաջ ճեմարանի մանկավարժական ժողովը ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրայ, որ վեց տարին միջնակարգ դպրոցի ուսումն տալու համար քիչ է, ուստի և ճեմարանի աշակերտների պատրաստութիւնը բնագիտական և մաթեմատիքական առարկաներից յատկապէս պակասաւոր է, ինչպէս և ընդհանուր պատմութիւնից։ Այդ պատճառով մանկավարժական ժողովը անհրաժեշտ է համարում բանալ Է. դասարան, տալով այդ դասարանին առանձնապէս մասնագիտական բնոյթ՝ մանկավարժական և կրօնական գունաւորութեամբ, որպէս զի հնարաւոր լինի ճեմարանի նպատակի համաձայն Հայոց դպրոցների համար ուսուցիչներ և Հայաստանեայց եկեղեցու համար սպասաւորներ պատրաստել։ Ընդունելով Է. դասարանի բացումը իբրև անհրաժեշտ կարիք, հետևեալ փոփոխութիւններն են կարևոր համարում մտցնել նախկին ծրագրի մէջ։

Ա.) Կրօնուսոյցների առաջարկութեան համաձայն կրճատել կրօնական առարկաների դասերի թիւը և կարգաւորել կրօնի դասաւանդութիւնը ըստ այսմ.

Ա. դասարան շաբաթական 2 ժամ Սրբազան Պատմութիւն հին ուխտի.

Բ. դաս. » 2 ժամ Սրբազան Պատմութիւն Նոր ուխտի.

Գ. դասարան Եկեղեցու համառօտ պատմութիւն, Ս. Հայրերի կենսագրութեամբ. 2 ժամ շաբաթական.

Դ. դաս. Մարգարէական գրքերի ընթերցումն, 3 ժամ.

Ե. դաս. Համառօտ աւետարանների ուսումն, 2 ժամ.

Զ. դասարան. 2 ժամ Քրիստոնէական Վարդապետութիւն և 2 ժամ Հայոց եկեղեցու պատմութիւն.

Է. դասարան 3 ժամ Հայոց եկ. պատմութիւն, 2 ժամ Քրիստոնէական Բարոյագիտութիւն և 2 ժամ մեկնութիւն Ս. Գրոց կամ առաքելական թղթերի ուսումն։

Բ.) Մինչև այժմ գրաբարն սկսւում էր Ա. դասարանից. մանկավարժական խորհուրդը որոշեց Ա. Բ. և Գ. դասարաններում անցնել միայն աշխարհաբար լեզուն քերականութեան հետ միասին, իսկ Դ. դասարանից սկսել գրաբարը, հետզհետէ պակասեցնելով աշխարհիկ լեզուի և համապատասխան չափով աւելացնելով գրաբարի ուսուցումը, անցնելով նաև համառօտ տեսութիւն մատենագրութեան։

Գ.) Հայոց պատմութիւն սկսել Գ. դասարանից շաբաթական երկու ժամով և վերջացնել Ե. դասարանում— ընդամենը 6 ժամ. իսկ Հայոց մատենագրութիւնն անցնել Զ. և Է. դասարաններում 2+3 ժամով շաբաթական։

Դ.) Ռուսաց լեզուն աւանդել Հայոց լեզուին հաւասար դասերի թւով, ուսման չափն էլ համաձայնեցնելով պետական միջնակարգ դպրոցների ծրագրին. բարձրագոյն դասարաններում անցնել նաև համառօտ Ռուսաց գրականութիւն։

Ե.) Նոր լեզուներից աւանդել գերմաներէնը, սկսելով Գ. դասարանից. իսկ եթէ յետագայում հնարաւոր լինի ֆրանսերէն էլ մտցնել, նոցանից մէկը միայն պարտադիր անել։

Զ.) 9 ժամը քիչ համարելով ընդհ. պատմութեան համար. որոշուեց 2 ժամ էլ աւելացնել։

Է.) Առանձնապէս ուշք դարձնել բարուոքելու բնագիտական և մատեմատիքական առարկաների դասաւանդութիւնը. մտցնել եռանկիւնաչափութիւն, տարրական քիմիա, տոմարագիտութիւն և առողջապահութիւն։ Ստորին դասարաններում բնական պատմութիւնից անցնել կենդանաբանութիւն, հանքաբանութիւն և բուսաբանութիւն։

Ը.) Է. դասարանում կարևոր է մտցնել ուսումն մանկավարժութեան, համառօտ տրամաբանութիւն և հոգեբանութիւն.

Ուսման դասաւորութիւնը և դասերի բաշխումը պէտք է լինի հետևեալ ցուցակի համաձայն.

| Կարգ | Առարկաներ | Դասարաններ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. | Զ. | Է. |
| 1 | Կրօն . . . . . | 2 | 2 | 2 | | | | |
| 2 | Ուսումն Ս. Գրոց . . . | | | | 3 | 2 | | |
| 3 | Քրիստոնէական վարդապետութ. | | | | | | 2 | |
| 4 | Հայոց եկեղ. պատմութիւն . | | | | | | 2 | 3 |
| 5 | Բարոյագիտութիւն . . . | | | | | | | 2 |
| 6 | Մեկնութիւն Ս. Գրոց . . | | | | | | | 2 |
| 7 | Հայոց լեզու . . . . | 6 | 6 | 5 | 5 | 5 | 4 | 2 |
| 8 | Ռուսաց լեզու . . . . | 6 | 6 | 5 | 5 | 5 | 4 | 2 |
| 9 | Եկեղեցական երաժշտութիւն . | 3 | 2 | 2 | 2 | | | |
| 10 | Գերմաներէն . . . . | | | 3 | 3 | 3 | 2 | 2 |
| 11 | Հայոց պատմութիւն . . . | | | 2 | 2 | 2 | | |
| 12 | Հայոց գրականութիւն . . | | | | | | 2 | 3 |
| 13 | Հայաստանի աշխարհագրութիւն . | | 2 | | | | | |
| 14 | Ռուսաց պատմութիւն . . | | | | | 2 | 2 | |
| 15 | Մանկավարժութիւն . . . | | | | | | | 4 |
| 16 | Հոգեբանութիւն . . . | | | | | | | 2 |
| 17 | Տրամաբանութիւն . . . | | | | | | | 2 |
| 18 | Ռուսաց աշխարհագրութիւն . | | | | | 2 | | |
| 19 | Ընդհանուր պատմութիւն . . | | | | 3 | 3 | 3 | 2 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | Ընդհանուր աշխարհագրութիւն . | 3 | 3 | 3 | | | | |
| 21 | Թուաբանութիւն . . . | 4 | 3 | | | | | |
| 22 | Մաթեմատիկա—(Թուաբանութիւն և հանրահաշիւ) . . . | | | 4 | 2 | 2 | 2 | |
| 23 | Երկրաչափութիւն . . . | | | | 2 | 2 | 2 | |
| 24 | Բնագիտութիւն և տարրական քիմիա . . . . | | | | | 2 | 3 | 2 |
| 25 | Եռանկիւնաչափութիւն . . | | | | | | 2 | |
| 26 | Տիեզերագրութիւն և Տոմարագիտութիւն . . . . | | | | | | | 2 |
| 27 | Բնախօսութիւն և առողջապահութիւն . . . . | | | | 3 | | | |
| 28 | Բնական պատմութիւն . . | 3 | 2 | 2 | | | | |
| 29 | Նկարչութիւն . . . . | | 2 | 2 | | | | |
| 30 | Վայելչագրութիւն . . . | 3 | 2 | | | | | |
| | Գումար . | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 |

Ճեմարանի Մասնագիտական բաժնի մանկավարժական խորհուրդն էլ Մասնագիտական բաժնի համար է աշխատել ծրագիր կազմել և ի նկատի ունենալով այն դժուարութիւնները, որ շարունակ յառաջ են եկել աշակերտութեան մէջ իրենց չսիրած պարտադիր առարկաների պատճառով, կարևոր է համարում Ճեմարանը վերածել իսկական բարձրագոյն դպրոցի քառամեայ դասընթացքով և Աստուածաբանական ու հայագիտական երկու բաժանմունքներով։ Ովքեր կամենում են Աստուածաբանութիւն ուսանել, նոցա համար պարտադիր պիտի համարուին հետևեալ առարկաները.

1) Հին և Նոր կտակարանների ներածութիւն.
2) Ս. Գրոց մեկնութիւն.
3) Հին և Նոր կտակարանների Աստուածաբանութիւն (կրօնի պատմութիւն).
4) Ընդհանուր Եկեղեցական պատմութիւն.
5) Դաւանաբանութիւն.

6) Բարոյագիտութիւն.
7) Հովուական Աստուածաբանութիւն.
8) Պատմութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ.
9) Հայոց եկեղեցական գրականութեան պատմութիւն.
10) Հայոց եկեղեցական իրաւագիտութիւն.
11) Հայոց գրականութեան պատմութիւն (հին շրջան).
12) Քաղաքատնտեսութիւն.
13) Հոգեբանութիւն.
14) Փիլիսոփայութեան պատմութիւն.
15) Գերմաներէն.
16) Յունարէն.

Հայագիտութեան ուսանողների համար պարտադիր են համարւելու.

1) Հայոց եկեղեցւոյ պատմութիւն.
2) Հայոց եկեղեցական գրականութեան պատմութիւն.
3) Եկեղեցական իրաւաբանութիւն Հայոց.
4) Հայոց գրականութեան պատմութիւն.
5) Հայոց պատմութիւն.
6) Հայոց հնախօսութիւն.
7) Հայ հեղինակների ընթերցանութիւն.
8) Հայոց լեզուի քերականութիւն.
9) Բիւզանդական պատմութիւն.
10) Արեւելքի պատմութիւն.
11) Ընդհանուր գրականութեան պատմութիւն.
12) Ռուսաց գրականութեան պատմութիւն.
13) Փիլիսոփայութեան պատմութիւն.
14) Գերմաներէն.

Ճեմարանի մասնագիտական բաժնում պիտի աւանդուին նաև հետևեալ գիտութիւնները, որոնց դասախօսութիւններին մասնակցելը կամաւոր է թողնւում երկու բաժնի ուսանողների համար.

1) Բաղդատական դաւանագիտութիւն.
2) Եկեղեցական հնախօսութիւն.
3) Պատմութիւն կրօնի և Փիլիսոփայութիւն կրօնի.
4) Եկեղեցական երաժշտութեան պատմութիւն.

5) Ընդհանուր պատմութիւն.
6) Պետական իրաւունք.
7) Տրամաբանութիւն.
8) Մանկավարժութիւն.
9) Հոգեբանութիւն.
10) Ֆրանսերէն.
11) Պարսկերէն.
12) Եբրայեցերէն.

Իւրաքանչիւր ուսումնական տարուայ վերջին մանկավարժական խորհուրդը որոշում է յաջորդ տարուայ աւանդելի գիտութիւնները, նոցա դասերի թիւը իւրաքանչիւր լսարանի համար։

---

Սակայն Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի միայն ծրագիրը չէ բարեփոխութեան կարօտ. նոյն, գուցէ և շատ աւելի մեծ չափով զգացւում էր կանոնադրութեան փոփոխութեան կարևորութիւնը։ Մինչև այժմ ուսուցիչները Ճեմարանում օգտուել են շատ քիչ իրաւունքներով, այն ինչ համարեա ամեն բանի համար պատասխանատու են համարուել. իսկ իրաւազուրկ մարդու վրայ պարտականութիւններ դնել չէ կարելի։ Տեսուչները միշտ նշանակուել են Վեհափառ Հայրապետի բացարձակ կամքով, առանց ուսուցիչների գիտութեան կամ գոնէ խորհրդակցութեան, և արդէն մի անգամ այդ ձևով նշանակուած տեսչի ու նրա օգնականի հետ նոքա պիտի տեսնէին, թէ ինչպէս գլուխ կգան։

Ուսուցիչների նիւթական դրութիւնը եղել է և մնացել է աննախանձելի. տեսուչներն իրաւունք են համարել երբեմն առանց հիմնաւոր պատճառների արձակել բազմամեայ ուսուցչին և նրան փողոց նետել գուցէ միայն անձնական հաշիւներով առաջնորդուելով. մի խօսքով՝ անտանելի իրաւազուրկ մի դրութիւն, որ տարիներ շարունակ ճնշել է ամենին։ Այս բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով, Ճեմարանի մանկավարժական ժողովը կարևոր և անհրա-

ժեշտ է համարում հետեւեալ փոփոխութիւնները մտցնել գործող կանոնագրութեան մէջ։

Ա.) Որպէս զի հնարաւոր լինի համերաշխ կերպով գործել տեսչի հետ միասին դպրոցի կանոնաւորութեան և յառաջադիմութեան համար, ուսուցիչներին պիտի տրուի իրաւունք ընտրել տեսուչ։ Թէև իսկապէս Ճեմարանի դպրանոցական և մասնագիտական բաժինները տարբեր վարչութիւն պիտի ունենային և կառավարուէին առանձին տեսուչներով, բայց որովհետև երկու հաստատութիւնները ըստ տնտեսականին սերտ կապով կապուած են միմեանց հետ և գտնւում են միևնոյն շինութեան մէջ, որոշւում է առժամանակ կառավարել մի տեսչով։ Մանկավարժական խառն ժողովի ընտրած տեսուչը, որ ի հարկէ պիտի բարձրագոյն կրթութիւն ունենայ, հաստատւում է իւր պաշտօնի մէջ Վեհափառ Հայրապետի կոնդակով։

Տեսուչ Գարեգին վարդապետը ընտրելի է համարում միայն մասնագիտական բաժնի ուսուցիչներին, իբրև բարձրագոյն դպրոցի առանձնայատկութիւններին լաւ ծանօթ, իսկ դրսի մարդկանցից միայն այն համալսարանաւարտները կարող են Ճեմարանի տեսուչ դառնալ, որոնք ծանօթ են Աստուածաբանական և բանասիրական—հայագիտական ուսմանց։

Բ.) Տեսչի օգնականին էլ ընտրում է խառն ժողովը բարձրագոյն կրթութիւն ունեցող անձերից, նախապէս առնելով տեսչի հաճութիւնը։

Գ.) Ուսուցիչներին և վերակացուներին պիտի ընտրեն տեսուչը, նրա օգնականը և մանկավարժական ժողովի ընտրած երկու ուսուցիչ—ներկայացուցիչները՝ փոխադարձ համաձայնութեամբ։

Դ.) Ուսուցիչ կամ վերակացու արձակելու դէպքում տեսուչը պիտի ներկայացնէ իւր ապացոյցները 4 հոգուց բաղկացած մի մարմնի, որոնցից երկուսին ընտրում է տեսուչը, իսկ երկուսին արձակելի ուսուցիչը. սոքա պէտք է ընտրեն մի հինգերորդին նախագահ և խնդիրը քննութեան ենթարկեն. այդ քննութեան արդիւնքը տե-

սուչը պիտի մատուցանէ Վեհափառ Հայրապետին ի բարեհայեցողութիւն և ի տնօրէնութիւն։ Կարևոր նշանակութիւն ունի մանաւանդ հետևեալ վճիռը։

Ե.) Մանկավարժական ժողովը անհրաժեշտ է համարում, որ Ճեմարանից դուրս լինի մի ընտրեալ մարմին՝ հաստատութեան տնտեսական և ուսումնական յառաջադիմութեան վրայ հսկելու համար։

Այնուհետև մանկավարժական ժողովը մատնացոյց է անում այն անարդարութեան վերայ, որ Մայր Աթոռի Ճեմարանի ուսուցիչը ստիպուած է բաւականանալ պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում իւր չափաւոր ռոճկով, այն ինչ պետական դպրոցներում որոշ տարիներ ծառայելուց յետոյ ռոճկի յաւելումն է լինում և ծերութեան դէպքում էլ կենսաթոշակ կայ նշանակուած։ Ներսիսեան դպրոցում և Նոր-Նախիջևանի թեմական դպրոցում էլ արդէն ռոճկի յաւելումն լինում է և խնայողական գանձարան կայ կենսաթոշակի համար, և միայն Ճեմարանն է, որ բացառութիւն է կազմում, թէև այստեղ մինչև անգամ մասնաւոր պարապմունքներ գտնելն անհնարին է։ Այդ բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով, Մանկավարժական ժողովն որոշում է խնդրել Նորին Վեհափառութեանը՝ ա) ստորին դասարանների դասագինը հաւասարեցնել միւսների հետ*, բ) իւրաքանչիւր 5 ամեայ ծառայութեան համար ռոճկի վրայ առնուազն 150 րուբլի յաւելումն անել և գ) առանձին վարձատրութիւն նշանակել դաստիարակութեան պաշտօնի համար, ինչպէս ուրիշ դպրոցներում է. որովհետև դաստիարակութեան ծանր պարտաւորութիւնը դնել ուսուցիչների վրայ, առանց վարձատրութեան անհնար է, իսկ դաստիարակութեան պաշտօնը շատ կարևոր է աշակերտներին բարոյական հաշուետուութեան և քաղաքավարութեան վարժեցնելու համար։

---

* Ճեմարանի ուսուցիչներն ստանում են իւրաքանչիւր դասի համար Ա—Գ. դասարան 50 րուբլի, Դ—Զ. 75 րուբլի, և լսարաններում 100 րուբլի դասագին.

Վերջապէս մանկավարժական ժողովը առաջարկում է մի քանի փոփոխութիւններ մտցնել աշակերտների նիստ ու կացի մէջ և նոցա պահանջներից մի քանիսին բաւարարութիւն տալ։ Յայտնի է, որ ճեմարանում դժգոհութիւնների մեծագոյն աղբիւրը եղել է սնունդի անկանոն մատակարարութիւնը. որովհետև այդ դժգոհութեան առաջն առնել հնարաւոր է եղել աշակերտների սեղանատան ու խոհանոցի անջատամամբ վանքից, մնում է մէջ տեղ դժգոհութեան մի ուրիշ խոշոր աղբիւր. այդ աշակերտների ամենայն օր իբրև երգիչ եկեղեցի յաճախելու խնդիրն է։ Արդէն նախորդ տեսուչ պ. Կարապետ Կոստանեանը իւր վերջին տեղեկագրի մէջ Նորին Վեհափառութեան բարեհաճ ուշադրութիւնն է հրաւիրում այդ հանգամանքի վրայ, յիշատակելով ամենայն օր, մանաւանդ ձմեռը աշակերտներին եկեղեցի տանելու դժուարութիւնները։ Այդ դժգոհութիւնն էլ մէջ տեղից վերացնելու համար մանկավարժական ժողովը որոշում է խնդրել Նորին Վեհափառութիւնից եթէ հնարաւոր է թոյլ տալ բոլոր աշակերտներին եկեղեցի բերել միայն տօն և կիւրակէ օրերը, ազատելով նրանց ամեն օր հերթով եկեղեցի գնալու պարտաւորութիւնից։

Որովհետև աշակերտները իրենց պահանջագրի մէջ խնդիր են յարուցանում նաև վերարկուի և գլխարկի մասին, մանկավարժական ժողովը որոշում է տնօրինութիւն խնդրել հոգևորականի վերարկուն ու գլխարկը փոխելու, և աշակերտներին աշխարհիկ վերարկու և սովորական գլխարկ տալու։

Աշակերտների ներքին կեանքի համար նոր, աւելի նպատակայարմար կանոններ սահմանելը, նրանց ազատութիւնների չափը որոշելը ժողովը վճռում է թողնել հետևեալ ուսումնական տարուայ սկզբին։

Մի խիստ կարևոր խնդրի վրայ էլ մանկավարժական ժողովը հրաւիրում է Վեհափառ Հայրապետի ուշադրութիւնը. շատ անյարմար է և միանգամայն անհնարին հասակաւոր պատանիներին և անչափահաս երեխաներին մի

և նոյն կարգ ու կանոնով կառավարելը, ուստի ժողովը կարծում է, որ լաւ կլինի Ճեմարանի մասնագիտական բաժնի ուսանողների գիշերօթիկութիւնը վերջացնել, նրանց որոշ թոշակ (ստիպենդիա) տալ և երթևեկ դարձնել։ Ճեմարանի տեսուչ Գարեգին վարդապետը այն կարծիքն է յայտնում, թէ պէտք է դրսում մի հանրակենցարան հիմնել ցանկացող ուսանողների համար, ուր նրանք անհատական ազատութիւն վայելելով հանդերձ, որոշ հսկողութեան տակ պէտք է լինին։

Առհասարակ ցանկալի է համարւում, որ տարէցտարի փակուին ստորին դասարանները և մնան միայն, այն էլ առայժմ, Ե. Զ. և Է. դասարաններն ու 4 լսարանները. առաջին յարմարութեան դէպքում պէտք է փակել նաև վերին դասարանները և Ս. Էջմիածնում պահել միայն բարձրագոյն դպրոց՝ վերև յիշուած կազմութեամբ և 4 ամեայ դասընթացով։

Սոքա են անցեալ տարուայ մանկավարժական ժողովի կարևոր համարած բարեփոխութիւնները Ճեմարանի ուսումնական, տնտեսական և ներքին կեանքի նկատմամբ։ Իւր ժամանակին, սրանից 10 ամիս առաջ այս ծրագիրը ներկայացրած է Նորին Վեհափառութեան բարեհաճ տնօրէնութեանը։ Կարելի է անշուշտ շատ կէտերում համաձայն չլինել անցեալ տարուայ մանկավարժական ժողովի կարծիքների հետ, բայց անկարելի է ուրանալ, որ այս ծրագիրը մեր առաջ է դնում Ճեմարանի խորապէս վիրաւոր կողմերը և իւր կողմից բժշկութեան միջոցներն առաջարկում։ Մեզ չի վայելէ մանրամասն գնահատութեան ենթարկել առաջարկուած ծրագիրը, քանի որ ինքներս անցեալ տարի եղել ենք այդ մանկավարժական խորհրդի անդամ և մեծ մասամբ համաձայն ենք նրա հետ։ Ով որ աւելի լաւ ծրագիր ունի առաջարկելու, թող հանդէս գայ, մանաւանդ որ ուսումնական տարին արդէն վերջանում է և պէտք է մեր բոլոր դպրոցների հետ նաև Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանը հանել իւր քաոսային դրութիւնից։

Բաւական է, ինչքան որ տուժեց հաստատութեան համբաւը. հերիք է տանջուին մեր ազգային նահատակ հայ վարժապետները անորոշութեան ու պատահականութեան պատճառով. թող բաւական համարուին նաև աշակերտութեան անգիտակցաբար կրած վնասները՝ թէ ըստ բարոյականին և թէ ըստ ուսումնականին։

Մայր Աթոռի ճեմարանի բարեկարգութեան խնդիրն է դրուած մէջտեղ և ով որ ցանկանում է ճեմարանից հայ ժողովրդին ու հայ գիտութեանը օգտակար մարդիկ դուրս եկած տեսնել, պէտք է իւրովսանն աշխատի ճեմարանը բարեկարգ վիճակի մէջ դնելու համար. Այդ է պահանջում թէ Հայոց եկեղեցու, թէ հայ ժողովրդի, թէ հայ հոգևորականութեան և թէ նոյն իսկ ճեմարանի ուսուցիչների և որ գլխաւորն է, աշակերտների շահը։

**Երուանդ վարդապետ**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ

---

Արձակուրդից Մայր Աթոռ վերադարձան Տ. Տ. Մատթէոս և Սրտակ վարդապետները։

---

Ագուլիսի Թովմա Առաքելոյ վանքի վանահայրութիւնից հրաժարուելով, Մայր Աթոռ վերադարձաւ Տ. Մեսրոպ վարդապետ Մաքսուտեանը։

---

«Արարատ»ի խմբագիր Տ. Գարեգին վարդապետ Յովսէփեանը Տփխիսի Մայր եկեղեցու երեցփոխանի դրաւոր առաջարկութեան և թեմական առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի հեռագրական միջնորդութեան համաձայն, իրաւունք ստացաւ ազդիս Վեհափառ Հայրապետից Տփխիս

մեկնելու, այնտեղ Մեծի պահոց ընթացքում քարոզներ խօսելու համար։ Այժմ Տ. Գարեգին վարդապետը գտնւում է Տփխիսում։

---

Մեծի պահոց երկրորդ շաբաթուանից սկսուած են Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի հարցաքննութիւնները։ Մանկավարժական ժողովը որոշել էր հրապարակական քննութիւն անել բոլոր դասարաններում աւարտական առարկաներից, բայց զիջանելով աշակերտների պահանջին, կրկին ժողով անելով որոշեց հրապարակական քննութիւն անել միայն լսարաններում, վերացնել միւս դասարանների քննութիւնները, իսկ Զ. դասարանի համար բաւականանալ դասարանական քննութիւններով։ Տփխիսից վերադարձել են և արտակարգ քննութիւն են տալիս նաև երկու ամիս առաջ հեռացած աշակերտները։

Քննութիւնների ցուցակը ամեն տարի տպւում էր և բաժանւում միաբաններին, որպէս զի ցանկացողները կարողանային ներկայ գտնուել իրենց ուզած առարկաների քննութեանը։ Այս տարի այդ էլ չարեց ներկայ վարչութիւնը։ Պատճառները մեզ անյայտ են։ Արհամարհանք է այդ դէպի միաբանութիւնը, չկամութի՞ւն թէ մի այլ բան, միևնոյն է. մենք դատապարտում ենք այդպիսի վերաբերմունքը, որ կարող է միայն սառնութիւն և ատելութիւն յառաջ բերել ճեմարանի և միաբանութեան մէջ։

## † ՄԿՐՏԻՉ ՊԱԼԵԱՆ

(1834—1907)

Ներկայ թուականի յունուար 13-ին կնքեց իր մահկանացուն Մկրտիչ Պալեանը Երևանում և մեծ շքով թաղուեցաւ։

Հանգուցեալը ծննդեամբ Տրապիզոնից էր, իսկ կըրթութիւնը Վենետիկի Մխիթարեանց մօտ ստացել։ Նորա

սիրած ուսարկան հայերէն էր և հմուտ նախնեաց գրականութեան և պաշտող Ալիշանի և Բագրատունու։ Նորա գործունէութեան ասպարէզը դպրոցն է եղել, որին ծառայել է զանազան ընդհատումներով 50 տարի։ Միայն 1903-ին Երևանում նորա մանկավարժական յիսնամեակը համեստ, բայց և վայելուչ հանդէսով կատարելուց յետոյ՝ քաշուեցաւ այդ ասպարէզից և 4 տարի հանգիստ առաւ, ստանալով չափազանց համեստ կենսաթոշակ իւր կէս դար դպրոցական գործին ծառայելուն իբր վարձ։ Մկրտիչ Պալեանը պաշտօն է վարել Հայոց յայտնի դպրոցներում՝ սկսած Տրապիզոնից, ուր ուսուցչութեան սկիզբն է դրել, յետոյ անցել է Թէոդոսիա Խալիպեան ուսումնարան, յետոյ Գէորգեան Ճեմարան, ապա Ներսիսեան դպրանոց, կրկին Ճեմարան, յետոյ Երևանի թեմական դպրանոց, ուր և աւարտում է գործունէութեան շրջանը։ Իբր անձնաւորութիւն՝ իւր երիտասարդական աշխուժով, զուարթ և ոգևորուող բնաւորութեամբ սիրելի էր և տպաւորիչ։ Ուրախութեան սեղանի շուրջը չէր կարելի սառը մնալ նորա խրոխտաձայն ճառերը և կենացները լսելիս, մանաւանդ նորա յայտնի «Այս բաժակ, զառն բաժակ, զոր ըմպեցին Մեսրոպ, Սահակ» իւր յօրինած ոտանաւորը արտասանելիս։

Իբր ուսուցիչ միշտ գրաւել է իւր աշակերտներին իւր նախնեաց մատենագիրների հմտութեամբ և նոցա ջատագովութեամբ։ Ոգևորել է ժամանակին իւր գրաբարի տիրապետութեամբ։ Շատերը ցանկանալով հետևել նորա օրինակին՝ առանձնապէս նուիրուել են Խորենացու կամ Եղիշէի ուսումնասիրութեան։

Նա գործել է և իբր գրագէտ, աշխատակցել է յատկապէս «Արարատ» ամսագրին թէ արձակ և թէ ոտանաւոր գրուածքներով։

Հանգստեան տարիներն անգամ նա անգործ չէր նստած, կազմում էր Խորենացու առանձին բառարանը, որի վախճանը չտեսած հասաւ իւրը։ Հանգիստ ոսկերացդ, հայ հոգևոր անդաստանի անխոնջ մշակ։

# ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ

Ողջոյն, քարեր, ողջոյն կ՚ուտամ սրտագին,
Ձեզ, կոթողներ, ձեռակերտներ մարդկային.
Ողջո՜յն, ողջո՜յն. ձեր խոր քնէն զարթեցէք,
Ովքե՛ր էք, ովքե՛ր, զարթէք պատմեցէք։

Կա՛մ ուստի՞ դուք, ուստի գաղթած որբավայր
Մեռելութեան խաղաղական այս աշխարհ.
Խոր լռութեան խորին, քնոյ մէջ թաղուած՝
Դուք ողբ միայն, դուք կը սիրէք կոծ ու լաց։

Բազմադարեան բազմածնունդ աշխարհի,
Դուք նախահայր բնակիչներ էք նախնի.
Ձեր սերունդից եմ եկած այցելու,
Ողջո՜յն, ողջո՜յն, զարթէք, քարեր, ձայնատու։

Դուք անզգայ, ո՛չ սիրտ ունիք և ո՛չ սէր,
Դուք ապառաժ մի մի անխօս էք քարեր.
Բայց ձեր խորքէն նոքա մեզ հետ կը խօսին,
Որոնք երբեմն կենակիցներ մեզ էին։

Դուք միշտ նըսեմ, դուք տխրադէմ, սըրտայոյզ,
Անգութ մահուան պարծանք քարեր դուք գոռոզ.
Ո՜րչափ ողբեր, ի՜նչ ցաւագին մըրմունջներ
Լսած էք դուք ապառաժի կըտորներ։

Քանի՜ք, աւա՜ղ, փոխանակել ցանկացան
Ձեզ հետ իրանց կեանքն ու թաղուիլ միաբան.
Անմխիթար ձեր սնարի մօտ ընկած,
Քանի՜ք լացին, քանի՜ք կեանքէ տաղտըկացած։

Այստեղ լացան կոյսն ու այրին սըգաւոր,
Ձեզ այցելու որբն է եկած ուխտաւոր.
Այս մամռապատ այստեղ գլուխն ի քարին,
Սըրտաճմլիկ մայրն է լացած իր որդին։

Չիկայ ոչ մին. չիկայ անցաւ ազատուած,
Առհասարակ մարդիկ այստեղ են լացած.
Այստեղ քնար, այստեղ հոգի, միտք մարդկան,
Իմաստներով քան այս քարեր բարձրացան։

Քարեր, միայն շուրջս քարեր անխօսուն,
Տարբեր տարբեր հաստակ ունին չափ կանգուն.
Նոյն մարդկութիւնն՝ ինչպէս երբեմն կենդանի,
Այստեղ նոյնպէս իրեն կեանքով կ'որոշուի։

Այս քարն անկոփ նոյն մի կոյտ հողն անքար,
Կամ մի աղքատ և կամ մի որբ է թշուառ.
Իսկ այս հպարտ բուրգն և կոթող մահարձան
Կամ մեծատուն կամ զօրավար կամ իշխան։

Այս բանաստեղծ՝ նորա անուան կառուցած,
Միւսն ալ մի մեծ գիտնականի նըւիրած.
Այն մեծիմաստ մարդիկ այն մեծ միտքն հանճար
Այստեղ մի կոյտ հող են դարձած հաւասար։

Որչափ քարեր, որչափ կոյտեր անհամար,
Որչափ առատ մահուան տարած հունձն առատ.
Այս մեզ համար պատանք գործող միշտ մակոյկ
Ինչպէս շուտ շուտ կ'երթայ կուգայ անողոք։

Պէտք է մեռնիլ, պիտի մեռնին և մարդիկ,
Այս է բնութեան անխախտ վճիռն ու կնիք.
Բայց չեն մեռնիր մարդկութեան մէջ սերմանած
Գործն օգտակար և գաղափարն անմոռաց։

Դեռ կենդանի կ'ապրին իրանց գործերով,
Դեռ շատ ու շատ պիտի ապրին դարերով.
Եւ մարդկութիւնն երախտագէտ գոհունակ
Պիտի օրհնէ նոցա անմահ յիշատակ։

Այստեղ վախճան հանդըստարան աշխարհի,
Այս սուրբ ափունք դառըն է անմահ մեր կեանքի.
Ուր որ նաև ես առօրեայ կեանքըս կընքած,
Պիտի ննջեմ մինչև զարթիմ նորոգուած։

Ես այլ նոյնպէս նման բոլոր մարդկութեան
Այստեղ մի կոյտ պիտի դառնամ հող կոխան.
Քար իմ պատկեր, քար ուրուական իմ դիմակ
Ապագային պիտի կանգնի յիշատակ։

Պիտի ափշին, ցաւին մընան զարմացած,
Երբ իմ անուամբ տեսնեն այս քարը կանգնած.
Անշուք անզարդ և անքանդակ ճակատին
Ո՜ւր թէ գործերըս զարդ ու քանդակ լինէին։

Պիտի ճանչնան նոքա այն քարն ու ամեն,
Քար մ'ալ ահա աւելացաւ լեռներէն.
Աւաղ, ինչ շուտ մեզ կենակից և ծանօթ,
Այս մեր ընկեր կեանքը կընքեց համառօտ։

Բայց ով արդեօք, ով իմ անարգ ոսկրոտին
Պիտի յարգէ, մի քար կանգնէ իմ պատուին.
Ո՞ր լեռներէն, ո՞ր հողերէն, ո՞ր աշխարհ
Պիտի թաղուիմ ես, հայրենի՞ թէ օտար։

Նոյն հողն է այս, նոյն խորք ու ծոց նոյն հողի,
Ուր վիճակուած իմ գերեզմանը լինի.
Այս մի միայն կը ցանկայի, կ'ուզէի,
Որ Մայի մահիցս յետոյ կենդանի։

Մեռած եմ ես, անշուշտ դիակ հողի տակ,
Թէ գովելի չունիմ ոչ մի յիշատակ.
Չեմ ես մեռած, դեռ հողի տակ կենդանի,
Թէ կատարած եմ ես մի գործ յիշելի։

Ահա բազմած այս քարերի ծայրերին
Մահն ինձ հրաւէր կուտայ խստիւ այս ժամին.
Ինչպէ՞ս թողում ծաղկած կեանքիս այս օրեր,
Այս սուրբ տեղին, ինձ սիրելի այս քարեր։

Կաց դու, ով մահ, կաց, սիրելիքս ես ողբամ
Ամեն քարի յանձնուած սէրն իրեն տամ.
Բանամ, յայտնեմ ես հանդերձեալ գաղտնիքներ,
Ճըշմարտութիւնն ինձ թող պատմեն այս քարեր։

Մ. Պալեան.

Տրապիզոն 1860 Թ.

# ՏԱՃԿԱՀԱՅՔ

---

Լոնտոնաբնակ վաճառական Գալուստ էֆ. Կիւլպէնկեան 1000 ֆր. ղրկած է Ս. Պատրիարք Հօր՝ Պատրիարքարանի պարտքին հատուցման ի նպաստ:

—

Վսեմ. Պօղոս փաշա Նուպար իր հանրածանօթ առատաձեռնութեամբ և ինքնաբերաբար 100 անգլ. ոսկի նուիրած է Ազգ. Հիւանդանոցին: Իսկ 500 անգլ. ոսկի Ազգ. Պատրիարքարանի պարտուց բարձման օժանդակելու համար:

—

Վսեմ. Աբրահամ Բարթող փաշա Աղեքսանդրիայէն գրով մը Ս. Պատրիարքին ղրկած է 200 անգլ. ոսկիի չէք մը Պատրիարքարանի պարտուց բարձման ի նպաստ:

Նոյնպէս Գահիրէէն Պետրոս էֆ. Կարապետեան 50 անգլ. ոսկինոց չէք մը ղրկած է այս նպատակով:

—

Թաթուս էֆ. Ունճեան Գատըգիւղի Թաղական Խորհուրդին յայտնած է թէ 700 ոսկի կը կտակէ տեղւոյն ս. Թադէոս եկեղեցիին: Խորհուրդն զգածուած Ունճեան էֆ.ի այս առատաձեռնութենէն, որոշեց ամէն ս. Կարապետի տօնին հոգեհանգստեան պաշտօն կատարել տալ ս. Թադէոս եկեղեցիին մէջ, ի յիշատակ ողբացեալ Աբիկ էֆ. Ունճեանի և նոյն գերդաստանին բոլոր հանգուցեալ անդամոց: Այս առթիւ, ս. Թադէոս եկեղեցւոյ քարոզիչ Տ. Ղեւոնդ վարդ. Դուրեան կիրակի օր պատարագեց նոյն եկեղեցւոյն մէջ և քարոզելով, ի վեր հանեց Ունճեան գերդաստանին բարեսիրական զգացումներն և գովեստով յիշեց Մաթուս էֆ.ի այս նոր նուիրատուութիւնը:

—

Քաղ. Ժողովոյ յանձնարարութեան համաձայն Ուսումն. Խորհուրդը վարժարանաց տեսուչներուն հետ խորհրդակցելով կիսամսեայ կիրակնօրեայ կրօն. դասախօսութիւն մը հաստատեց՝ նպատակ ունենալով առաքինութիւնները դրուատել և մոլութիւնները ձաղկել. առ այս կարգադիր Յանձնաժողով մը ընտրուեցաւ:

—

† Յակոբ Ոսկան. Յունուար 13/26-ին շաբաթ գիշեր Պոլիս վախճաներ է Յակոբ Ոսկան, խոր ծերութեան հասած:

Պոլսոյ հայ ուսուցիչներուն երէցն էր, ազգային վարժարաններուն մէջ հայ և ֆրանսերէն լեզուները դասախօսելով աւելի քան վաթսուն տարի։ Մասնաւորապէս Սամաթիա, Խում-գաբու և Օրթագեղ թաղերը աշխատած էր։

Հայ գրական պատմութեան մէջ ալ պիտի յիշատակուի այն բանաստեղծութիւններովը, որոնք 1860 թուականէն յետոյ ամէն տարի կանոնաւորապէս կը հրատարակուէին Միւհէնտիսեան տպարանի Օրացոյցին մէջ։ «Նժդեհ»ին երգը հիմակ ալ սրտի յուզմամբ կրնայ կարդացուիլ. 1865ին հրատարակուած թէև, բայց իր «Նորութեան հրապոյրը» կորսուած չի համարուիր, վասն զի ազգային աղէտներն ալ երբէք չեն հիննար։

—

Երզնկայի Առաջնորդարանին արտօնութեամբ նուագահանդէս մը պիտի կազմակերպուի ի նպաստ արդիւնաշատ դաստիարակի մը՝ Գույումճեան էֆ.ի որ երեսնամեայ արդիւնալի պաշտօնավարութիւն մը ունեցած է։ Անշուշտ թէ հոս և թէ ուրիշ քաղաքաց մէջ գտնուող նոյն դաստիարակին համակիր կրթասէր անձնաւորութիւնները և աշակերտները պիտի փութան նիւթապէս և բարոյապէս մասնակցիլ սոյն հանդիսին։ Այս նուագահանդէսը որ անցեալ դեկտ. 31-ին տեղի պիտի ունենար յետաձգուեցաւ Մեծ Բարեկենդանի օրերուն, որպէս զի թէ հեռաւոր ազգայինները կարենան մասնակցելու ժամանակ ունենալ և թէ հանդէսը վայելուչ կազմակերպութեամբ մը ներկայանայ՝ որչափ կը ներեն տեղական պայմաններն ու միջոցները։

—

ՍիսէՆ *կը գրեն մեզի.*—*Մենք Կիլիկիացիքս որ դեռ ոչ մի կերպով չօգնեցինք Ն. Ս. Օծութեան՝ հրաշքներ կը սպասենք. եթէ չենք կարող օգնել նիւթապէս՝ գոնէ քաջալերենք զինքը բարոյապէս։ Հոգւոր պետին՝ նիւթական և բարոյական օգնութիւններ զլանալէ յետոյ անկէ ի՞նչ պէտք է սպասենք և ի՞նչ իրաւունք ունինք սպասելու։ Հակառակ այս ամէնուն՝ Ն. Ս. Օծութիւնը սակայն անվհատ կը գործէ։ Ժառանգաւորաց վարժարանը 25 աշակերտներով կը շարունակէ իր ընթացքը. ստոյգ տեղերէ իմացած ենք թէ վանքին ընդարձակ ագարակը արդիւնաւոր շաւիղի մը մէջ մտած է և այս տարի ալ նոյն ագարակին մէջ եղած ջաղացքը ի շահ Ս. Աթոռոյ բանեցնելու համար Հալէպէն ամսականով մասնագէտ ջաղացպան մը հրաւիրուած և գործի ալ սկսած է։*

—

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը Կիլիկեան բոլոր առաջնորդաց շրջաբերական մը ղրկած է, որով կը յանձնարարէ իր Կաթողիկոսութենէն առաջ և իր պաշտօնավարութեան քառամեայ շրջանին մէջ բոլոր վարժարանաց մէկ բաղդատական ցուցակը պատրաստել, ուր պիտի նշանակուին երկսեռ աշակերտաց յաւելեալ թիւը, պիւտճէներու քանակութիւնը, ուսուցչաց անունները, օտար վարժարաններ գացող և անոնցմէ մեր վարժարանները եկողներու թիւը։

—

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը մօտերս հովուական այցելութեան պիտի ելնէ դէպ ի Զօք Մէրզիմէն և անկէ ուրիշ թեմեր։

—

**Հայ-Հռովմէականք.**—Կ. Պատրիարք Տ. Պօղոս Ս. Սապպաղեան՝ ճիշդ անկէ 50 տարի առաջ ստացած է քահանայութեան կարգը։ Արդ, Ն. Սրբազնութեան քահանայութեան յիսնամեայ յոբելեանը պիտի կատարուի ի մօտոյ։ Այս մասին հարկ եղած կարգադրութիւնները ընելու համար՝ Հայ-Հռոմէական երևելիներէ բաղկացած մասնախումբ մը կազմուեցաւ, որ պիտի տնօրինէ հարկ եղածը։ Այս յոբելեանին առթիւ հաւաքուած գումարը պիտի նուիրուի ս. Յակոբեայ անկելանոցին։

— Հայ-Հռոմէական եկեղեցիէն Տ. Պօղոս վարդ. Դույումճեան, ընիկ Ատանացի և դաստիարակուած Հռոմի Լևոնեան վարժարանին մէջ, անցեալում Ատանայի Առաջնորդարանը դիմելով՝ խնդրած է որ ընդունուի Մայր Եկեղեցւոյ գիրկը։ Ն. Արժանապատուութիւնը ընդունուած է սիրայօժար և որոշուած է մօտ օրէն վեղարի օրհնութիւնը տալ իրեն։ Տ. Պօղոս վարդ. Առաջնորդական Տեղապահ կարգուեցաւ Ատանայի։

—

**Տասնեւհինգ հայ-բողոքականներու մայրենի եկեղեցւոյ ծոցը վերադառնալը.**—Եէնիճէէն կը գրեն մեզի.—Պրուսայի Առաջնորդական իրաւասութեան տակ գտնուող Եէնիճէ գիւղի բողոքական ազգայիններէն այր և կին, մօտաւորապէս տասնըհինգ հոգի, իրենց Մայրենի Եկեղեցւոյ ծոցը վերադարձած և հարկ եղած ձևակերպութիւնները կատարուած են։ Ասոնք առանց բանաւոր պատճառի ու առանց ճշմարիտ համոզման օտարացած ու խորթացած էին իրենց նախահարց Եկեղեցիէն. ուստի բնական էր որ տևական չըլլար այս ուծացումը ու օր մըն ալ վերջապէս վերադառնային իրենց մայրենի Եկեղեցիին ծոցը։ Նոյնպէս երկու Հայ-բողոքականներ ևս տրամադրութիւն յայտնած են վերադառնալ, մկրտուելով ու դրոշմի խորհուրդը ստանալով։

Երուսաղէմի մէջ. Երուսաղէմ Բեթղեհեմի մատրան մէջ Հայերը և Լատին Կաթոլիկները արիւնահեղ ընդհարում ունեցած են:

Անհաւատալի շարժառիթը: Այդ մատրան աջ թեւին մէջ Հայերը, Յոյները և Սուրիացիները իրենց խորանը ունին, ուր քահանաները որոշեալ ժամուն կու գան արարողութիւննին կատարել: Յունուար 9ին, ժամը երկուան 3ին կարգը Հայոցն էր: Եւ մինչ Հայերը աղօթքի կեցած էին, Լատինները թափօր կազմելով, Հայ քահանային այնքան մօտիկէն անցան որ արարողութիւնը խանգարեցին: Հայ վարդապետը խնդրեց որ քիչ մը սպասեն, մինչև արարողութիւնը վերջանայ. բայց Լատին քահանաները չուզեցին մտիկ ընել և իրենցները գրգռեցին Հայոց վրայ յարձակում ընելու: Ծեծկռուանքը ընդհանուր եղաւ: Շուտ մը Լատիններուն օգնութիւն հասաւ, որով կրցան Հայերը ծանր վիճակի մէջ դնել: Կռուողները իրարմէ զատելու համար տեղական իշխանութիւնը միջամտեց, և դանակով վիրաւորուած բաւական թուով հայեր վերցուց:

Այս չորրորդ անգամն է որ այսպիսի ծեծկռուանք տեղի կունենայ Հայերուն և Լատիններուն միջև:

---

Պոլսոյ թերթերի մէջ կարդում ենք, որ Մուշեղ եպիսկոպոսը «Հոգւոյն Սրբոյ, Ս. Աստուածածնի վերափոխման, Ս. Հաղորդութեան և այլ եկեղեցու հաւատալիքներուն և ծէսերուն դէմ մոլար վարդապետութիւններ» է հրատարակել: Կ. Պոլսի կրօնական ժողովը «միաձայն հաւանութեամբ» դատապարտելով նրա ընթացքը, պահանջել է յետ վերցնել իր գրածները:

Հետաքրքրական է անշուշտ թէ որո՞նք են Մուշեղ եպիսկոպոսի քարոզած մոլորութիւնները եկեղեցու վարդապետութեան դէմ. բայց դժուար է լրագրական տեղեկութիւնների հիման վրայ եզրակացութիւն հանել. այդ պատճառով մենք կսպասենք, մինչև Ազգիս ընդհանրական Հայրապետին պաշտօնական տեղեկութիւն տրուի Տաճկահայերին աղմկող հարցի մասին: Չենք հասկանում միայն, թէ ինչո՞ւ մինչև այժմ այդ տեղեկութիւնը չկայ Էջմիածնում:

*Արարատ ամսագրի խմբագրութեան.*

1884 *թուականին՝ սրբազան Սինոդի հրամանով, Պետերբուրգ դպրոցական գործով պատուիրակ գնացած լինելով, մի համառօտ հաշուետուութիւն էի գրած պատգամաւորութեանս վերաբերութեամբ, որպէս զի տպագրութեան յանձնուի։ Որովհետև այն ժամանակին թէ Ռուսահայոց և թէ Տաճկաստանի ազգային լրագրական հրատարակութեանց մէջ յարձակողական գրութիւններ յայտնուեցին իմ գործելու եղանակի անհարազատութեան մասին, ուստի այն գրքոյկը մի ընծայականով՝* 1885 *թուի յունիսի* 10*-ին, նուիրեցի ի Տէր հանգուցեալ բարեկիշատակ Գէորգ Եւանգուլեանցին, որ՝ իմ խնդրագրերի շարադրողը լինելով, ջերմեռանդ գործակից էր և մանրամասնօրէն ծանօթ կատարուած խրողութիւններին, ուրեմն և ձեռնհաս վկայել ճշմարտութեանը հրապարակախօս ձայնով։ Եւ որովհետև առանց հաւանութեան մեծաւորիս—Մակար արքեպիսկոպոսի, ոչինչ չէի համարձակիլ հրատարակել, վասնորոյ խոկութեամբ մատուցի նորան կարդալու և թոյլատրելու յանձնել մամուլի առանձին գրքուկով։ Լուսահոգի Հայրապետը վաղաժամ գտնելով նորա հրատարակութիւնն՝ պատուիրեց այդ գործն առժամանակ յետաձգել։ Արարատ ամսագրի մէջ դպրոցական խնդրոց մասին շատ անգամ յայտնուած են գրուածներ. դոյն փոքրիկ աշխատութիւնն այժմս յղելով խմբագրութեանդ՝ յարգոյաբար խնդրում եմ, եթէ յարմար կդատուի՝ բարեհաճէք հրատարակել նոյնութեամբ ընծայականին ի յարգանս յիշատակի խոհական հանգուցելոյն։*

**Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց.**

Ի 14 *փետրուարի* 1907 *ամի*
*ի Ս. Էջմիածին*

# ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

## Սուֆիաս Եպիսկոպոսի ի Սանկտ-Պետերբուրգ Հայոց դպրոցների մասին (1885 ամի).

(ՆՈՒԷՐ ՄԵԾԱՐԳՈՅ ԳԷՈՐԳ ԵԻԱՆԳՈՒԼԵԱՆՑԻՆ)*

*Մեծարգոյ բարեկամ.*

*Մեր ներկայ «Պատուիրակութիւն ի Սանկտ-Պետերբուրգ» հոգևոր դպրոցների մասին վերատառուած գրքոյկ նուիրում ենք Ձեր Յարգութեան անուան, ոչ իբրև ընծայաբերութեան արժանաւոր-պարգևողի և ընդունողի յատկութեանց վերաբերութեամբ-մէկ աշխատութիւն. այլ իբրև մեր անձին արդարացուցումն այն ամեն չարաբանութեանց դէմ, որոնք հրապարակներում բանիւ և գրով հրատարակուեցան։ Որովհետև Ձեզ առաւել՝ քան այլ ումեք, յայտնի են Բարձրագոյն Հայոց հոգևոր իշխանութեան քաղաքական վարչութեան հետ ունեցած գրագրութիւնք* 1884 *թուականի Փետրվարի* 16-*ին Բարձրագոյն Կայսերական հաճութեամբ հաստատուած դպրոցական հրահանգի գործադրութեան յետաձգելու մասին. Ուստի և Դուք նախ քան զամէն ունիք իրաւունք ձգելու մեզ վերայ կամ դատապարտութեան և անարգանաց քար, կամ մխիթարութեան և գովասանաց ծաղիկ.*

*Իրաւունք չհամարեցինք մեզ դպրոցական կառավարութեան պատճառաւ ի սկզբանէ անտի և այսր Գէորգ Դ. Վեհափառ Հայրապետի և Կովկասեան Փոխարքայութեան մէջ շարունակուած գրագրութեանց վերայ խօսել կամ տեղեկութիւնք աւանդել. դոքա վերապահուած են սրբազան Սինոդին՝ որ ի հարկաւոր դէպս զանց չէ առնում ըստ մարթելոյն հրատարակել։ Արձակուրդի ամիսներ են և մեք զՁեզ մատնացոյց ենք առնում հետաքրքիր հա-*

*սարակութեան առաջ իբրև ականատես վկայ նախանցեալ գործողութեանց։ Պարգևեն մեզ երկինք այն բարեբախտ օրն և ժամ, երբ յաղթական օրհնութեամբ բացուին Ազգային Հոգևոր դպրոցների դռներ առաւել դիւրատար պայմաններով, որպէս զի ի լուր հեռաւոր և մերձաւոր որդւոց հայութեան բռնադատուինք գոչել. «անգիտութեամբ սխալեցանք և երկչոտութեամբ փաղփաղեցինք»։*

**Սուքիաս Եպիսկոպոս.**

## Ա.

Մեզ վերայ մի մեծ պարտականութիւն և անխախուստ պատասխանատուութիւն կայ ինչպէս ուսումնարանական խնդրով զմեզ ի Սանկտ–Պետերբուրգ ուղարկող հոգևոր իշխանութեան յառաջ, նոյն և դպրոցների բուն սեփականատէր հայ ժողովրդեան դիմաց։ Այս սուրբ պարտականութիւն անտեսելը զմեզ ապագայից դատաստանով այնքան վնասապարտ ցոյց կտայ, որքան ազգային հոգւով դաստիարակութեան և ուսման խնդիրը կարևոր է հայ հասարակութեան որդւոց համար։ Սրբազան Սինոդին համառօտութեամբ յայտնած եմք իւր ժամանակին մեր առաքելութեան ապարդիւնաւորութեան մասին, այժմս դամք ծանուցանել բարեմիտ ժողովրդեան դպրոցական խնդրոյն ամէն մանրամասնութիւններ, որոնք անծանօթ մնալով չարերին դայթակղութեան առիթ դարձրած են մեր հաւատարմութեան վերայ վստահութիւնն։ Որպէս զի ընթերցողք մեր անցեալ և վերջին ընթացից և գործողութեան մասին որոշ գաղափար կազմեն, այս տեղ իսկութեամբ մէջ ենք բերում մեր յանուն Սինոդին ուղղած ի 20 Յուլիսի 1883 ամի ընդ համարաւ 96 յայտարարութիւնը։

«Ի մանաւոր հաւաստի լրոյ տեղեկացայ, զի քաղա-
«քական Բարձրագոյն իշխանութիւնն ի վերջին աւուրս
«գլխաւորաբար արծարծեալ է զխնդիր կառավարութեան
«ազգային հոգևոր դպրոցաց։ Որովհետև այս կենսական
«գործ միմիայն երաշխաւորէ զգոյութիւն հայոց եկեղեց-
«ւոյ և ազգութեան ի Ռուսաստան, և զարդիս չունի զբա-
«րոյական գլուխ եկեղեցւոյն Հայաստանեայց, ուստի ես
«ամենախոնարհաբար՝ իբրև մի ոք օգնական կաթողիկոսի
«Հայոց ի գործ կառավարութեան հոգևոր դպրոցաց, հայ-
«ցեմ՝ զայդ խնդիր հաղորդել համայն վիճակաւորաց ազ-
«գին, և ապա խորհրդով նոցին պատասխանի առնել որոց
«արժանն է, եթէ միայն սահպողական է. իսկ թէ ոչ յե-

«տաճգել ցդուժարումն ազգային ժողովոյ ընտրութեան «Հայրապետի, կամ ցնոյն իսկ հաստատութիւնն ծայրա«գոյն Պատրիարքի»։

Մէջ ենք բերում իսկութեամբ և մէկ քանի նախադասութիւնք մեր յանուն Գերապատիւ Ներսէս սրբազան եպիսկոպոսի ուղղած յ2-ն ց30-ն Հոկտեմբերի և ի 11-ն Նոյեմբերի 1884 ամի նամակներից։

«Սրբազան եղբայր. դպրոցների գործն օր ընդ օր «ծանրանում է։ Անդադար ինձանից պահանջում են գրով «ժողովրդական դպրոցների արքունի տեսուչները, ծխա«կան վարժոցների մէջ ընդունել այն եղանակներն՝ որոնք «որոշուած են տարւոյս Փետրուարի 16-ին Բարձրագոյն «հաստատուած կանոնադրութեան մէջ։ Մէկի համար ար«դէն Սեպտեմբերի 11-ին համարաւ 268, յայտնեցի սըր«բազան Սինոդին. իսկ միւսը ստացայ այսօր, որոյ մասին «դարձեալ նոյն ճանապարհն, այսինքն պահպանողական «դիրք, պէտք է բռնեմ։ Զգիտեմ, Սրբազան Սինոդական«ներ ի՞նչ կարծիքի են, և ի՞նչ են կամենում առնել ի «խաղաղութիւն սրտի հայազգի ժողովրդեան։ Ցաւալին «այն է, որ այսպիսի ժամանակ մեր աշխարհական անհե«ռատես հոգաբարձուք և հասարակութիւնք՝ անհանգիստ «աղաղակելով արտաքին միջամտութեան տեղիք են տա«լիս, և կարծես թէ՝ հրաւիրում են իրենց ձեռքից այդ «ուսումնական հաստատութեանց կառավարութեան գոր«ծը յետ առնել։

«Ի դէպ, դիցուք պարոն Աբգար Յովհաննէսեանց կար«դարանայ այն մասին՝ որ Արծրունովի Քարվանսարան «ընկերովի չգնուեց, և սուրբ Էջմիածնի ճեմարանին իբրև «ապահովութիւն չյանձնուեց. ըստ որում Ներսէսը կա«թողիկոս չհաստատուեց, որոյ ի շնորհս միայն ճեմարանը «պիտի ապրէր. այժմ նա ի՞նչ է ասում ազգային դըպ«րոցների վերաբերութեամբ. չէ՞ որ ձայն էր տարածել «թէ՝ Տփխիսում այդ մասին ազգասէրները գործում են «և յատակագիծ են պատրաստում։ Լուրջ խօսենք. Սինո«դի անդամք քաջութիւն ունի՞ն մէկ գեղեցիկ առաւօտ

«բոլորն ի միասին առանձին գրուած հրաժարագիր դնեն
«ատենի կարմիր չուխայի վերայ և ասեն. մենք այլ ևս
«Սինոդի անդամք չենք, և չենք կամենում գործել իբրև
«ի կողմանէ Կաթողիկոսի, երբ որ խստագոյն պահանջ
«լինի դպրոցների համար ծրագրուած կանոնադրութիւնն
«ընդունելու մասին։ Կարծեմ թէ՝ ոչ է պատասխանն,
«ուրեմն ինչու համար է տարապայման լռութիւնն. ան-
«շուշտ պէտք է պատասխանել, որ դպրոցական խնդիրը
«զուտ հոգևոր գործ է, ինչպէս և իրենցում նոյնն է հո-
«գևոր վարժարանների կառավարութիւն. մեզ համար
«ինչու այլակերպ պէտք է լինի»։

«Այսպիսի խառն ժամանակ՝ ես կարծում եմ, շատ
«մեծ խոհեմութիւն կլինի՝ որ Սինոդն ընդհանրապէս
«կարգադրէ դպրոցական բոլոր գումարները հոգևոր իշ-
«խանութեան ձեռք ժողովել և հոգաբարձուների ամսէ
«ամիս տուած ցուցակին համաձայն գումար բաց թողնել
«վարժարանների ծախուց համար հոգևոր կառավարու-
«թիւններից, Կոնսիստորիայներից և բարեկարգութիւն-
«ներից։ Աստրախանի դպրոցների գումարները մօտ 30,000՝
«հանգուցեալ Գէորգ Արքեպիսկոպոսի խնդրանօք և Կա-
«թողիկոսի որոշմամբ Վիճակային Կոնսիստորիայումն է
«եղել պահպանուած, պատճառ բերելով հոգաբարձու-
«ների անյուսալի անձինք լինելն։ Աւանց այսպիսի վտանգ-
«ների նախատեսութեան՝ տարւոյս սկզբներն ես Կոն-
«սիստորիային պատուիրեցի յանձնել հոգաբարձուաց այդ
«գումարներ. այսպիսի գեղեցիկ խորհրդով, որ երբ ժո-
«ղովուրդ և հոգևոր իշխանութիւն ազգի երկսեռ զաւա-
«կաց կրթութիւն նոցա են հաւատում, որ հազար անգամ
«առաւել է քան միլիոնաւոր գումարներ, պէտք է և
«դպրոցական դրամները նոցա ձեռք յանձնեն։ Բայց շատ
«սխալեցայ, ըստ որում հոգևոր իշխանութիւնն երբ և
«իցէ դիմադրելով արտաքին միջամտութեան՝ կարող էր
«իւր հոգևոր ատեաններին դրել՝ դադարեցրէք ուսում-
«նարաններին գումար տալը. թող քաղաքական իշխա-
«նութիւնը պահպանէ այդ իւր ձեռք ձգած դպրոցներ

«իրեն միջոցներով, եկեղեցական գումարները հօգուտ
«իշխանութեան կ՚պատկանին։»....

«Սրբազան Սինոդի առ կառավարչապետ ուսումնա-
«րանների մասին գրածը արդարութիւն և իր նուիրական
«պարտքն են. Թէև յոյս չկայ յաջողութեան, բայց մինչև
«ընտրական գործողութեանց ժամանակ կարելին է քաշ-
«տալ։ Եթէ այդ միջնորդութիւնն ընդունելութիւն չգտնէ,
«կարծում եմ, որ մարդ ուղարկելն եւ սպասուած օգուտը
«չի ունենալ և Մակար Սրբազան դժուար թէ յանձն
«առնէ գնալ։ Այս հարցի մէջ Սինոդն ինձ ինչ որ հրա-
«մայէ, ընդունելի է. բայց առանց կառավարչապետի գի-
«տութեան և տեսակցութեան ուղղակի Պետերբուրգ գնալը
«սուր բնաւորութիւն կստանայ։ Շատ ուրախ եմ, որ ես
«սխալ կարծիք ունէի Սրբազան Սինոդի սրբազնագոյն
«անդամոց քաջասրտութեան վերայ. մեղայ յերկինս և
«առաջի ազգասիրութեան նոցա. ամեն ոք նոցանից այս
«սուրբ գործում ինձ համար նուիրական է և յարգելի։
«Երանի՜ թէ ցընտրութիւն Կաթողիկոսի այնպիսի կտրուկ
«բնաւորութիւն ստանար այս խնդիր՝ որոյ մէջ ամեն հայ
«եպիսկոպոս—Սինոդի անդամք և առաջնորդք—ցոյց տար
«իւր Եղիայի նախանձախնդրութիւն, որով կառավարու-
«թիւնը համոզուէր թէ՝ արտաքին հանգամանքների ամ-
«գնութիւն միշտ կարող են Հայոց եկեղեցւոյ շրջապարըս-
«պին մօտեցած ժամանակ Ղեւոնդներ տեսնել անխռով,
«անվեհեր սրտիւք դիմադրաւ հանդիսացողներ։ Աստուած-
«ի բարձանց հովանաւորէ չորս հազարեան ամաց ժամա-
«նակի չարատանջ ազգիս իրաւանց։ Անդադար դիմում
«են ինձ ժողովրդական դպրոցների արքունի տեսուչք և
«պահանջում, որ վարժարանների մէջ ընդունիմ այն
«հրատարակուած հրահանգները. մինչ պատասխանս այս
«է, որ ես դպրոցների բացարձակ տէրը չեմ։»...

«Գերապատիւ Սրբազան եղբայր։ յԵրեկեան օրը ստա-
«ցայ Ձեր Հոկտեմբերի 27 թուով արձակած նամակն և
«առանց ժամանակ կորցնելու պատասխանում եմ Ձեզ
«գործոյն կարեւորութեանը նայելով՝ որոյ մասին Սրբազան

«Սինոդ շատ վաղուց հեռանկատ լինելով՝ պէտք էր որ
«առաջնորդներին ժամանակից անէր այդ գործը վճռելում.
«ինչպէս ես առ Սինոդն անցեալ տարուայ յունիս ամսոյ
«20-ին թուահամարաւ 96 յայտարարութեամբ խնդրած
«էի։ Ի՞նչ և իցէ «Լաւ է անագան քան ոչ երբէք» առա-
«ծին հետեւելու է. ահա թէ ինչ պէտք է անէք Դուք.
«բոլորեքեան միացած։ Ես առաւել խոհական եմ համա-
«րում՝ որ Սինոդը կրկնէ իւր վերջին գրութիւնն։ Շատ
«խելօք է այն դիտումն թէ՝ որքան կարելին է, գործել
«պէտք է, փախուստ տալ հարկաւոր չէ։ Սակայն եթէ
«չկամենաք կրկնել Ձեր գրածն, առաւել լաւ էր իբրև
«վսեմ խնդիր՝ վիճակաւորներ և վանահայրերը հրաւիրել
«ի խորհուրդ, ի թիւս որոց և Էջմիածնի միաբանութեան
«անդամներից մէկ քանիսը, յաջորդներն անգամ. այս
«եղանակ առաւել պատկառելի և ընդհանուր հայ հոգե-
«ւորականութեան կերպարանք կստանայր։ Վերջապէս,
«եթէ Սինոդի կողմանէ հաստատուն գիտակցութիւն լինի
«և կարողանայ գործը յետաձգել յընտրութիւն և հաս-
«տատութիւն Կաթողիկոսի, այն ժամանակ մեծ փոփո-
«խութիւնք կարող են մտցնել Նախարարական ժողովով
«պատրաստած հրահանգի մէջ, որ բոլորովին բառնում
«է հոգևոր իշխանութեան իրաւունքն։ Ո՛չ մի կարծեաց
«բաժանմունքից երկիւղ անելու չէ. այդ ամէն ժամանակ,
«ամէն դէպքում, ամէն ազգաց մէջ կատարուում է. բա-
«ւական է միայն մի ձայնի առաւելութիւն և խնդիրը
«վաստակուած է յաջողութեամբ» *)։

*) Ճշմարտութիւնը հարկադրում է մեզ՝ որ ընդօրինակենք այստեղ և երկու հատուած սրբազան Ներսէս եպիսկոպոսի առ մեզ ուղղած յ8 և ի 16 Նոյեմբերի 1884 թուականի գրութիւններից՝ որոնք դպրոցական հարցի մասին յետագայքն են պատմում: «Ուսումնարանների մասին այստեղից Մեսրովպ «եպիսկոպոսին ուղարկեցինք Տփխիս խորհրդակցելու բանագէտ «անձանց հետ և նոցա խորհրդով գործենք ինչ որ հարկաւոր է: «Այն տեղից գրել էին մի բան՝ որը և ուղարկեցինք բոլոր ան- «դամոց ստորագրութեամբ Դոնդուկովին, յորում բացարձակ

*Մէջ բերենք այս տեղ և մեր երկու պաշտօնական գրութեանց պատճէնները յանուն վերատեսչաց ժողովրդական դպրոցների Բաքուայ նահանգի—Դաղստանու գաւառի և Կուպանի շրջանի ի 28 մայիսի և ի 11 սեպտեմբերի 1884 ամի թուահամարօք 127 և 267, որոնք ուղարկելով առ մեզ Բարձրագոյն կամօք հաստատուած հրահանգները՝ պահանջում էին նոցա գործադրութեան, որպէս զի մեր բնաւորութիւնը վարժարանական յեղափոխութեան գործում առաւել ևս բացայայտ լինի։*

---

«առում ենք, որովհետև Կաթուղիկոսի իրաւունքն է, մենք չենք
«կարող կատարել կառավարութեանդ հրամանը։ Դեռ ևս այս
«թղթի պատասխանը ստացած չենք, տեսնենք ինչ կգրեն։
«Մտադիր ենք՝ որ եթէ այլ ևս ստիպեն, մարդ ուղարկենք Մի-
«նիստրին. այս մասին մեզ խորհուրդ են տալիս Տփխիսից, որ
«եթէ մարդ հարկաւոր ուղարկել՝ Մակար սրբազանին դիմել։
«Բայց ես այս խորհրդին չհամաձայնեցի այն պատճառաւ, որ
«եթէ չյաջողուի՝ պիտի զանազան չարաբանութիւններ անեն
«նորա դէմ. հարկաւոր է նորան ծանր գիրքի մէջ պահել։»...
«Ուսումնարանաց հարցի մասին արդէն գրած եմ սրբութեանդ
«համառօտ կերպով՝ բայց այժմ լրացնելով այն թերութիւնները
«ուղարկում եմ Սինոդի առ գլխաւոր կառավարութիւնն գրած
«գրութեան պատճէնը՝ որ Մեսրովբ եպիսկոպոսին ուղարկեցինք
«Տփխիս խորհրդակցելու բանագէտ անձանց հետ և գրել տալով
«այն տեղ բերեց մեզ, որ արդէն ուղարկեցինք, որին տակաւին
«չէ հետևած՝ որ և է մի պատասխան։—Կախալուկը եթէ առէք,
«Անդամք սիրտ և քաջութիւն չունին իրանց հրաժարագրերն
«տնելու Սինոդի Ատենի չուխայի վերայ, Անդամք հենց այդ
«գիրը գրելու փոխարէն՝ այժմէն իսկ կամենում էին այդ անել.
«բայց այս անգամ խոհեմութիւն համարուեց, դեռ ևս այսպէս
«գրել։ Եւ ինչպէս չանեն՝ քանի որ կենաց և մահու խնդիր է
«այս գործը մեզ համար, և քանի որ մեր իրաւունքից շատ
«բարձր է այդ կանոնների կատարումն տալը։ Սինոդը մտադիր
«է՝ եթէ այս մեր գրած գրութեանը հակառակ պատասխան
«ստանանք, մի բարձրաստիճան հոգևորական ուղարկէ Պետեր-
«բուրգ Թագաւոր կայսեր ողորմածութիւնը խնդրելու։ Այս
«մասին թէ և Տփխիսից մեզ խորհուրդ են տալիս թէ՝ եթէ երբ
«և իցէ հարկաւորուի մարդ ուղարկել Պետերբուրգ, ոչ ոքի չէ

«Նորին գերազանցութեան, Տեառն վերատեսչի ժո-
«ղովրդական դպրոցաց Բաքուայ նահանգի և Դաղստանու
«գաւառի։ Առ հաղորդագրութիւն Ձերդ գերազանցու-
«թեան ի 24 ապրիլի սոյն ամի համարաւ 314, ունիմ շնորհ
«հաղորդել Ձեզ, ողորմած Տէր, թէ տնօրէնութիւնք ամենա-
«ողորմածագոյն կառավարութեան Ռուսիոյ, վերաբերեալք
«վարչութեան Հայոց–Գրիգորեան եկեղեցեաց և դպրոցաց,
«հաղորդին Հայոց Լուսաւորչական Սինոդի Սրբոյ Էջմիած-
«նի, իսկ ի ձեռն վերջնոյս հրամանագրի վիճակային իշ-
«խանութեանց յանձների կատարումն։ Եւ որովհետև ըստ
«յիշատակեալ գործոյ չէ հետևեալ յանուն իմ ոչ մի
«տնօրէնութիւն ցայսօր, մինչև ցստացումն նոյնպիսւոյ ի
«Ծայրագոյն Հոգևոր իշխանութենէ, յիմոյս կողմանէ չկա-
«րեմ առնել ոչ մի տնօրէնութիւն»։

---

«կարելի հաւատալ այդ մեծ գործը, այլ միայն Մակար սրբա-
«զանին, որ իւր խոհեմութեամբ կարող է գործը չփչացնել»,
«բայց մեր (այսինքն իմ, Մամբրէ վարդապետի և քահանաների)
«կարծիքն այն է՝ որ այդ գործը նորան չտալ այժմ. վասն զի
«նախ որ ինքն դժուար թէ յանձն առնի, երկրորդ՝ որ եթէ
«անյաջողութիւն գտնէ՝ պակասութիւն է նորա անուան,
«և ո՞ գիտէ մեր հողմարածեանները ի՛նչ ինչ զրպարտական
«բամբասանքներ այսուհետև չեն յօրինիլ նորա մասին: Դեռ մի
«անգամ թագաւորութեան հանգիսին ներկայ գտնուեցաւ՝—
«հազար տեսակ զրպարտութիւններ արեցին, ռամիկ ժողովուրդը
«գրգռելու և ժողովրդի աչքից հանելու համար: Այսպէս էլ ես
«գրեցի Տփլիսի Արշակին՝ որ բարեկամներին յայտնէ. չգիտեմ,
«Ձեր կարծիքն ի՛նչ է այս մասին: Իսկ իմ սեփական կարծիքս
«այն է այս գործի վերաբերութեամբ՝ որ եթէ հարկաւոր լինի
«մարդ ուղարկելու, Ձեզ միայն հաւատալ այս մեծ գործը՝ որ
«յուսով եմ սրբազան Հօր խորհրդով Ձեր վարմունքը այս մա-
«սին մի լաւ յաջողութեան կառաջնորդէ մեր ուսումնարա-
«նական գործը և միանգամայն վերջ կտրուի բոլոր այդ մասին
«դրադրութեանցը»: Դպրոցական գործին վերաբերուած բաւա-
կանին նամակներ կան մեզ մօտ զանազան տեղերից գրուած.
սակայն նոցա անփոփոխումն ժամանակի յաջողութեանց կարօ-
տելով՝ առ ժամս զանց ենք առնում:

«Պարոն Տեսչի ժողովրդական վարժարանաց Կուպանու «շրջանի։ Առ հաղորդագրութիւն Ձեր, ի 4-էն սեպտեմ- «բերի ամսոյս համարաւ 1313, պատիւ ունիմ ծանու- «ցանել Ձեզ, ողորմած Տէր, թէ ի պատճառս չստանալոյ «իմ մինչև ցայսօր ի Սինոդէն սրբոյ Էջմիածնի զկար- «գադրութիւն յաղագս ի կատար ածելոյ զԲարձրագոյն «հաստատեալ ի 16 փետրվարի այսր ամի կանոնս վասն եկե- «ղեցական Հայոց դպրոցաց, ես չհամարիմ ինձ իրաւունս «անընդմիջաբար առնել ըստ այսմ առարկայի զորպիսի և «իցէ կառավարութիւն. ուստի այսօր իսկ ընդ համարաւ «268, ես ի վերայ հիման Ձերդ գրութեան դիմեցի առա- «ջարկութեամբ ի Սինոդն սրբոյ Էջմիածնի»։

(Շարունակելի)

# ԳՐԱԿԱՆ

## ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

### Գլ. Ը.

Երբ պաստոր Մէկոււէլ ու Գրէյ ժողովարանից տուն էին վերադառնում, արդէն բաւական ուշ էր, մօտ գիշերուայ ժամի 10—11-ը։ Փողոցները լիքն էին ամբոխով։ Մայթերի վերայ մանրավաճառները ծախում էին ամեն տեսակ էժանագին ապրանքներ մեծ խանութներից մնացած։ Ամենուրեք լսւում էին աղմուկ, աղաղակ, հարբած մարդկանց երգերը։ Համարեա թէ ամեն մի տան մէջ գինետուն, գարեջրատուն, կամ մի այլ աւելի կասկածելի նկուղ կար։ Ուղիղ Անկինի բնակիչները խումբ խումբ մտնում ու դուրս էին գալիս այդ տե-

ղերը, ծերեր և երիտասարդներ, տղամարդիկ ու կա-
նայք. Նրանց մէջ երևում էին նաև պատանիներ և նոյն
իսկ երեխաներ։

— Այս ամէնը ցաւալի և սոսկալի է,— ասաց Մէկտուէլ
Գրէյին,— և ինչպէս այս ամէնը մի կենդանի կշտամբանք,
մշտական յանդիմանութիւն է դէպի այդ թշուառների
ամենաէական կարիքներն ունեցած մեր յանցաւոր ան-
տարբերութեան նկատմամբ։

Մենք ունինք մեզ համար թանգարաններ, համերգ-
ներ, ժողովարան, թատրոն, գրադարան, ամեն տեսակ
գիտական, գեղարուեստական, գրական և այլ ընկերու-
թիւններ ու համախմբումներ, իսկ ժողովրդին թողել ենք
միմիայն գինետունները և դեռ պատահած դէպքում
վրդովւում ենք, որ ժողովուրդը փչացած է, հարբեցող և
երբեմն վայրենի, ինչպէս գազան։

Դուք իրաւացի էք, թանկագին պաստոր,— ասաց
Գրէյ։— Ստոր դասակարգերի դրութիւնը հանգստեան և
խելացի զուարճութեանց տեսակէտից շատ ցաւալի է,
եթէ կամենում էք, ես կասեմ աւելին. շատ սարսափելի
է։ Այդ խեղճ թշուառները գինետան զոհ են դարձած։
Ես, որպէս անդամ Սպիտակ Խաչի, ուսումնասիրել եմ
երկրի դրութիւնը և համոզւում եմ, թէ ինչու Ուղիղ
Անկլինի բնակիչները իրենց արբեցութեան են տուել։
Նրանք չեն կարող չխմել։ Նախ և առաջ նրանք բոլորն էլ
շատ վատ են կերակրւում։ Նրանց կազմուածքը քայ-
քայուած է, ուստի և գրգիռների պէտք է զգում։
Այդպիսի գրգռումն ամենից հեշտ ձեռք է բերւում որոշ
չափ ալկոհոլի գործածութեամբ, որ այդ դէպքում, հա-
մարեա թէ, անհրաժեշտ է։ Նա սնունդ չի տալիս, բայց
գրգռում է յոգնած նեարդերը և խմողը կարծում է թէ
դրանով աւելանում են իր ուժերը։

Պէտք է հնարաւորութիւն տալ այդ թշուառներին
աւելի լաւ կերակրուելու, ճաշարաններ բաց անել, որտեղ
ցանկացողները էժան գնով կարողանային ստանալ պարզ,
բայց թարմ, առողջարար ու սննդարար կերակուր։

Երկրորդ, անհրաժեշտ է բանուոր մարդկանց համար աւելի լաւ բնակարաններ հայթհայթել։ Նրանց այժմեան բնակարանները ուղղակի դէպի գինետուն են մղում խեղճերին։ Բաւական է մի տասնեակ այդպիսի բնակարաններ աչքի անցնել համոզուելու համար, որ նրանց բնակիչները չեն կարող չգայթակղուել գինետնով կամ մի այլ խմիչքեղէնի խանութով։ Սենեակները փոքր են, լիքը լցուած, օդը խեղդող, կեղտոտ։ Մի սենեակում, որտեղ ամենաշատը կարող էին տեղաւորուել երկու երեք հոգի, ապրում են վեց, ութ, երբեմն տասը հոգի։ Պարզ է, որ նրանք կարող են գնալ իրենց որջը միմիայն քնելու համար. իսկ ազատ ժամերը նրանք ստիպուած են փողոցում անցկացնելու։ Տօն օրերին դիտեցէք բանուորական թաղերի փողոցները. նրանք լի են ամբոխով։ Մարդիկը տեղ չունեին իրենց ազատ ժամանակը անցկացնելու, նրանք հնարաւորութիւն չունեին տանը մնալու։ Իսկ փողոցում, հարկաւ, չի կարելի ամբողջ օրով կամ ժամերով մնալ. պէտք է մի տեղ մտնել մի քիչ նստել, հանգստանալ, տաքանալ։ Ահա այստեղ գինետունը ներկայացնում է իբրև մի անդիմադրելի գայթակղութիւն։ Այնտեղ ընդարձակ է. գրաւիչ և ուրախ. նուագում է օրգանը կամ գրամաֆոնը։ Ինչպէս չգայթակղուել։ Իւրաքանչիւր մարդ հանգստանալ է ցանկանում իւր խղճուկ ու ճնշող կեանքի իրականութիւնից, ցանկանում է գէթ մի վայրկեան վայելել եթէ ոչ իսկական բախտաւորութիւն, գոնէ նրա խաբկանքը։

Պէտք է ուղիղ Անկինի բնակիչների և նոցա նմանների համար հայթայթել հանգստանալու տեղեր, ուր նրանք կարողանային լի օրերը մի երկու ժամ և տօներին ամբողջ օրը օգտակար և մարդավայել ժամանակ անցկացնել։ Բանուորական բազմաշատ թաղերի զանազան ծայրերում պէտք է ունենալ դահլիճներ ամեն տեսակ ընթերցանութեան և դասախօսութեան համար, փոքրիկ գրադարաններ, երգեցողութեան, երաժշտութեան մարմնամարզութեան, բացատրութեան և մտքերի փոխանա-

կուլթեան համար յարմարաւոր տեղեր։ Երաշխաւորում եմ, որ այդպիսի տեղերը երբէք դատարկ չէին մնալ։

Երբ մարդուն խոնաւ փոսի տեղ մաքուր անկողին և շան բնի տեղ իսկ բնակարան են առաջարկում, հազիւ կարելի լինի վիճել թէ ընդհանուր ընտրութիւնը որ կողմը կըլինի։ Հաւատացէք, մարդիկ միշտ և ամենուրեք մարդիկ են։ Եթէ մենք՝ մեծ թաղերի բնակիչներս լոյս ենք փնտռում և նեղւում ենք մեր կեանքի կոպտութիւնից, հետևապէս Ուղիղ Անկլինի բնակիչներն էլ նոյնքան հաճութեամբ կը կերպարանափոխէին իրենց կեանքը դէպի լաւը, եթէ կարողանային և հասկանային թէ ինչպէս պէտք է անել այդ։

Երբ մարդ խեղդւում է և չի կարողանում լողանալով ափը դուրս գալ, մօտիկ գտնուողների պարտքն է օգնել նրան։ Ներկայ դէպքում Ուղիղ Անկլինի բնակիչների մօտ գտնուողները մենք ենք և մեր պարտքն է օգնութեան հասնել նրանց։ Եւ տեսէք թէ որքան ծարաւի են նրանք սիրոյ խօսքերի ու կարեկցութեան։ Ի՜նչ հրաշալի տեսարանի ներկայ եղանք այսօր ժողովարանում։ Հէնց որ փոքր ինչ ջերմութիւն զգացուեցաւ «Քարոզում» իսկոյն և եթ լսուեցան օգնութեան կանչող աղաղակներ, մարդիկ դէպի լոյսը դարձրին իրենց երեսը։

—Այո, այսօրուայ զգացածս կեանքիս լաւագոյն րոպէներից մէկն էր,—մտախոհ ասաց Մէկոուէլ. բայց ինչպէս պէտք է շարժել հասարակութեան ունեցած անտարբերութիւնը դէպի այդ թշուառ ամբոխի ախտերն ու ցաւերը, որոնց տակ հեծում են հազարաւոր ու միլիոնաւոր մարդիկ։

—Պէտք է գործը սկսել բարձր դասակարգից—ասաց Գրէյ. այստեղ ինտելիգենտ դասակարգը պէտք է յիշէ Փրկչի խօսքերը. «բժիշկ, բժշկիր քո անձը»։ Ես յիշում եմ մի բնորոշ տեսարան։ Մի անգամ ամառը մի մեծ գործարանատէր հրաւիրեց ինձ ճաշի իր ամարանոցը։ Ամարանոցը շինուած էր մի հրաշալի պուրակում ծովի ափին։ Բոլորս ութ հոգի էինք. տանտէրը, երկու ուսուց-

չապետ, մի պարլամենտի անդամ, պաստոր, երիտասարդ-սկսնակ գրող, յայտնի բժիշկ և ես։ Ճաշից յետոյ մենք դուրս եկանք պարտէզ. առաջարկեցին սուրճ և լիկեօրներ։ Ամենքը յարմարաւոր կերպով տեղաւորուեցան և ծխողներին սիգար առաջարկուեցաւ։ Սկսուեցաւ լուրջ խօսակցութիւն։ Խօսում էին ժողովրդի, բանուոր դասակարգի մասին։

Պէտք է մաքրել մեծ քաղաքների ծայրերում բուն դրած ապականուած թաղերը,—ասում էր յայտնի բժիշկը վայելելով նուրբ բաժակից մի ինչ որ անուշահոտ կանաչ գոյնի լիկեօր,—պէտք է մաքրել ֆիզիքապէս բնակարանները և բարոյապէս՝ բնակիչներին։

—Իսկ որ գլխաւորն է պէտք է նրանց հեռու պահել խմելուց,—լրացրեց տանտէրը՝ մի բաժակ կարմիր գինի լցնելով իւր համար։—Դուք չէք կարող երևակայել թէ որքան մեծ չարիք է բանուորի արբեցութիւնը արդիւնաբերութեան համար։

Պարլամենտի անդամը մի լաւ բաժին կօնեակ լցնելով սուրճի մէջ, դարձաւ դէպի պաստորը.

—Այստեղ բոլոր յոյսը բարոյական ազդեցութեան, ձեր հովուական խօսքի վերայ պէտք է դնել։

Այդ խօսքերը ծիծաղելի թուացին ինձ։ Պարլամենտի անդամը հարցրեց.

—Դուք կասկածո՞ւմ էք. դուք կարծում էք ժողովրդի նկատմամբ ոչինչ չի՞ կարելի անել, որ արբեցութիւնը մի անջնջելի չարի՞ք է։

Ոչ, պատասխանեցի,—ես հաւատացած եմ, որ կարելի է անել և շատ մեծ չափով, բայց ոչ մեզ նմանների ձեռքով։

—Ինչո՞ւ։

—Նրա համար, որ ահա մենք այստեղ ութ հոգի նստած ենք, իսկ մեր առաջ, եթէ նեղութիւն կրէք համրելու, դրուած են տասն և չորս հատ այլ և այլ տեսակ խմիչքների շշեր։ Իսկ ճաշի ժամանակ յիսունից ոչ պակաս զանազան տեսակ օղի և գինու շշեր կային դրուած

մեր առաջ։ Համաձայնուեցէք, որ զգաստութեան քարոզիչների համար այս այնքան էլ պատշաճ դրութիւն չէ, կամ աւելի ճիշտն ասած, մենք այս տեսակ պատրաստութեամբ անպէտք ենք արբեցութեան դէմ կռուելու համար։

—Եւ այսպիսի տեսարաններ, թանկագին Մէկուէլ, ասաց Գրէյը՝ դառնալով իր հիմնական մտքին, բացառիկ երեւոյթներ չեն։

Բերեմ մի օրինակ։ 1900 թուին Բերլինում կայացած բժիշկների միջազգային համաժողովի առթիւ քաղաքը ճաշ սարքեց։ Այդ ճաշի ժամանակ այնքան շամպայն, գինի, գարեջուր և կոնեակ էր գործածուել, որ չար լեզուների ասելով, իրենք բժիշկները ճաշից յետոյ բժշկական օգնութեան մեծ կարիք էին զգում։

Պարզ ասելով, աշխարհի ամեն ծայրերից հաւաքուած գիտնական մարդկանց, հանդիսաւոր ճաշից յետոյ, հարկադրուած էին քաշ տալ իրենց տները սաստիկ հարբած դրութեան մէջ, ինչպէս Ուղիղ Անկիւնի բնակիչներին քաշ են տալիս գինետուններից։

Այս օրինակը մի տխուր բացառութիւն չէ։ Լրագիրները վերջերս հաղորդեցին մի ուրիշ նման փաստ։ Մոսկուայում բժիշկների համառուսական ժողով կար, այդտեղ հարց է բարձրանում ժողովրդի արբեցութեան դէմ կռուելու միջոցների մասին։ Վիճաբանութիւնների ժամանակ նրանցից մէկը առաջարկում է խնդրագրով դիմել կառավարութեանը, որպէս զի օրէնսդրական ճանապարհով պարտադիր և ստիպողական դարձնուի ալկոհոլիստների բժշկութիւնը։ Շատերը հաւանութիւն են տալիս այդ ծրագրին։ Այն ժամանակ վեր է կենում մի գաւառական բժիշկ և ասում.

—Եթէ այդ օրէնքը հաստատուի և այս րոպէիս գործադրուի, ես վախենում եմ, որ մեզնից շատերը, փոխանակ տուն վերադառնալու, իրանք հենց առաջինը հիւանդանոց տարուին բժշկուելու համար։ Ժողովը ամօ-

թահար եղաւ և պարտադիր բժշկութեան նախագիծը մի կողմ դրուեցաւ։

—Մի ծանօթ տիկին, շարունակեց Գրէյ,—անկեղծ կերպով ասում էր ինձ մի անգամ, թէ նա չթողեց իւր ամուսնուն գնալ Փարիզ գիտնականների միջազգային համաժողովին, երկիւղ կրելով «միջազգային» կոնծաբանութիւնից։

—Նրանք այնտեղ աւելի խմում են, քան թէ գործ կատարում,—ասում էր տիկինը։—Չիկագոյի վերջին համաժողովից իմ ամուսինը վերադարձաւ բոլորովին հիւանդ։

Եթէ այսպէս խմում են գիտնական լուսատուները հանդիսաւոր ժողովներում, ինչ կարելի է ասել վաճառականների, զինուորականների, արտիստների ժողովների մասին։ Ամենուրեք խմում, խմում ու խմում են։ Վերառէք բոլոր յոբելեանները, արձանների և նոր հիմնարկութիւնների բացումները, ուսումնական հաստատութիւնների տարեդարձները. բոլորն էլ վերջի վերջոյ կոնծաբանութեան են յանգում։

Նորերս կարդացի լրագրներում, թէ ինչպէս համալսարանական մի տօնի առթիւ տրուած ընթրիքին, որտեղ ուսուցչապետներն և ուսանողները խմբուած էին ի միասին, երիտասարդութիւնը խնդրում է մի երիտասարդ գիտնականի ճառախօսել, որ և ասում է մօտաւորապէս հետևեալը.

—Պարոններ, ես առհասարակ չեմ խմում, բայց այսօր, մեզ համար այս թանկագին տօնին ես խմում եմ ու խմում։ Խմում եմ համալսարանի ծաղկման համար, խմում եմ նրա սաների համար, խմում եմ նրա աշխատաւորների համար, խմում եմ գիտութեան ու յառաջադիմութեան համար։ Խմենք մի անգամ ևս ի միասին այդ բոլորի համար։

Ես կարծում եմ, որ այդ նկատողութիւնը լրագրական մի տափակ հանաք էր։ Եթէ այդպիսի մի դէպք

յիրաւի տեղի է ունեցել և եթէ ես լինէի ճառախօս ուսուցչապետի տեղ, ուրիշ կերպ կը խօսէի։

—Սիրելի պատանիներ,—կասէի ես նրանց.—մենք ամենքս էլ մարդ ենք և ինչ որ մարդկային է մեզնից հեռու չէ։ Ամենքս էլ մեր պակասութիւններն ունինք. մեզնից իւրաքանչիւրը յաճախ կանգնած չէ լինում հարկաւոր բարձրութեան վերայ։ Բայց այսօր, համալսարանի տօնի օրը, ցոյց տանք, որ արժանի ենք նրան։ Թող մեր ամենքիս մէջ փրփրէ ոգեւորութիւնը, եռայ միտքը և մեր սրտերը սրբազան կրակով վառուին։ Այն ամենը, ինչ որ մեր մէջ վսեմ, սուրբ, լուսաւոր և մաքուր է, որ դարթեցրել է մեր մէջ համալսարանը, բոլորը երևան հանենք ու զետեղենք կրակոտ ճառերի մէջ և մեզ կրթող դպրոցի սրբազան տօնի օրը՝ ասենք միաբերան. «մենք այս բոլորը քեզ ենք պարտական. դու ես տուել մեզ այդ։ Մենք կը յիշենք քո պատուէրները, սրբութեամբ կը պահենք և ազնիւ կերպով կը ծառայենք նրանց կեանքի մէջ»։ Ուսանողութեան ընթացքում լոյս—համալսարանի հնոցի դաղափարական կրակից պաշար վեր առէք ձեզ համար և ապա մտէք կեանքի մէջ նոր լուսով զօրացած, և համալսարանի տարեդարձի օրը թող միշտ ձեզ համար ամենալուսաւոր օրը լինի։

—Տարաբախտաբար, թանկագին Միստեր Գրէյ, երիտասարդութիւնը իւր ղեկավարներից այդպիսի ճառեր չի լսում,—ասաց Մէկլուէլ։—Նորերս հետաքրքրական խօսակցութիւն ունեցայ հասարակութեան մէջ մի մարդու հետ։ Ես սաստիկ վրդովուել էի հարբած ուսանողների թատրոնում սարքած կռուի և աղմուկի պատճառով։

—Պարոններ, ինչպէս էք դուք ձեզ թոյլ տալիս այդպիսի անկարգութիւն,—ասում էի նրանց։—Չէ՞ որ դա վիրաւորական է «ուսանող» անուան համար։ Ուսանողը պէտք է մաքրութեան տիպար լինի, նա պէտք է կարգապահութեան օրինակ լինի։

Ինձ ընդհատեց մի յարգելի ջենտլմեն, չորս հասունացած որդոց հայր։

—Դուք աւելի քան խիստ էք դէպի երիտասարդութիւնը.—ասաց նա ինձ։—Ես ինքս, երբ առաջին կուրսի ուսանող էի, համալսարանի տօնի օրը, քաղաքային թատրոնի սանդուղքներից չորեքթաթ անելով էի բարձրանում։ Ամեն ինչ իւր ժամանակն ունի. հասուն տարիքը՝ լուրջ աշխատանք, երիտասարդ հասակը՝ ուրախութիւն։

—Միթէ յանցանք չէ այդպէս խօսելը։ Իսկ այդպէս են խօսում ընտանիքի հայրերը և կրկնում են ամեն օր, ամեն մի քայլափոխում։ Շատ հաւանական է ուրեմն, թէ ինչու թեթեւամիտ, տհաս երիտասարդութիւնը կոնծելը քաջութիւն է համարում և անխուսափելի ուղեկից ուսանողական կեանքի։ Հետեւանքը, ի հարկէ, միշտ տխուր է լինում։

Անհոգ թիթեռնիկի խաղը կրակի հետ անպատիժ չի մնում, նրա թեւերը այրւում են։ Այդպէս է և երիտասարդութիւնը. Գինետներում ու ճաշարաններում որքա՛ն աչքի ընկնող ձիրքի և զօրեղ մտքի տէր երիտասարդներ են փչանում։ Արբեցողութեան զոհ դարձած անձանց ցանկում տասնեակներով կարելի է տեսնել նշանաւոր արտիստների, գիտնականների, գեղարուեստագէտների, բժիշկների, գրողների և այլ հասարակական գործիչների անուններ։

Այդ բոլորի պատճառը թեթեւամիտ վերաբերմունքն է դէպի արգիւնաբերութիւնը, յատկապէս պատանեկան և երիտասարդական հասակում։ Հանաքը դառնում է սովորութիւն, այն ինչ որ սկզբում քաջագործութիւն է համարւում հետզհետէ դառնում է կործանիչ կիրք և մեծ յոյսեր խոստացող հազարաւոր մարդիկ զոհ են դառնում սարսափելի մոլոխին։

Պէտք է մերկացնել գինու առերեւոյթ հրապոյրները և ցոյց տալ անօգնական երիտասարդութեան, որ խմելուց առաջացած կարճատեւ ուրախութեան հետեւում են երկարատեւ տանջանքներ և որ գլխաւորն է՝ պարծենալ պէտք է մի աւելի լուրջ բանով և ոչ թէ նրանով, թէ ով աւելի շատ կարող է խմել։

*—Ահա հէնց այդ է ցաւը,—ասաց Գրէյ,—որ մեզանում ամենքն էլ խմում են և ոչ ոք դրանից չէ քաշւում. ամենքն էլ կոնծելը օրինական են համարում։ Նախ և առաջ պէտք է ինտելլիգենցիայի միջից վերացնել շատ արմատացած նախապաշարմունքներ ու սովորութիւններ և ապա միայն կարելի կլինի յուսալ, որ ամբոխն ևս կզգաստանայ։ Նախ պէտք է մշակներ, զգաստութեան զինուորներ պատրաստել։*

*—Այո,—հառաչեց Մէկլուէլ,—սովորական պատմութիւնը, սովորական տխուր երգը. «դաշտը ընդարձակ է, գործը շատ, իսկ մշակներ չկան»։*

*—Գնանք ուրեմն աշխատելու, գործի կպչենք. լինենք նրա համար ճանապարհ հարթող և թող Աստուած մեզ օգնէ։*

*—Գնանք,—ասաց Մէկլուէլ.—յուսանք, որ մեր թոյլ աշխատանքն իսկ ի զուր չի կորչիլ։ Աստուծոյ զօրութիւնը մարդկանց տկարութեան մէջ ևս յայտնւում է։*

**Ռուս. թարգմ. Մամբրէ վարդապետ.**

# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

*ԵՒ*

# ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

---

*Մաղաքիա Պատրիարք Օրմանեան*

**Ագապի, Օրմանեան ընտանիքէն Միհրան էֆ. Տէր Ներսէսեանի ամուսին տիկին Ագապիի անմոռաց յիշատակին յուշարձան.**

*Կ. Պոլիս.* 1906. 151 *էջ.*

*Թուրքիոյ Հայոց Պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը մտածել է իւր սիրեցեալ քրոջ համար մի յուշարձան կանգնեցնել և հրատարակել է մի գիրք, որի մէջ նա նկարագրում է իւր կրած անհուն վիշտը քրոջ ամբողջ հիւանդութեան ընթացքում, նրա մահուան րոպէներին և յուղարկաւորութեան ժամանակ, մէջ է բերում հոգևորականների ու աշխարհականների արտասանած ճառերը, ապա լրագրական յօդուածները, հանգուցեալի յիշատակին ձօնուած յատուկ գրութիւնները և վերջապէս հանգուցեալի յուշատետրից քաղուածքներ։*

*Ամբողջ գրքոյկը շատ ախորժ տպաւորութիւն է անում. մենք տեղեկանում ենք նրանից ամենից առաջ Կ. Պոլսոյ ամենապատիւ Պատրիարքի հանգուցեալ քրոջ բարեմասնութիւնները, մանաւանդ աղքատների ու թշուառների խնամատարութեան գործի մէջ ցոյց տուած գնահատելի եռանդը, գրուած յատկապէս Տաճկահայոց աչքի ընկնող անձնաւորութիւնների ձեռքով. հոգևորական ու աշխարհական ձեռք են մեկնել միմեանց յաւերժացնելու հանգուցեալի յիշատակը. մենք պատահում ենք Սսոյ Վեհափառ Կաթուղիկոսի, Եղիշէ եպիսկոպոս Դուրեանի, Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեանի, Գէորգ եպիսկոպոս Երէ-*

ցեանի, Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանի, Արմաշու դպրեվանուց միաբանութեան, Բաբգէն վարդապետ Կիւլեսերեանի, Բիւզանդ էֆ. Քէչեանի, տ. Զապէլ Ասատուրի, Թովմաս էֆ. Թերզեանի, Յակոբ էֆ. Թոփչեանի, Ռէթէոս էֆ. Պէրպէրեանի, Հրանտ էֆ. Ասատուրի և այլ բազմաթիւ հոգևորական ու աշխարհական, այր ու կին գրողների ցաւակցութիւններին ու գրութիւններին։

Գրքոյկը մի յուշարձան է ոչ միայն հանգուցեալ Ագապիի, այլ և նրա եղբօր, Մաղաքիա Պատրիարքի համար. Նա ցոյց է տալիս, որ Պոլսոյ արքեպիսկոպոս և Թիւրքոյ Հայոց Պատրիարք Օրմանեան սրբազանը, չնայելով բոլոր հակառակ ջանքերին, իրաւամբ մեծ սէր և համակրութիւն է վայելում թիւրքահայերի կողմից։

Երուանդ վարդապետ.

## ՍՈՒԿԱՒ ԿԱՄ ՍՈՒԿԱՒԷՏԻ ԱՌԻԹՈՎ

Արարատի անցած (1906. խմբ.) փետրուար ամսատետրի մէջ Դեր. Բարդուղիմէոս սրբազանը անբաւականութիւն է յայտնում, որ ես, «Անապատականներ և Վանականութիւն» գրուածքիս մէջ անպայման ճիշդ չեմ համարել իւր «նոր բացատրութիւնը» Սուկաւէտի մասին, որի հետ կապուած է ս. Սուքիասանց աւանդութիւնը։

Արարատի հրատարակութեան առ ժամանակ ընդհատման պատճառովը ուշացաւ իմ պատասխանը, բայց լաւ է ուշ, քան երբէք։

Ես չը գիտեմ Բարդուղիմէոս սրբազանի «նոր բացատրութիւնը» Սուկաւէտի մասին, ո՞րն է։ Եթէ Նոր բացատրութիւն Սուկաւէտի Զրաբաշխ լինելն է, այդ Նոր չէ։ Ես մեր պատմիչներից առնելով՝ դեռ 23 տարի առաջ իմ եկեղեցական պատմութեան մէջ (եր. 14) Սուկաւէտը

Չրաքաշխ եմ համարել, նոյնը կրկնել եմ և իմ վերջին գրուածքի մէջ։ Եթէ Քօսա-դաղ նա համարում է Քօշ բառից ծագած, այդ արդէն ասել է հանգ. Ալիշանը։ Ուրեմն այդ էլ նորութիւն չէ։ Եթէ նոր բացատրութիւն Չրաքաշխ—Սուկաւէտը Տահապ, Տահապլվանի հետ նոյնացնելն է, այդ նախ և առաջ իբրև անհերքելի վճիռ ընդունուած չէ, որ բոլորի համար պարտաւորական լինի, երկրորդ պէտք է ստուգել թէ Տահապ, Տահապլվան որտեղ են գտնում և Տահապլվան ունի այն նշանակութիւնը՝ ինչ որ Բարդուղիմէոս սրբազանը տալիս է նրան։ Արդեօք Տահապ և սահապ, որ տէր է նշանակում, նոյն չե՞ն։ Բայց այս մասին յետոյ։

Հ. Ալիշանը Քօսա անունը քօշ բառից ծագած է համարում. նոյնը կրկնում է Բարդուղիմէոս սրբազանը։ Ես տարակուսելի եմ համարել այդ։ Քօսա-դաղի նշանակութիւնը հասկանալու համար ամենևին կարևորութիւն չկայ լեզուաբանական լաբիւրինթոսի մէջ թափառել. բաւական է ժողովրդի հետ ապրած լինել և շատ, քիչ թուրքերէն հասկանալ։—Եթէ դաղը թուրքերէն է և լեռ է նշանակում, ուրեմն նրան կից և նրա որակը յայտնող Քօսա բառն էլ թուրքերէն է և գօշ, լերկ է նշանակում։ Քօսա նոյն նշանակութեամբ գործ է ածւում, ուրիշ շատ թուրքերէն բառերի հետ, ժողովրդական լեզւում էլ։

Գանք Սուկաւ, Սուկաւէտ անուններին։ Այդ անունների ստուգաբանութիւնը Արաբ.-Տաճկերէն բառարանի միջոցով պ. Հ. Աճառեանցի ընթերցմամբ այնպէս, ինչպէս մէջ է բերել Բարդուղիմէոս սրբազանը համոզեցուցիչ չէ։

Ես գիտեմ, որ արաբները Է. դարում, իսկ տաճիկ-թաթարները՝ ԺԳ դարում արշաւեցին Հայաստան։ Այդ ժամանակներից միայն կարող էին նրանց բառերը գործածութիւն ստանալ հայ լեզուի մէջ։ Բայց Սուկաւ, Սուկաւէտ անունը կապուած է Սուքիասեանց աւանդութեան հետ՝ որ աւելի հին է։

Ես ասել էի որ Սուկաւ, Սուկաւէտ արաբ-տաճկե-

րէն—թաթարերէն չեն. Բարդուղիմէոս սրբազանը առար-կում է, թէ Ճահապ, Ճահապիվան, Հաշտիշատ բա-ռերը նոյնպէս հայերէն չեն, բայց դրանց գործածու-թիւնը հայերէնում Դ. Ե. դարից է։—Ես ընդունում եմ այդ, բայց այդ բառերը պարսկերէնից են անցել հայե-րէնին։ Մեր և պարսիկ լեզուների առընչութիւնը մի կողմ թողնելով, մեր յարաբերութիւնը Կիւրոսների, Բաբբքէա-ների օրերից է։ Մենք պարսիկներից ուրիշ շատ բառեր էլ ենք իւրացրել։ Ճահապ, Ճահապիվան Հաշտիշատ հա-յերէնի մէջ մտել են պարսկերէնից և ոչ արաբ—տաճ-կերէնից։

Ճահապիվան. Ճահապ Բարդուղիմէոս սրբազանը Ճահ—ապ ընդունելով՝ ստուգաբանում է շահ՝ մեծ, առատ և ապ՝ ջուր, ուստի և թարգմանում է մեծ-ջուր, առատ ջուր=Ջրաբաշխ։—Ջրաբաշխ նշանակում է ջուր բաշխող, բաժանող և ոչ առատ կամ մեծ ջուր. այս մէկ։ Միւս էլ, կայ Սահապ, որ նշանակում է ամպ, պես առանց ջրի հետ առընչութիւն ունենալու։ Ինչու չը կարծել, որ Ճահապ և Սահապ նոյն են, չէ՞ որ Սահապի մէջ էլ կայ ապ։ Այժմ Ղզլի-բուլաղում (Կոտայք) կայ մի գիւղ Ճա-հապ անունով։

Թողնենք լեզուաբանութիւնը։

«Անապատականներ և վանականութիւն» գրուածքիս մէջ իմ նպատակը եղել է Սուքիասանց մասին խօսելիս խնդրի լուսաբանութեան համար տեղագրական մի փոք-րիկ ծանօթութիւն ևս տալ։ Իմ կողմից պախարակելի զանցառութիւն կը լինէր շնորհակալութեամբ չը յիշել այդ մասին գրական վաստակներն ու վաստակաւորներին և մէջ չը բերել նրանց կարծիքը։ Բայց այդ չի նշանակում, որ ես, Հ. Ալիշանի և Բարդուղիմէոս սրբազանի կարծիք-ները, որոնք դեռ հաստատութիւն չեն ստացել հեղինա-կաւոր բանասէրներից, պարտաւորական վճիռ և վերջին խօսք համարեմ։ Զուր է սրտնեղում Բարդուղիմէոս սրբազանը։

Ես Բոստ-դաղը՝ Բոստ-դաղ-լերկ սար եմ համա-

նում, այնպէս, ինչպէս հասկանում է Նրա չուրջը ապրող ժողովուրդը, որոնց հետ շաբաթներ եմ անցկացրել։ Թող ուրիշները Բօշի-այծի, Նախազի-սար հասկանան։ Ժողովուրդը լեռան արտաքին լերկութիւնը տեսնելով՝ անուանել է Նրան Բօսա դաղ։ Բարդուղիմէոս սրբազանը թող հասկացնի ժողովրդին՝ որ «հրաբխային, խանձոտ, լերկ, խիճ ու աւազոտ լեռները, ինչպէս Բօշ լեռը, ամբողջովին ծծելով անձրևի և ձիւնի ջրերը՝ արտահոսում են առատաջուր աղբիւրներ . . .», ուստի և պէտք է կոչուեն «Սուկաւէտ կամ Ջրաբաշխ», Բօշ լեռ և ոչ Բօսա-դաղ (լերկ սար)։

«Անապատականներ և Վանականութիւն» աշխատասիրութիւնս արտատպուելով որպէս գիրք կը ցանկայի որ նա աւելի դառնար քրիստոնէական եկեղեցու մէջ յարատեւող անապատական և վանական կեանքի ուսումնասիրութեան։

Յուսիկ Արքեպս.

## Արժանապատիւ հայր խմբագիր.

Դուք այսօր ուղարկելով ինձ Յուսիկ արքեպիսկոպոսի յօդուածը «Սուկաւ կամ Սուկաւէտի առիթով», առաջարկում էք «շտապել մի քանի խօսքով պատասխանել» . . .

Յուսիկ արքեպիսկոպոսը ժամանակին իմ պատասխանը (տես Արարատ 1906 փետրվար) կարդալուց յետոյ եթէ ծպտուն հանելու բան ունենար՝ վաղուց էլ գրած պիտի լինէր. «Արարատի այն ժամանակ դադարելը՝» նոյնպիսի սխալներից է՝ ինչ որ այնքան առատ վխտում են նորա ներկայ պատասխանում։ Բայց նորան, ի հարկէ, դաղեց Հ. Երուանդ վարդապետի դատաստանը Սուկաւէտի իմ բացատրութեան մասին (տես Արարատ 1907 յունվար), և ահա ի նկատի ունելով որ ընթերցողների հարիւրից

հինգը գոնէ քննադատութեամբ չեն կարդում կամ անկարող իսկ են, այլ և այն՝ որ արդէն վաղուցուայ մոռացուած բան է, ինչու այժմ դուրս չգալ և ընթերցողներին մոլորեցնել. հօ կասեն թէ պատասխանեց . . .

Առաջի պատասխանումս, ի նկատի առնելով որ նա չի հասկացել իւր կարդացածը, այդ պատճառաւ էլ նորա ընդդիմախօսութիւնները անտրամաբան էին և սխալներով լի,—ով կամենայ՝ կարող է կարդալ և ստուգել ասածս,—մեղմ ոճով և խնայելով ասել էի թէ՝ «հապճեպով է կարդացել, անուշադիր է գտնուել»։ Բայց այժմեան իւր պատասխանովը նա եկաւ արդէն էլ տարակոյս չթողնելու՝ որ ապարդիւն պիտի լինի նորա հետ բանակռիւ վարելը, այնքան չհասկացուած, սուտ ու սխալ և յեղաշրջուած բաներ ունի, բացի անտեղի վիրաւորականները։ Նա չի ըմբռնում թէ ո՞րն է Սուկաւէտի իմ բացատրութիւնը և ինչումն է հիներից տարբերութիւնը։ Նա արդէն զարմանք է պատճառում, երբ «Ջրաբաշխը—Սուկաւէտը Ծահապ, Ծահապխանի հետ նոյնացրած» հասկացել է և յաւելացնում է. «այդ նախ և առաջ իբրև անհերքելի վճիռ ընդունուած չէ . . .». և այլն, և այլն։

Եւ այդպիսւոյն ուրիշ նոր պատասխան տալ՝ հրաժարւում եմ, համարելով սանդի մէջ ջուր ծեծել։ Մանաւանդ որ խնդիրն ինչի համար է՝ վաղուց ընթերցողների ձեռքումն է. հետաքրքրուողները թող, եթէ մազաչափ տարակոյս կունենան թէ Յուսիկ արքեպիսկոպոսը վերիվերոյ չի կարդացել և վերիվերոյ պատասխանել, կարդան նորա և իմ գրածները ծանօթ հարցի մասին։

**Բարդ. եպիսկ. Գէորգեան.**

9 Մարտի 1907 Թ.
Ս. Էջմիածին.

# ԳԻՏԱԿԱՆ

## ԴԱՒԻԹ ՓԻԼԻՍՈՓԱՅ

## (ՀԱՐՔԱՑԻ)

### Է. ԴԱՐՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՐ

### Զ.

*Հայր Գալուստ Տ. Մկրտչեան* 1902 *թ. նախ «Արարատ»-ի Մարտ—Ապրիլ համարի մէջ և ապա առանձին տետրակով* հրատարակեց Ստեփանոս իմաստասէրի մի փոքրիկ գրութիւնը՝ «Վասն անապականութեան» ևն վերնագրով։ Ո՞վ է այս Ստեփանոս իմաստասէրը, հրատարակիչը մանրամասնութիւններ չի յայտնում, միայն մի ծանօթութեան մէջ կարծում է, որ նա «նոյն ինքն Ստեփանոս Սիւնեցին» է։ Արդարև Ստեփանոս Սիւնեցուն մեր մատենագիրներից Սամուէլ Անեցին անուանում է «մեծ իմաստասէր», իսկ Օրբէլեան «իմաստասէր և անյաղթ հռետոր», բայց այս վկայութիւնները դեռ ևս բաւական չեն լիովին համոզելու, որ Սիւնեցին և Ստեփաննոս իմաստասէր նոյն անձն է։ Զորրորդ պրակի մէջ տեսանք, որ Սիւնեցին* 712—717 *թ. Դաւիթ հիւպատի գործակցութեամբ թարգմանել է Դիոնեսիոս Արիսպագացուն վերագրուած երկերը**, ապա Կիւրեղ աղեքսանդրացու Պարապմանց գիրքը և թղթերը և վերջապէս Նիւսացուն վե-*

---

* Ստեփաննոս իմաստասէր, Վաղարշապատ, 1902։

** Անցեալ դարու կէսերին միայն պարզուեցաւ, որ այս գրութիւնները անվաւերական են և Պօղոսի աշակերտ համարուած Դիոնեսիոս Արիսպագացունը լինել չեն կարող։ Հեղինակն ապրել է Ե. դարում, որովհետև ներթափուած է Նոր պղատոնականութեան և յատկապէս Պրոկղի (410—485) ազդեցութեան։ Դիոնեսիոս Արիսպագացին յիշւում է Զ. դարու կէսերին և հռչակ է ստանում միայն Է. դարու կէսերից յետոյ։ Christ, Geschichte der griechischen Litteratur, München, 1898, եր. 915.

բագրուած Նեմեսիոսի Յաղագս բնութեան մարդոյ երկը: Օրբէլեանի տուած տեղեկութեան համեմատ (եր. 178) նա պէտք է թարգմանած լինի նաև Նիւսացու կազմութեան գիրքը՝ որի լրիւ վերնագիրն է ձեռագիրների մէջ «Տեսութիւն մարդոյն կազմութեան» (Περὶ παρασκευῆς ἀνθρώπου), Թէպէտ ձեռագիրների մէջ չի յաջողուել յիշատակարան գտնել, ինչպէս վերոյիշեալ թարգմանութիւնների համար տեսանք: Նա՞ է թարգմանել արդեօք և Նիւսացու միւս աշխատութիւնները՝ ինչպէս «Յաղագս կուսութեան», Ժողովողի, Երգ երգոցի իննը երանութեան և «Հայր մեր»-ի մասին գրած ճառերը, ասել չենք կարող: Օրբէլեան նորան է վերագրում Կիւրղի Պարապմանց և Գանձուց հետ՝ Աթանաս Աղեքսանդրացու և Եպիփանի մատեանները? և Գերմանոսի Թղթի պատասխանը: Նա գրել է նաև Արարածոց, Յոբի, Եզեկիէլի և ուրիշ մեկնութիւններ. այս տեղեկութիւնը, գոնէ վերջին երկու գրքերի մասին ստուգւում է № 1650 Գրիգորի որդոյ Աբասայ նշանաւոր Պատճառաց գրքի երկու հատուածներով. 74բ. Ստեփաննոսի մեկնութիւն եւ սկիզբըն Յոբայ», 135ա Պատճառք եւ թելադրութիւնք Առաջին տեսլեանն Եզեկիէլի, Ստեփաննոսի փիլիսոփայի»: Տաթևի № 113 Պատմ. և պատճառ մեկնութեան Յովհաննու աւետարանին» ձեռագրի յիշատակարանից իմանում ենք, որ Սարկաւագ վարդապետի աշակերտ Սարգիս գրել է այդ աւետարանի մեկնութիւնը, օգտուելով ի միջի այլոց և «ի վարդապետութենէ» ... «տն Ստեփաննոսի Սիւնեաց վերադիտողի»: Վերջապէս դարձեալ Օրբէլեանի վկայութեամբ «Արար և ճառս բազումս, բաժանեաց և զութն ձայնսն և կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնսն. երգեաց և կցուրդս քաղցրահամս, յարմարեաց և զառաւօտին Յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր. և զպահոցն որ յաղուհացն երգի. մեկնեաց և զխորհուրդ գիշերային պաշտաման»*: Այս վերջին աշխատութեան հատուածներ ունենք ձեռագիրների մէջ:

* Օրբէլեան, հրատ. Կ. Վ. Շահնազարեանցի միաբան ս. Էջմիածնի. Ա. 1859. ԼԱ.:

Ա՛րդ, Գալուստ Տ. Մկրտչեանի հրատարակած վերոյիշեալ տետրակի հեղինակ Ստեփանոս իմաստասէրը վկայութիւններ է բերում բազմաթիւ հայրերից, ի միջի այլոց և այն գրուածներից, որոնց թարգմանիչն է համարւում Ստեփանոս Սիւնեցին, այն է՝ Կիւրեղ Աղէքսանդրացու Պարապմանց գրքի, Դիոնեսիոս Արիսպագացու և Նիւսացու մի քանի երկերի։ Եթէ մեզ բերուած վկայութիւններն ու թարգմանութեան համապատասխան մասերը նոյնացան, ոչ միայն լաւագոյն ապացոյցը կունենանք, թէ յիրաւի Սիւնեցին է այդ երկերի թարգմանիչը, այլ և թէ՝ Սիւնեցին և Ստեփանոս իմաստասէրը նոյն անձնաւորութիւնն են. հակառակ դէպքում պէտք է ընդունենք, որ նոքա տարբեր հեղինակներ են և նոցա աշխատութիւններից մի քանիսը շփոթուած միմեանց հետ։ Այս նպատակի համար շատ լաւ փաստեր է տալիս մեզ Ստեփանոս Սիւնեցու պատասխանը Գերմանոսի թղթին. այդ պատասխանը, ինչպէս և Ստեփանոս իմաստասիրի վերոյիշեալ փոքրիկ գրութիւնը ունինք Գ. ց. № 102 ձեռագրի մէջ, որ գրուած է 971 թուին։ Ստեփանոս Սիւնեցին իւր այդ պատասխան թղթի մէջ բազմաթիւ վկայութիւններ է բերում հէնց իւր թարգմանած հայրերի գրուածներից։ Համեմատութիւնը կատարում ենք ըստ Գիրք Թղթոցի օրինակի և Կիւրղի պարապմանց գրքի, որ մի քանի թղթերի հետ տպագրուած է Կ. պոլսում, 1717 թուին Մայր Աթոռի Մատենադարանի № 469 Կ. ց. ձեռագրից։

| Գիրք թղթոց եր. 378. | Պարապմանց եր 32. |
| --- | --- |
| Եւ միաւորեալ միանգամայն մի համարեալ ընդ մարմնոյ իւրացուցեալ զնորայն, միաւորեալ և իւր ընդ նմա զիւրոյն բնութեանն ներգործութիւն։ | . . և միաւորեալ միանգամ ող մի համարեալ ընդ նմա իւրացուցեալ զօր, միաւորեալ և իւր ընդ նմա զիւրոյն բնութեան ներգործութի. |
| եր. 375—6 Կիւրղի յորժամ եհարց զնա Սուկենոս եպիսկոպոս Դիոյկեսարիայ (sic) քաղաքին, թէ | 405 եր. Սրբոյն Կիւրղի ... առ Սեկունդոս (sic !) եպիսկոպոս դիոկեսրայ քաղաքի .... իսկ վասն |

պարտ է երկուս բնութիւնս ասել բանին մարմնացելոյ թէ մի. և նա յայտնապէս գրով պատասխանի առնէ թէ յետ միաւորութեան ոչ անջատեմք զբնութիւնսն ի միմեանց, և ոչ յերկուս որդիս հատանեմք զմին և անբաժանելին, այլ մի ասեմք, և որպէս հարքն ասացին, մի բնութիւն Աստուծոյ բանին մարմնացելոյ։

զի քո կատարելութիդ հարցանէ զմեզ եթէ սիրո՞յ է երբէք ի վր Քի երկուս բնութիս ասել եթէ ոչ…

Իսկ յետ միաւորութեանն ոչ անջատեմք զբնութիւնսն ի միմեանց, և ոչ յերկուս որդիս հատանեմք զմինն և զանբաժանելին, այլ մի ասեմք որդի և ոպ հարքն ասացին՝ մի բնութիւն Այ բանին մարմնացելոյ։

376 Եւ դարձեալ յերկրորդ թղթին առ նոյն Սակենոս. Այլ ասեն հակառակորդքն թէ, մի բնութիւն է մարմնացելոյ բանին Աստուծոյ, հարկ է ամենայնիւ չփոթումն ընդունել և խառնակումն, որպէս ծախեցելոյ և ի ներքս գողացելոյ մարդկայնոյն բնութեան, և անգիտացան դարձեալ որք զուղիղսն թիւրեն, եթէ ըստ ճշմարտութեան է մի բնութիւն բանին մարմնացելոյ։

414 Ն. Կիւրղի … առ Սեկունդոս թուղթ երկրորդ.

417. Այլ ասեն հակառակորդքն. եթէ մի բնութի է բանին մարմնացելոյ, հարկ է ամենայնիւ ասել չփոթումն ունել և խառնակումն ոպ ծախեցելոյ ի ներքս գողացելոյ մարդկայնոյն բնութեց ի նմա: Եւ անգիտացան դարձեալ որք զուղիղսն թիւրեն եթէ ըստ ճշմարտութե է մի բնուի բանին մարմնացելոյն։

Առ Ակակիոս եպիսկոպոս Մելիտինեայ թղթից.

376 Հետեւելով ամենայն ուրեք աստուածայնոյն գրոց՝ ի սրբոյ կուսէն առնուլ զմարմինն հաստատեմք այսուիկ. յորոց ենն մինն և միայն որդի և Տէր Յիսուս Քրիստոս երկուս բնութիւնս միաւորեալ ասեմք, իսկ յետ միաւորութեանն որպէս ի բաց բարձելոյ յերկուս հատմանս մի դոլ հաւատամք զՈրդւոյ բնութիւն։

432 Հետեւեալ ամ իրօք ածայնոց գրոց, ի սրբոյ կուսէն առել զնա հաստատեմք։ Արդ՝ այսուիկ յորոց են մի և միայն որդի և տր յս քս, ոպ մտածութբք ընկալեալ՝ յերկուց բնութեց միաւորեալ ասեմք. իսկ յետ միաւորութեն անդրէն ի բաց բարձելոյ ի յերկուս հատմանն մի դոլ հաւատամք զորդւոյն բնութիւն …

Երկու հատուած ևս Ստեփանոս Սիւնեցին իւր Գերմանոսին գրած վերոյիշեալ պատասխանի մէջ՝ բերում է Դիոնեսիոս Արիսպագացուն վերագրուած թղթերից, որ-

մենք համեմատում ենք № 944 Մխիթար Այրիվանեցու ձառընտրի օրինակի հետ։

Գիրք թղթոց եր. 380 Եւ Դիոնեսիոս Արիսպագացի ... գրէ առ Գայիոս սպասաւորն Պաւղոսի. Զառ ի յայտնութենէ գերագոյն ի մերս եկեալ, մարդկաւրէն լինելով զայն, թաքուն է և յետ երեւելոյն. կամ զի և աստուածայնագոյն ասացից զերեւելն, քանզի և այս Յիսուսի անյայտ է և ոչ մերոյ բանի կամ մտաց է հալելի խորհուրդ նորա, այլ ճառելով անճառելի մնայ և գիտելով անգիտելի։

№ 944, 570 բ. առ նոյն (Գայիոս) իսկ զքի մարդասիրութեան և զայս ածաբանութիւն վարկանիմ նշանակել զառ ի յայտնութենէ գերագոյն ի մերս եկեալ և մարդկաւրէն գոյանալով զզայն, և թաքուն է և ոչ միտ բանի կամ մտաց է հալելի խորհուրդն նորա, այլ և ճառելով՝ անճառելի մնա և իմանալով անգիտելի։

Գիրք թղթոց եր. 380 Եւ դարձեալ ի չորրորդ թղթին որ առ նոյն Գայիոս գրէ. Եւ զի միանգամայն ասացից, ոչ մարդ էր Քրիստոս, ոչ որպէս ոչ մարդ, այլ որպէս ի մարդկանէ, անդր քան զմարդիկ և գերագոյն մարդ ճշմարտապէս եղեւ մարդ ...

№ 945, 570 բ, բ. սին. և զի միահամուռ ասասցուք ոչ մարդ էր, և ոչ որպէս ոչ մարդ. այլ որպէս ի մարդկանէ, անդր քան զմարդիկ, և գերագոյն մարդ ճշմարտապէս եղեալ մարդ ...

Մինչև այժմ համեմատեցինք Սիւնեցու առ Գերմանոս գրած թղթի մէջ պահուած վկայութիւնները համապատասխան երկերի թարգմանութեան հետ և պարզեցինք այն անհերքելի իրողութիւնը, որ Սիւնեցին է, համեմատութեան առնուած երկերի թարգմանիչը և թէ իւր իսկ թարգմանութիւններից է առել վկայութիւնները: Այժմ Ստեփանոս իմաստասէրի վկայութիւնները տեսնենք ինչ յարաբերութիւն ունին Սիւնեցու թարգմանութեանց հետ: Համեմատութեան ենք առնում հինգ հատուած, երկուսը Կիւրղի պարապմանց Թ. և ԺԲ. գլուխներից երկուսը Արիսպագացուն վերագրուած թղթերից և մի հատուած Գրիգոր Նիւսացու Երգ երգոցի մեկնութիւնից, որի թարգմանութիւնը հաստատուն կերպով չենք կարող ասել, թէ Սիւնեցունն է, ինչպէս վերև էլ յայտնեցինք: Թէև ակնարկն

*անգամ բաւական է պարզելու, որ Ստեփանոս իմաստասէրը Սիւնեցու թարգմանութիւններից չէ առել իր վկայութիւնները. Համեմատութեան դիւրութեան համար բնագրի մի և նոյն բառերի և արտայայտութիւնների տարբեր և բնորոշ թարգմանութիւնները շուարած են նման տառերով:*

Ստեփանոս իմաստասէր եր. 13

Աստուած Բանն ստորարկեաց *զինքն յոր ոչն էր մարդն եղեալ բնութիւնն աստուածային դերութեանն* արժանաւորութեամբք *և զատ նոյն միաւորութեամբ փայլեցուցեալ, և* վերաբերեցաւ առաւել քան զբնութիւնն *կամ թէ վերաբերեաց քան զբնութիւնն* զանձեղինն իբրեւ զԱստուած. վայել էր *զանապականելին բանաւորել զբնութենէ* զընդ *ապականութեամբ, զի զնա ի բաց* փոխեսցէ *յապականութենէն:*

*Էառ Բանն Աստուած մարմին ի կուսէն անապական և ոչ զատու ապականութիւն ի նմա, քանզի որպէս ուր իցէ լոյս՝ անդ անգործ է* իսկ ամենեւին խաւար, այսպէս առընթեր լինելոյ եղելոյ *անապականութեանն՝* ամենեւին ոչ գտանի *ապականութիւն:*

Պարապմանց գիրք եր. 37

Բանն *ած, որով ամենայնն,* խոնարհեցոյց *զինքն յոր ինչ ոչն էր. զի և որ ինչ ոչն էր եղեալ մարդոյս բնութիւն՝ ածայնոյն դիւրունակութե* պատուով, *և առ նա միաւորութեան փայլեցուցեալ.* և ամբարձեալ եղեւ յաւէտ յոր ի վեր քան զբնութիւն. *այսինքն իջոյց յոր արտաքոյ բնութեան* զանփոփոխելին ով զած պարտ էր *անապականին բանն հարկանել զբնութէն, որ ընդ ապականութեա,* զի վանեսցէ զնա *յապականութենէ ... քանզի ով ուրանօր իցէ լոյս, անգործ լիցի անդ* ամ իրօք խաւար, այսպէս մերձեցելոյ *անապականութե՝ հարկ է* ամենայնիւ ի բաց փախչիլ *ապականութեանն:*

եր. 26 Եւ Կիւրեղ ի բանէն,
որ յաղագս կայծին ասէ.

*Զի զոր օրինակ հուր մերձեցեալ ի փայտ և* ներամտեալ ի նմա, բռնանարեալ ահա զնա, եւ ոչ արտակացուսցէ զնա գոլն փայտ, իսկ փոխանակացուցեալ առաւել ի հրոյն երեւս իսկ եւ կարութիւն. *այսպէս իմասցիս և*

Պարապմանց գիրք եր. 32
յաղագս կայծականն

*Քանզի զոր օրինակ հուր մերձեցաւ ի փայտ, և* զգեցեալ զնա ըմբռնէ զնա եւ ոչ կայ ի բաց ի գոլոյն փայտ, այլ յաւէտ զի փոխադրէ զնա ի հրոյն տեսութի եւ զօրութիւն, *և զամենայն զնորա իւրն ներգործէ և որպէս մի հա-*

ի վերայ Քրիստոսի, իբր բնութիւն մարդկային ի ձեռն կուսական արգանդի ծննդեանն զկուսութիւն մաւրն պահեաց անապական, քանզի միաւորեալ անճառաբար մարդկութեան Աստուած՝ պահեաց զնա. այսպէս գոլ ասացաք, քանզի մնաց ինքն որպէս էրն։

մարեալ լինի ընդ նմա, այսպէս իմացիս ի վերայ Քրիստոսի, քանզի միաւորեալ անճառապէս ընդ մարդկութեան ած՝ պահեաց զնա զոր ինչ էրն և եկաց մնաց և ինքն որ ինչ էրն։

*Երկու հատուած ևս Դիոնեսիոս Արիսպագացուն վերագրուած թղթերից համեմատենք։*

Ստեփանոս իմաստ. 23.

Եւ հրամեալն Ցերոթէոս եպիսկոպոս ուսոյց սրբոյն Դիոնեսիոսի, որ առ ի յաստուածաբանացն առէ.

Որ ամենեցուն պատճառն եւ վերալիակատար աստուածութիւնն Յիսուսի, որ զմասունսն բոլորին միացուցեալ համաձայն, և ոչ մասն և ոչ բոլոր եղով, և մասն և բոլորապէս ամենայնն. և մասն և զբոլորն ընքեան ի միասին ածեալ, եւ առաւելապէս ունելով եւ նախաբար ունելով, և բոլորից գոյացելոցս անապականապէս եղեալ, և վերագոյ ամենայն գոյութեանց ամբարձեալ. անճառելի, զերամիս, զերակեաց, զերագոյականն, գերաբնապէս ունելով զգերաբնութիւնն, զերագոյաբար զգերագոյութիւնն. վասն զի մինչ բաց բնութեանն է. սակս մարդասիրութեան եկն եւ ճշմարտապէս գոյացաւ եւ յարարածն անուանեցաւ... ... և անշփոթապէս մեզ հաղորդեցաւ...

№ 944, 546 ա. ա. սիւն.

Սրբոյն յեռեթեոսի յղզս ածաբանականացն տարրութեց։

Ամենեցունց պատճառ եւ լցողականն յի ածութիւն, որ մասամբք զբոլորման պայման, պահելով և ոչ մասն և ոչ բոլոր գոլով և բոլոր և մասն որպէս զամենայն. և մասն և բոլոր յինքեն առեալ, եւ զերագոյն եւ նախունելով .. (տարբեր չափանակութիւնք)... Անճառելի, անբաբբառելի, զերագոյն բան զմիտս, զերագոյն բան զկեանս, զերագոյն բան զեութիս, գերաբնապէս ունի զգերաբնութիւն, զերագոյապէս զգերագոյութիւն։ Ուստի եւ բնութբ չափ եկն յղզս մարդասիրութեանն եւ ճշմարտապէս եղաւ, եւ այր եղեւ գերագոյնն ած ... անայլայլապէս և անշփոթաբար կցորդ եղեւ մեզ ...

Եր. 24. Եւ երանելին Դիոնեսիոս գրէ առ Գայիոս սարկաւագ

Բայց մեք զՅիսուս ոչ մարդոյ նման ձեւացուցանեմք, վասն զի ոչ մարդ միայն և ոչ գերագոյակ կամ մարդ լոկ, այլ ճշմարտապէս ի վեր քան զմարդիկ, ի վեր քան զգոյութիւն գոյացաւ, և ի վեր քան զմարդն ներգործէր զմարդոյն. և զնկուցանէ կոյսն անապականաբար ծնանելով, ոչ կարաւտութիւն լուսոյ, ոչ այլայլութիւն կամ ապականութիւն, վասն զի ի վեր քան զամենայն գիտութիւն է ամենակատարն առաւելութեամբ քան զամենայն։

№ 944, 570 բ.

Մեք զսա ոչ մարդկաւրէն որոշեմք. քանզի ոչ մդ է միայն և ոչ գերագոյն է ըստ որում մդ միայն, այլ մդ ճշմարտապէս առաւելութբ մդ, սա էր գերագոյն քան զմդիկ.... (բոլորովին տարբեր) ..... և ի զուեթի ճշմարտապէս նկել զերագոյն քան զէութի էացաւ և գերագոյն քան զմդ, ներգործէ զմարդն, և յայտնէ զայս կոյսն զերաբնապէս ծնել...

*Մի հատուած ևս Գրիգոր Նիւսացու Երգ երգոցի մեկնութիւնից. Ստեփանոս իմաստասէրի մէջ «յԵրգ» երգոց թարգմանութենէն» վերնագիրն ունի։*

Ստ. իմաստ. եր. 25. Ուրախ լեր, սաէ, բերկրեալդ, առ. նա հրեշտակն. բացահանէ ձանիւ զտրամութիւնն, որ ի սկզբանէն արտավճակեալ ծննդեանն, առ ի բոլոր բիւրուց միայն այնպիսի եղեալն։ Եւ սպիտակ և կարմիրն վասն մարմնոյ և արեանն ազնուապէս անուանեալ, եւ բացընթեալ ի բիւրուց վասն անապական և անախտ ծննդեանն։

№ 944, 693 աբ. Քանզի սաէ ցնա հրեշտակն. խնդա բերկրեալդ. հանելով ձայնիւն զտրտմութիւնն, որ ի սկզբանն մեղօք ժառանկեցօ ծննդեանն։ Նա է որ նոր եւ առանձին ծնդեմքն յա ի բիւրոց միայն այնպիսի լել։ Սպիտակ և կարմիր յդդս մարմնո և արեն, փեղեցկապէս անւանեցօ եւ ծնել ի բիւրուց մս անապական և անախտ ծնդենն։

*Այս դիտողութիւններից և համեմատութիւններից յետոյ հետևեալ եզրակացութիւնները կարելի է հանել. ա) Եթէ Ստեփանոս իմաստասէրը գրել է 617 թ. յետոյ, երբ թարգմանուած էին արդէն Արիսպագացու, Կիւրեղ Աղեքսանդրացու և Նիւսացու վերոյիշեալ երկերը, այն ժամանակ պէտք է ընդունենք, որ նա բոլորովին տարբեր*

անձն է Սիւնեցուց, զուցէ և նորա գրուածքը անվաւերական: բ) Եթէ Ստեփանոս Սիւնեցին և Ստեփանոս իմաստասէր, մեր քննութեան նիւթ եղած փոքրիկ գրութեան հեղինակը, նոյն համարենք, պէտք է ընդունենք, թէ նա գրել է 712 թ. առաջ, երբ դեռ չէր կատարել իւր թարգմանութիւնները:

Ապա թէ ոչ անհասկանալի կլինի, թէ ինչու ներկայ գրութեան մէջ ևս չէ օգտւում Սիւնեցին իւր թարգմանութիւններից, ինչպէս Գերմանոսին գրած թղթում, մանաւանդ, որ այս գրութեան բոլոր վկայութիւնները բաւացի նոյն են հայ ամբողջական թարգմանութիւնների կամ հայ հեղինակների մէջ գործ ածուած հատուածների հետ և միայն Կիւրեղից, Նիւսացուց և Արիսպագացուց առնուած վկայութիւններն են բացառութիւն կազմում:

## է.

Ներկայ թուականի «Արարատ»-ի Ա. համարում Իրենիոսի թարգմանութեան գիւտի առթիւ գրած մեր մատենախօսութեան մէջ այն կարծիքն էինք յայտնել, որ հաւանօրէն Ստեփանոս Սիւնեցին և Ստեփանոս իմաստասէր տարբեր անձնաւորութիւններ են և կամ անվաւերական է վերջինիս անունով մեզ հասած գրութիւնը*: Սակայն աւելի մանրամասն քննութիւնը պարզեց, որ մեր կասկածը սխալ էր, և ընդհակառակն այն նշանները, որոնք երկուսի տարբերութեան հիմք պիտի կազմէին, փոխուեցան յօգուտ երկուսի նոյնութեան: Ստեփանոս իմաստասէրը մի վկայութիւն ունի «Տ. Յուսէփից (եր. 24), իսկ վերջինիս խօսքերը մէջ են բերուած Հբ. մէջ, աղբիւր ցոյց տալով Պարապմանց գիրքը: Մենք տեսանք, որ այս գրութիւնն անկասկած Սիւնեցու թարգմանութիւնն է, և որովհետև Ստեփանոս իմաստասիրի մէջ բերուած վկայութիւնները տարբեր էին հայ թարգմանութիւնից, բնականաբար եզրակացրել

* Արարատ. 1907, եր. 63:

էինք, որ նա սիւնեցուց յետոյ էր ապրում, և օգտուել է Տ. Յուսէփի գրուածքից, իսկ վերջինս, կարծում էինք, օգտուել էր Պարապմանց գրքի թարգմանութիւնից:

Այս եզրակացութեան ճշգութիւնը ստուգելու համար Կիւրեղի Պարապմանց մէջ որոնեցինք և գտանք ՀԲ.-ի վկայութիւնը: Սակայն պարզուեցաւ, որ այս խօսքերը ոչ Կիւրեղինն են և ոչ Պարապմանց գրքի մէջ: Յովհաննէս Անտիոքացուն ուղղած թղթի վերջում մի շարք վկայութիւններ կան հաւաքած եկեղեցու հայրերից, որ կարդացուել են Եփեսոսի ժողովում: Այս մասին վկայում է թէ Եփեսոսի ժողովի արձանագրութեան յունարէն բնագիրը և թէ հայ թարգմանութիւնը*: Ահա այս վկայութիւններից յետոյ կցուած են վեց ուրիշ վկայութիւններ, որոնցից առաջինը այսպիսի վերնագրով. «Տեառն Յեսուայ Խոռխոռունեաց եպիսկոպոսի՝ Սակս անապական զոլոյ ըզտէրունեան մարմնաւորութիւն անզատին իսկ ի կուսական յղութենէ»: Մնացածներից երկուսն առնուած են Իրենիոսից, երկուսը Եփրեմից և մէկը Աթանասից: Այս բոլորը Յեսու Խոռխոռունեաց եպիսկոպոսի վերոյիշեալ գրութեան մասին է, թէ առանձին առանձին վկայութիւններ մի ուրիշ անձի ձեռքով հաւաքուած, դժուար է ասել: Պարզ չէ նոյնպէս, թէ այս հատուածները թարգմանի՞չն է մտցրել այստեղ, թէ ոչ. բայց նա գտնւում է ոչ միայն Մայր Աթոռի Մատենադարանի Կարինեան Ցուցակի № 469 (478) ձեռագրում, որից և կատարուած է տպագրութիւնը 1717 թ., այլ և ԺԲ. դարում՝ Լամբրոնացու օրինակի մէջ**:

Արդ, այս նոյն վկայութիւնները բառացի ունի և Ստեփանոս իմաստասէրը «վասն անապականութեան» են. գրութեան մէջ, միայն տարբեր դասաւորութեամբ, ցրուած: Միակ զանազանութիւնը Յեսու և Յուսէփ անուան մէջ է, որ Լամբրոնացու օրինակում Յեսուայ է դարձել: Այս

---

* Hefele $CG^2$, II. եր. 186: Գիրք Պարապմանց Կիւրղի. եր. 457:

** Զարբանալեան. Մատենադարան հայկ. թարգմ. 1889, Վենետիկ, եր. 517.

հանգամանքն արդէն, ինչպէս և անուններն ու մականուն-ների նոյնութիւնը հարկադրում է հակուել երկու հեղինակների նոյնութեան ենթադրութեան կողմը: Եթէ իրաւ է այս նոյնացումը, նշանակում է գրութիւնը ծագել է Ը. դարու սկզբներին:

Ստեփանոս իմաստասիրի գրութեան ներքին բովանդակութիւնն ու յիշած մի քանի հեղինակները ապացոյց են նոյնպէս, որ յամենայն դէպս հեղինակը ութերորդ դարու առաջին կիսի մարդ է: Նա չէր կարող նաև 971 թ. յետոյ ապրել, որովհետև Գ. ց. № 102 ձեռագիրը գրուած է այդ թուին: Սակայն այդ գրութեան terminus ante quem-ը կարող ենք աւելի իջեցնել: Թէոդորոս Քռթենաւորին վերագրուած «ընդդէմ Մայրագումացոյն»* ճառի մէջ կայ մի հատուած, որ նոյնանում է Յոհան Կարնեցու մի հատուածի հետ (Ստ. իմաստ. եր. 16). այդ երկու հեղինակներից մէկն ու մէկը օգտուել է միւսից և օգտուողն անշուշտ «ընդդէմ Մայրագումացւոյն» ճառի հեղինակն է, որ ապրում էր Թ. դարու վերջերին: Հակառակը ենթադրել ամենևին հաւանական չէ. որովհետև Ստեփանոս իմաստասէրը վկայութիւններ է բերում մի քանի հայ հեղինակներից՝ պահելով որոշ չափով ժամանակագրական կարգ: Այդ ժամանակագրական կարգը նկատւում է նաև եկեղեցական հայրերի վերաբերութեամբ յատկապէս գրութեան առաջին մասում: Այստեղ յիշուած հայ հեղինակներն են Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, Դաւիթ Հարքացի և Յոհան Կարնեցի, Տէր Յուսէփ, Յոհան իմաստասէր, և Թէոդորոս Բաղեն: Արդ, Պետրոս Սիւնեցին ներկայ էր Ներսէս Բ.-ի օրով 554 թ. գումարուած ժողովին, Դաւիթ Հարքացին, ինչպէս կտեսնենք, ապրում էր Է. դարու երկրորդ կիսում, իսկ Յոհան Կարնեցին դորանից յետոյ: Տէր Յուսէփի ժամանակը 715 թ. առաջ պիտի տանենք, եթէ նոյնացնենք Սիւնեցու

---

* Երանելւոյն Թէոդորոսի ընդդէմ Մայրագումացւոյն, տպուած Օձնեցու մատենագրութեանց հետ, Վենետիկ, 1833.

և Ստեփ. իմաստասիրի անձնաւորութիւնը. որովհետև այդ թուրն է կատարուած Պարապմանց գրքի թարգմանութիւնը: Յոհան իմաստասէրը անհաւանական չէ, որ Օձնեցին լինի, մանաւանդ ոճն ու արտայայտութեան եղանակը նրան են յիշեցնում: Իսկ Թէոդորոս Բաղենը Գալուստ Տ. Մկրտչեանը նոյնացնում է Մանազկերտի ժողովական Թէոդորոս Բաղենունեանց կամ Բզնունեաց եպիսկոպոսի հետ, որ նոյնպէս յարմար է:

Բայց այս դիտողութիւններից աւելի կարևոր նշանակութիւն ունի հեղինակի մօտաւոր ժամանակը որոշելու համար գրութեան բովանդակութիւնը: Հայոց եկեղեցու մաքառումը Յուլիանիտների դէմ ամենախիստ կերպարանք է ստանում Մանազկերտի ժողովի ժամանակները: Հայաստանեայց եկեղեցու ուղղափառութեան պաշտպանների և Յուլիանիտների մէջ գրական բանակռիւ էր սկսուած այդ ժողովից առաջ և շարունակւում է նոյն իսկ ժողովից յետոյ, երբ արդէն դատապարտուել էր այդ վարդապետութիւնը: Խոսրովկի «Առ տէր Սարգիս եպիսկոպոս Գերադիկորայ» ուղղած թուղթը գրուած է այդ ժողովից յետոյ: Հաւանօրէն այս գրութիւնն էլ կապ ունի այն շարժման հետ. եթէ նոյն իսկ Ստեփանոս իմաստասէր և Սիւնեցին նոյն չհամարենք, դարձեալ այս գրութիւնը նոյն շարժման հետևանք էր և ծագել է Ը. դարու առաջին կիսում: Այդ դէպքում պէտք է ընդունենք, թէ յուլիանիտ հայերից մէկը օգտուելով Ստեփանոս Սիւնեցու հեղինակութիւնից՝ նորա անուան տակ կամեցել է տարածել իւր վարդապետութիւնը՝ յարմարաւոր վկայութիւններ բերելով Պետրոս Սիւնեցու, Դաւիթ Հարքացու, Յոհան իմաստասէրի և ուրիշների երկերից: Գուցէ և այս հանգամանքն է պատճառ, որ այս ըստ ամենայնի «երևութական» գրութիւնը ազատ է մնացել կորստից:

Արդ, այս Ստեփանոս իմաստասէրը, ինչպէս յիշուեցաւ, մի վկայութիւն ունի բերած Դաւիթ Հարքացուց (եր. 15), իսկ այդ վկայութեան մի հատուածը բառացի նոյ-

նանում է մեր փիլիսոփայի առաջին գրութեան մի քանի տողերի հետ։

Մենք ամբողջութեամբ երկու հատուածն էլ դնենք միմեանց դիմաց ընթերցողների դիւրութեան համար։

. . . և ոչ յափշտակութիւն համարեցաւ զգոլն հաւասար հօր, այլ զանձն թափեաց եւ էջ յարգանդ կուսին, առեալ ի նմանէ զծառային կերպ, ոչ յանապականէ եւ ոչ ապականացու, այլ յապականացուէս անապականացուցեալ եւ յախտակրելոյս եւ մահկանացուէս անախտ եւ անմահացու. . . .

Դաւիթ Հարքացի ասէ. Քանզի նախաժամանէր Հոգին ի Կոյսն քան զյղացումն մարմնոյն. ըստ որում Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ. որոյ յայտ է ոչ ի նախայղացեալ սաղմի, կամ թէ ի մարմնի, կամ ի կերպացելում սուրբ Հոգին եկեալ միացի կամ բնակեսցէ ըստ նոցա, այլ ի նախահանգելից արգանդին և նախասրբեցելում, ըստ նորա միայն գիտութեան։ Նա ինքն ասէր. Յորենահասան սուրբ մարմինն ծնցի, և ի նմին մնացեալ ի նոյն չաղեալ կատարեսցի։ Էջ յարգանդ կուսին առեալ ի նմանէ զծառայի կերպ. ոչ յանապականէ եւ ապականացու, այլ յապականացուէս անապականացուցեալ, եւ յախտակրելոյս անախտ։

Զի թէ ոչ անախտ էր սա՝ և ոչ սպանանել զախտն ոչ կրելով ոչ կարէր. և եթէ ոչ անապական՝ զապականութիւն ոչ կարէր լուծանել. և եթէ ոչ անմահ՝ նորա մեռանելովն և խափանիւր ոչ մահ. զի յանախտին ապաքէն ախտ մեռանին, և յանապականին ապականութիւն լուծանի, և յանմահին՝ մահ։

Եզրակացութիւնը պարզ է. Դաւիթ Հարքացին նոյն է մեր Դաւիթ փիլիսոփայի հետ. երկուսն էլ Դաւիթ և փիլիսոփայ և մի և նոյն հատուածը մէջ բերուած կրտսեր ժամանակակից մի երրորդ հեղինակի կողմից։ Թէպէտ մեր

գրութիւնների հեղինակ Դաւիթ փիլիսոփայի հայրենիքը չէ յիշուած, բայց Ստեփանոս Իմաստասէրի համար որ կրտսեր ժամանակակից էր, դժուար չէր իմանալ, որ նա Հարքացի էր։

Այս եզրակացութիւնը միանգամայն հաւանական դարձնելու համար մի փոքրիկ դժուարութիւն ունինք լուծելու: Հարքացու անունով մէջ բերուած վկայութիւնը ոչ միայն աւելի ընդարձակ է, քան մեր Դաւթի համապատասխան մասը, այլ և վերջինս Հարքացու հատուածի միջին մասն է կազմում: Այստեղից կարելի է այն առարկութիւնն անել, թէ Հարքացու հատուածի նման կտորը մեր Դաւթի «Բան հաւատոյ» գրութիւնից առնուած չէ, որովհետև Հարքացու հատուածի ոչ սկիզբը և ոչ շարունակութիւնը նոյն չեն վերոյիշեալ գրութեան հետ։

Ստոյգ կլինէր այս առարկութիւնը, եթէ Հարքացուց առնուած հատուածը մի ամբողջութիւն կազմէր. սակայն ընթերցողը նկատել կարող է, որ Հարքացու մէջ մտքի տրամաբանական միութիւն և ամբողջութիւն չկայ, այն ինչ մեր Դաւթի գրութեան մէջ համապատասխան մասը անկարելի է դուրս հանել, առանց հեղինակի միտքը անհասկանալի դարձնելու: Այս հանգամանքը շատ պարզ կերպով բացատրւում է, եթէ ընդունենք, որ Ստեփանոս Իմաստասէրը Հարքացու այլ և այլ գրութիւններից, որոնք վերաբերում էին Ս. Կոյսի յղութեան կամ Քրիստոսի մարդեղութեան հարցին, հատուածներ է առել և կազմել վերոյիշեալ վկայութիւնը, մի երևոյթ, որ ոչ միայն հազուադիւտ և անհաւանական չէ հին մատենագրութեան մէջ, այլ և յատուկ է հէնց Ստեփանոս Իմաստասէրին: Օրինակ եր. 9. Իրենիոսից առած հատուածը տես նորագիւտ Հայերէն Թարգմանութեան մէջ եր. 24* մինչև «ըն-

*) Des Heiligen Irenäus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung. Entdeckt, herausgegeben und ins deutsche übersetzt v. Lic. Dr. Karapet Ter-Mekerttschian u. Lic. Dr. Erwand Ter-Minassiantz. Leipzig, 1907.

դունայն» խօսքը։ Մնացածն առնուած է 29 և 69 երեսներից, եթէ Իրենէոսի երկերի միւս թարգմանութիւններից չէ առնուած։

Ստ. Իմաստասէր եր. 11, Բարսղից առնուած հատուածը հանուած է «Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի և Ապողինար հերձուածողի. տեսութիւն ի մարմնաւորութիւն Փրկչին» վերնագիրը կրող հարց ու պատասխանից, բայց ոչ մի տեղից և շարունակաբար, այլ նոյն գրութեան երեք այլ և այլ մասերից (Ձեռ. № 927, 163բ, 164բ, 165բ)։

Ստ. Իմաստասէր եր. 13, Կիւրեղ Աղեքսանդրացու Պարապմանց գրքից վերցրած վկայութիւնն առնուած է ԺԲ. գլխից, բայց ոչ շարունակաբար, իսկ «Էառ բանն» խօսքերից մինչև «քանզի որպէս» բառերը նոյն գլխի մէջ չկան, ուրեմն ուրիշ տեղից է առնուած։

Բայց ի՞նչ ենք ասում. նոյն իսկ երկու տարբեր գրութիւններից առնուած վկայութիւնները միացած են Ստ. Իմաստասէրի մէջ եր. 29։ «Զենոն թագաւոր ասէ» վերնագրով վկայութիւնն առնուած է մասամբ Զենոնի հենոտիկոնից և մասամբ Անաստասի հրովարտակից (տ. Գիրք թղթոց, եր. 271 և 278)։

Կարծում ենք այս օրինակները միանգամայն պարզում են, որ մեր ենթադրութիւնը անհիմն չէ։ Մանաւանդ տեղեկութիւններ ունինք, որ Դաւիթ Հարքացին կրօնական բովանդակութեամբ ճառեր է գրել, այն է Ներբողեան «Ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», «և այլ հարցմունս և պատասխանիս»*։ Ժէ. դարում ապրող Վարդան Բաղիշեցին, որ կազմել է Ամրդոլուի վանքի ձեռագիրների ցուցակը**, յիշում է մի գրութիւն «Դաւթի Հարքեցոյ անյաղթ փիլիսոփայի հարցումն քաղկեդոնականաց և պատասխանիք ուղղափառաց» վերնագրով։ Արդեօք

---

*) Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, հրատ. Ոսկան Յովհաննիսեանցի. Մոսկուա. 1858. եր. 17.

** Արարատ 1903 թ. փետր. հրատարակել է Ս. Տ. Յակոբեան Մայր Աթոռի մատենադարանի № 639, 181բ — 183բ ձեռագրից։

*Գանձակեցու յիշած հարցմունքը Բաղիշեցու յիշա՞ծն է, թէ Գալուստ Տ. Մկրտչեանի հրատարակած տետրակը, թէ բոլորովին մի այլ գործ, ասել չենք կարող։ Եթէ ճշմարիտ են մեր դիտողութիւններն ու եզրակացութիւնը Դաւիթ փիլիսոփայի և Դաւիթ Հարքացու նոյնութեան վերաբերութեամբ, ապա ինքնին լուծւում է Դաւիթ Հարքացու ժամանակի կարևոր խնդիրը։ Ըստ այսմ Դաւիթ Հարքացին ապրում էր Է. դարու երկրորդ կիսում և ժամանակակից էր Անաստաս Կաթուղիկոսին և Աշոտ Պատրկին։*

Գ. վ. Յովսէփեան

(Շարունակելի).

# ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

## Համառօտ տեղեկութիւններ Ամերիկայի տարրական դպրոցների մասին

Ամերիկայի դպրոցներն անհամեմատ ազատութիւն են տալիս աշակերտներին քան Եւրոպայի։ Յօրինուած կանոններն, որոնք սահմանուած են աշակերտների կարգապահութեան համար՝ դպրոցներում, ամերիկական ուսումնարանների ամեն մի վարչութիւն թողնում է, թէ վերահսկողութիւնը, և թէ կանոնների կատարումը նոյնիսկ աշակերտների վերայ։ Բայց և այնպէս տարրական դպրոցներում, իւրաքանչիւր դասարանի համար երկու կամ աւելի օրապահներ կան, որոնցից մէկը կազմում է բացակայ եղողների և ուշացողների օրագրութիւնը. երկրորդը հսկում է գրատախտակների պիտոյքների և մաքրութեան վերայ. երրորդը պարտաւոր է նայել իր ընկերների տետրակները և այլն։

Մանրամասն կանոններն, որոնք վերաբերում են բացառապէս դպրոցում մասնակցողներերի պարտականութիւններին, կախուած են ամեն մի դասարանի ու բակերի պատերից. բացի դրանից տպուած փոքրիկ յիշատակարանների ձևով տրւում է իւրաքանչիւր աշակերտի։ Կարգապահութիւն տիրելու համար, ամերիկացիք ամենալաւ միջոցը համարում են աշխատանքը, գործը։ Զբաղուած մտքերը ու ձեռները կարգապահութեան համար անվնաս են։ Այն երեխաներն են պարապում չարութիւնով, որոնք անգործ են, ոչինչ չեն կատարում և կամ այնպիսիները, որոնք յոգնած են աշխատանքից ու միայն չարութեանց մէջ են որոնում բաւականութիւն. դորա համար ժամանակակից ամերիկացի մանկավարժների կարծիքով, ուսուցչի գլխաւոր ուշադրութիւնը լարուած պիտի լինի հետևեալ կէտերի վերայ. ա) աշակերտները դասարան

հաւաքուելուց յետոյ, որքան հնարաւոր է բոլոր ժամանակ լինին զբաղուած. բ) աշխատանքը, զբաղմունքը լինելու է կենդանի, հետաքրքրող, որպէս զի կարողանայ գրաւել աշակերտին։ Դպրոցը՝ նորա կարծիքով պէտքէ ունենայ ուրախ, զուարթ, ողջունող ու խնամք տանող տպաւորութիւն, որ աշակերտները իրանց զգան լաւ խնամուած. իսկ այդ նպատակին կարելի է հասնել ամենահեշտ միջոցներով. պատերի վերայից կախել մի երկու նկարներ, անկիւններում դնել ծաղկամաններով բոյսեր, որոնք դասարանին տալիս են ուրախ պատկեր. հէնց այստեղ էլ մանկիկը կըզգայ իրան լաւ, ուրախ, զուարթ՝ քան մերկ պատերով սենեակում։ Մի քանի մանկավարժներ աւելի ընդարձակ են մտածում ու մատնացոյց են լինում. «անհրաժեշտ է ուսուցչի կողմից ամենախիստ հսկողութիւն ձեւերի ու զգեստների մէջ։ Վարժուհիների հանդերձների բարեյաջող ազդեցութիւնն երեւում է փոքրերի վերայ։ Որեւիցէ կապոյտ, կարմիր ժապաւէն և կամ վարժուհու կրծքի վերայի նշանկապն ասում են. «արժէ խիստ նկատողութեան փոքրերի նկատմամբ»։

Դասարանում շարունակ նստիլը, կամ դժուար դասը բթացնում է սովորողների հետաքրքրութիւնը. նոքա կըլինին անուշադիր, ցրուած, լսում են յօրանջմունքի ձայներ, գրատախտակի վերայ չեն նայիլ և վերջապէս ուսուցչին վատ են լսում։ Պարապմանց ժամանակ կատարուած մի քանի շարժումները, հէնց դասարանում, կամ կարճ հանգստութիւնը կարգ են վերականգնում. ապա մտաւոր պարապմունքների փոփոխումը ֆիզիքական վարժութիւններով, ձեռների շարժմունքներով, նկարչութեան կամ գծագրութեան դասով և այլն, այս ամենը սովորողների ուշադրութիւնները ու հետաքրքրութիւնները պահողներն են։

Ամերիկայի Պասսի մանկավարժն ասում է. «չնայելով որ պատիժների սովորական ձեւերը գործադրւում են յուզմունքներ յառաջ բերելու համար դէպի ուսումը, այնուամենայնիւ դերադասելի է, որ աշակերտները պա-

բացում են կամենալով և' ոչ թէ ճնշող ազդեցութեան տակ»։ Մանկավարժ դաստատուն, տարրական դպրոցներում, դառնալով ունկնդիրներին խորհրդակցում է. «օգտուիլ ուսուցման ժամանակ երեխաների յատկութիւններով, սէր դէպի գործունէութիւն, սիրուելով արժանանալ գովեստի և միայն ծայրահեղ դէպքում դիմել ուժի»։ «Վարուեցէք երեխաների հետ այնպէս, ինչպէս մի ամենախելացի հայր իր որդիների հետ.—վերաբերուէք խելացի ու բարի զգացմունքներով. ուղղութիւն տուէք, որչափ կարելի է համոզմունքների ճանապարհներով—դէպի իրանց պարտականութիւնների կատարմանը և գիտակցաբար կառավարեցէք. փափագելով սովորեցրէք նոցա յարգել մեծը ու քաղաքավարին թէ դէպի իրանց և թէ դէպի այլոց»։

Փոփոխակի պարապմունքների շնորհիւ, ուսուցիչների վարմունքի, դպրոցական բարեյաջող առողջապահական պայմանների, ընդհանուր երկսեռ կրթութիւնների, փոխադարձ յարգողների, դրաւիչ դասարանների, բաժանուած նստարանների, աշակերտների թիւը դէպի ինքնուրոյն աշխատանքը սև գրատախտակի վերայ կամ նստած տեղում, գուցէ շնորհիւ մայրական կաթի հետ ծնած յարգանքի սէրը դէպի գործը և վերջապէս օրէնք դարձած կարգապահութիւնը, Միացեալ Նահանգների դպրոցներում, զարմացնում է դիտողին իր կանոններով ու կարգապահութիւններով։

Վարժուհիները ու վարժապետները, համաձայն կանոնների, որոնք խմբագրել են իրանց համար դպրոցական յանձնաժողովները, պէտք է աշխատեն ընտրել միջին ճանապարհը. ներողամտութիւն ու խստութիւն. բարեկամական յարաբերութիւն ու հեղինակութիւն։

«Индіанополисъ» քաղաքի կանոնադրութեան մէջ ասուած է. «ուսուցիչները նախապէս պէտք է հետամուտ լինին բոլորի դրութեանը ու վարուեն նոցա հետ արդարութեամբ։

Իսկ նոցա գործունէութիւնը կարելի է արտայայտել հետևեալ իմաստներով. «Մի վախեցնէք. եթէ դուք հա-

մաձայնել էք ընդունել մի գործ, այն ժամանակ կամենալով կատարեցէք. Թոյլ չըտաք, եթէ միանգամ արգելել էք. պատժել մեղքի մէջ, միեւնոյն է, թէ վրէժխնդիր էք լինում. չըսպառնալ. չըխօսել չափազանց բարձր. կառավարեցէք ու իշխեցէք ձեզ, որ ուրիշներին էլ կարողանաք իշխել. երեխաների չարութիւններին չափազանց նշանակութիւն մի տաք: Գովասանքի մէջ չատ ժլատ մի լինիք. անօգուտ պատիժներ մի տաք. եղէք արդարադատ քաղաքավարի և գուրեկան մարդիկ ձեւերի մէջ, որոնք վերաբերւում են ձեր վարք ու բարքին. ծնողների հետ եղէք հաստատամիտ»:

Ուսուցչապետ Դիւնտօն, Բօստոնի տարրական դպրոցի տեսուչը, գործունեայ ուսուցիչների խոր բնաւորութիւնը գծագրելիս այսպէս է արտայայտում. «օգտւեցէք ձեր հեղինակութեամբ. ոչ ոք աւելի չի հաւատայ համոզական ուժի մէջ այնչափ, որչափ ես, բայց ներկայ մարդկային բնութեան կացութիւնը, մանաւանդ երեխաներինը, ժամանակ առ ժամանակ կարօտ է աւելի ուժեղ գործադրութեան, քան այն որ նոցա կարելի և ցոյց է տրւում ուրախութեան, համակրութեան ու սիրոյ գործադրութեամբ. դորա համար, որպէս զի հասնեն կատարեալ զարգացողութեան, նոքա հարկաւոր է, որ հասկանան հնազանդութեան անհրաժեշտութիւնը սկսուած գործի—աշխատանքի: Երբ նոքա կըթողնեն դպրոցն, այն ժամանակ նոցա կըպատահի աշխատանք, որն անպատճառ պէտք է կատարել և օրէնքը, որին պէտք է հնազանդել: Հէնց ուսումնարանում պէտք է հիմնական կերպով մտցնել սովորութիւն կատարել այն, ինչ որ հրամայում են հեղինակաւոր մարդիկ: Պարապմունքներից շատերը դպրոցներում եղած են և լինում էլ են նորա համար, որ ուսուցիչը պահանջում է: Համոզման համար ժամանակը քիչ է. ինչպէս որ քիչ կըլինէր ամեն բանի պատճառը բացատրել նորան:

Վերևում յառաջ բերուած կցկտուր, բայց բաւական կարևոր տեղեկութիւններից պարզ երևում է, թէ Ամերիկայի—Միացեալ Նահանգների տարրական դպրոցներում ինչ հոգի է տիրում և ինչ է ներշնչւում մատաղ սերնդի թարմ մտքերում, որոնք մի քանի տարի չանցած պէտք է ուսանողներ դառնան նոյն լուսաւոր, ազատ մտածող երկրի բարձրագոյն դպրոցների համար։

Ինչպէս նկատւում է, փոքր հասակից արդէն իսկ մանուկներն ընտելանում են հնազանդութեան կարգ ու կանոնի, դիսցիպլինայի, որի միայն խելացի կատարումից է կախուած դպրոցի յառաջադիմութիւնը. ուր կարգ, կանոն չի տիրում, այնտեղ էլ չի կարելի սպասել և՛ խաղաղութիւն, որի բացակայութեան պատճառով դպրոցը ներկայացնում է մեզ մի քաօսական պատկեր։

Ահա այս ապացուցուած ճշմարտութիւնները աչքի առաջ ունենալով պէտք է մեր դպրոցի ղեկավարները աշխատեն փոքր հասակից տարրական կամ ծխական դպրոցներից սկսած սաներին սովորեցնել բացատրուած, մարզուած հնազանդութիւն, կարգապահութիւն և այլն, որի շնորհիւ միայն կարող ենք թեմական կամ բարձրագոյն դպրոցներում սպասել աշակերտների ու վարչութեան կողմից կատարեալ յաջողութիւն յառաջադիմութեան մէջ։

Մեղանում վերջին տարիներում այդ կէտը շատ կախ է թողած և պտուղներն էլ վայելում ենք. (թէև արտաքինն էլ է մասամբ օգնել). մեր նոյն իսկ բարձր դպրոցների աշակերտները կարծում են, որ դպրոցներից եթէ վերցուի վերևում յիշածները, ապա ուրեմն նոքա ձեռք բերած կը լինին դպրոցական ազատութիւնը, այն ինչ ամենամեծ սխալը այդ է, որի մասին մի այլ անգամ. դպրոցական ազատութիւն մենք այլ տեսակ ենք հասկանում և նա անհրաժեշտ է, ուր չկայ։

Թարգմ. ռուս. Երեմեա վ. Ստեփանեանց.

# ՄՈՒՏՔ ԵՒ ԵԼՔ

## Արդեանց եւ ծախուց Հոգաբարձութեան Որբոց եւ Այրեաց Հոգեւորականաց Հայոց Աստրախանայ թեմի վասն 1906 ամի։*

*Կազմեալ ի 6 փետրուարի 1907 թ.*

| №№ | ՄՈՒՏՔ. 1906 ամի | Րուբլի | Կ. |
|---|---|---|---|
| 1 | Առ 1 Յունվարի 1906 ամի մնացեալ էին դրամատոմսք 7600 րուբլի և պատրաստի դրամք 505 ր. 80 կ. ամենն՝ . | 8105 | 80 |
| 2 | Գանձանակադրամք ժողովեալք ի հայոցն ժողովրդոց քաղաքիս և թեմի ամենն գումարաւ . . . . . | 191 | 21 |
| 3 | Տուրք ի մետրիկական արձանագրութեանց քաղաքիս և թեմի . . | 816 | 03 |
| 4 | Անդամավճար հասոյթք քահանայից և սպասաւորաց Աստրախանայ և վիճակի ամենն գումարաւ . . . . . | 136 | » |
| 5 | Տարեկան % իք դրամատոմսակաց | 302 | 56 |
| 6 | Կոպէկադրամք հանեալք ի ռոճկաց ծառայողաց կոնսիստոր. . . . | 13 | 10 |
| 7 | Ի պատրաստի դրամոց բերեալ են ի ձեռս նոր երեք հատ դրամատոմսք քաղաքային դրամանոցի։ . . . . . | 1050 | » |
| | Տարեկան մուտք | 2608 | 90 |
| | Դրամատոմսք | 7600 | » |
| | Պատրաստի դրամք | 505 | 80 |
| | Ընդհանուր գումար | 10714 | 70 |

* Ծանօթ. Այս հաշիւը տպագրւում է «ի գիտութիւն Հոգևոր Կառավարութեան Հայոց Ղզլարու, համայն գործակալաց վիճակի և օգնական անդամոց Հոգաբարձութեան»։ Խմբ.

| №№ | Ե Լ Ք 1906 ամի. | Րուբլի | Կ. |
|---|---|---|---|
| 1 | Բաշխեցան անընդադրամք այրի երիցուհեաց և որբ զաւակաց քահանայից և սպասաւորաց յընթացս 1906 ամի ամենն՝ | 725 | 88 |
| 2 | Ի պատրաստի դրամոց բերեալ են ի ձեռս նոր դրամատոմսք . . . . | 1050 | » |
| 3 | Ինչգին փոստային բլանկաց, թղթոց, ծրարից, դրօշմանչից, անդորրագրոց և մանր ծախուց։ . . . . . . | 16 | 34 |
| 4 | Վասն ապահովութեան վիճակախաղական դրամատոմսից ի տիրաժէ . . | 31 | 20 |
| 5 | Ռոճիկ պահապանի Կարապետի Մերկուլեանց . . . . . . | 24 | » |
| | Տարեկան ծախք | 1847 | 42 |
| | Առ 1 Յունուարի 1907 ամի մնացեալ են դրամատոմսք . . . . . | 8650 | » |
| | և պատրաստի դրամք . | 217 | 28 |
| | Ընդհանուր գումար | 10714 | 70 |

Զծախս հանեալ ի մուից յընթացս 1906 ամի, հոգաբարձութիւնս արդիւնաւորեալ է զարկղն Որբոց և Այրեաց 761 ր. 48 կ.։ Ըստ այսմ առ 1 Յունուարի 1907 ամի մնան դրամատոմսք 8650 ր. և պատրաստի դրամք 217 ր. 28 կ. որք պահպանին ընդ տեսչութեամբ գանձապահի հոգաբարձութեանս։

Անդամք Հոգաբարձութեան՝ Գանձապահ Խաչատուր Քհնյ. Կոտոյեանց.
Գալուստ Քահանայ Բարսաղեան.
Սարգիս Քահանայ Ասլանեանց.

# Ս. Էջմիածնի տպարանում լոյս են տեսել եւ վաճառւում են

| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| 1. | Ժամագիրք միջադիր (կազմած) | 2 | — |
| 2. | Ժամագիրք գրպանի (կազմած) | 1 | 50 |
| 3. | Մեղուաբուծութիւն Գ. Ղազարեան | — | 50 |
| 4. | Դաւիթ Հարքացի. Գ. Տ. Մկրտչեան | — | 50 |
| 5. | Ֆարրարի Քրիստոնէական արշալոյսին թարգմանեց Մխիթար վարդ. | 2 | 50 |
| 6. | Հայկականք Գ. Տ. Մկրտչեան | — | 50 |
| 7. | Աստուծուն թէ՞ Մամոնային. թարգ. Մամբրէ վարդ. | — | 3 |
| 8. | Հայերը Ռուսաստանում. Մխիթար վարդ. | — | 80 |
| 9. | Հոգեբանութեան հիմնական գաղափարների մասին. խմբագրութեամբ Ս. Տիգրանեանի | — | 40 |
| 10. | Մարդուս շա՞տ հող է հարկաւոր թարգ. Վրթանէս քհ. Մարգարեան | — | 5 |
| 11. | Հազար ու մի խաղ. Կոմիտաս վ. և Մ. Աբեղեան Ա. յիսնեակ | — | 15 |
| 12. | Նոյնը Բ. յիսնեակ | — | 20 |
| 13. | Ի՞նչ է ճշմարտութիւնը. թարգ. Մամբրէ վարդ. | — | 10 |
| 14. | Բարի սերմեր թարգմ. Մամբրէ վարդ. | — | 10 |
| 15. | Էջմիածնի ծոցի օրացոյց 1907 թուականի | — | 20 |
| 16. | Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դադեան | 2 | — |
| 17. | Գելցեր. պատմութիւն Բիւզանդական կայսրների թարգ. Մեսրոպ վարդապետ | 1 | — |
| 18. | Խոսրովիկ Թարգմանիչ և երկասիրութիւնք, Գարեգին վարդ. Յովսէփեան | 1 | 20 |
| 19. | Հայոց Նոր Վկաներ, Մանանդեան և Աճառեան, գիտական | 3 | — |
| 20. | Նոյնը ժողովրդական Ա. հատոր | — | 50 |
| 21. | » » Բ. հատոր | — | 50 |
| 22. | Համառօտ տեսութիւն Հայրապետական Աթոռի մասին. Յուսիկ եպիս. Տ. Մարգարեան | — | 30 |
| 23. | Ջէմս բրայս. Կրօնը և եկեղեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներում. Թ. Ե. Ծ. վ. Մ. | — | 25 |
| 24. | Տոլստոյի երկերի ժողովածուի առաջի գիրքը՝ Կրէյցերի Սոնատը, Կրէյցերի Սոնատի վերջաբանը, Կանանց և Սէր Ե. Ծ. վ. Մ. | — | 60 |

# ԱՐԱՐԱՏ


**Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ**

**ԱՄՍԱԳԻՐ**

**1907**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է** { Ռուսաստանում 4 ր.
Արտասահմանում 5 ր.


*Խնդրում ենք Արժ. Գործակալներին յայտնել այն բաժանորդների միշտ հասցէները՝ հոգեւորական թէ աշխարհական, որոնք կարող են իրենք անմիջապէս կամ մի ուրիշի անունով ծրարներ ստանալ փոստից։ Բոլոր այդպիսիներին «Արարատ»-ը կուղարկուի առանձին ծրարներով եւ առհասարակ նորա ցրումը կանոնաւորելու համար ամեն հոգ կտարուի։*


**Հասցէն՝** Св. Эчміадзинъ, Типографическому Комитету

**Արտասահմանի համար՝** Rédaction de la Revue „Ararat“.
Etchmiadzine (Caucase)


---